



ԶՄԻԱԾԻՆ

1978
Ա



ԼԵ
ՏԱՐԻ

ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

ՅԻՆԿԱՐ

1978



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

Վեհափառ էի սրբազնագինն Կաթողիկոսն
Ամենայն Հայոց



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈՁ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌԻ ԵՎ
ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ

(1978 թ. հունվարի 6)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Գոհութիւն բարչաց պարգևատու մեր Աստծուն, որ մեզ բոլորիս արժանացնում է մի անգամ ևս ողջունելու Նոր տարին, մեծ ավետիսովը Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի հրաշալի Ծննդյան: Հազար և ինը հարյուր յոթանասունութերորդ տարեդարձն է Նագովրեցի Հիսուսի աշխարհ գալուն:

Անցել են ահա մոտ երկու հազար տարիներ, սակայն ողջ մարդկությունը չի մոռացել այն երանելի օրը, երբ երկինքը բացվել էր աշխարհին, համայն մարդկության բարի լուրը տալու, թե ծնվում է «Արեգակն արդարութեան» և «Իշխանը խաղաղութեան» Իր հետ բերելով պատգամը Աստուծո՝ «Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն», դարերի երազանքը բոլոր ազգերի, բոլոր սերունդների: Այդ եղավ դարերի երազանքը նաև արդարության ծարավի մեր ժողովրդի, որ խոշտանգված մարմնով հազիվ փրկված, անցնող դաժան դարերի հրից և սրից, ահա ավելի քան կես դարից ի վեր իր վերածնունդն է ապրում իր մայր հողի, բայց և սփյուռքի տարածքի վրա: Հայրենի հարատև վերաշինության և ծաղկման պայծառ իրականությունը, մեր օրերի խաղաղ ու ապահով պայմաններում, գերագույն մխիթարությունն է հայ ժողովրդի, և միակ գրավականը ապագայի նորանոր նվաճումների ու արդար սպասումների կենսագործումի:

Ահա թե ինչո՞ւ այս նոր տարվո լուսաբացին, ծնկաչոք աղոթում ենք մարդացած Աստվածորդու մտքի առաջ և հայցում մարդկության Փրկչից՝ «Տուր աշխարհիս խաղաղություն, ազգիս հայոց սէր, միություն»:

Հայցում ենք նաև, որ Տերը Իր կենարար հովանին տաքածյալ պահի մեր Մայր եկեղեցու՝ Հայաստանյայց առաքելական եկեղեցու և համայն մեր ազգի անխտիր բոլոր զավակների վրա, զորացնելով նրանց հավատն ու հույսը և պտղառատ դարձնելով նրանց առաքինի գործերը, հառավել շինություն և պայծառություն մեր հոգևոր, մշակութային ու ազգային կյանքի, մեր օրերին և գալիք ժամանակներին:

Անցնող տարին խաղաղ ու շինարար առաջընթացի տարի եղավ մեր մայր հայրենիքի համար, առավել ամրացումովը նրա տնտեսական ու արդյունաբերական հիմքերի, առավել զարգացումովը գիտական ու կրթական գործնական, առավել ճառագայթումովը ազգային մշակույթի նորաստեղծ արժեքների:

Անցնող տարին խաղաղ ու շինարար առաջընթացի տարի եղավ նաև Մայր Աթոռիս համար: Ի մասնավորի ջերմ ուրախություն պատճառեց Մեզ, ս. Էջմիածին պատմական այցելությունը՝ անկիթբան բույր եկեղեցու պետ՝ տոքթ. Ֆրեստերիք Տոնալտ Գոկան՝ Քենթրալբրիի արքեպիսկոպոսի, որով ավելի խորացան մեր երկու եկեղեցիների միջև վաղուց ի վեր սկիզբ առած՝ ի Քրիստոս սիրո և եղբայրության հարաբերությունները: Քենթրալբրիի արքեպիսկոպոսը մեր ժողովրդին ու անձամբ Մեզ հոգեկան մեծ մխիթարություն պատճառեց, մեզ հետ աղոթելով հալ նահատակաց հոգիների համար, իր հեղինակավոր խոսքը ասելով 1915-ի հայոց ցեղասպանության ողբերգության նկատմամբ:

Անցյալ մայիս ամսին, մեր եկեղեցու կյանքում խոստումնային իրադարձություն հանդիսացավ նաև Մեծի Տանն Կիլիկիո Ս. Տ. Գարեգին Բ արքունակից-կաթողիկոսի ընտրությունը, որին մասնակցեցին Մայր Աթոռիս երկու ներկայացուցիչները: Այս առթիվ, Մեր և Տանն Կիլիկիո Գահակալների միջև փոխանակված նամակները և տրված հավաստիացումները հույս են ներշնչում Մեզ, որ մոտ ապագայում հնարավոր կդառնա խաղաղ վերացնել այն տագնապի իրավիճակը, որն ստեղծվել էր սփյուռքի մեր եկեղեցական կյանքում 1956 թվականից սկսյալ: Մեկ ու անբաժան եկեղեցի ու ժողովուրդ լինելու մեր ազգային հիմնական ու տեախան շահերի գիշակցությունը, թելադրում են բոլորիս վերահաստատել մեր նվիրապետական Աթոռների միջև օրինական կարգն ու կանոնը և համերաշխ գործակցության պայմանները: Մայր Աթոռս, ինչպես միշտ ու տեապես, այսօր էլ լավատեսությամբ սպասում է Կիլիկյան Աթոռի գործնական միջոցառումներին:

Այս նոր տարվո սեմին, հոգեկան զոհունակությունը ունենք մեր հովատացյալ ժողովրդին հայտնի դարձնելու նաև, թե անցնող երկու տարիների ընթացքում Մայր Աթոռիս նախաձեռնությամբ ու հովանավորությամբ կազմակերպված լիբանանահայ կարոտյալների և վարժարանների օգնության գործը իր ավարտին հասավ, շուրջ չորս հարյուր քսան հազար տոլարի արդյունքով, որը բաշխվեց նախատեսված ծրագրի համաձայն, Մեր հրավերով Պեյրոթում կազմված «Օգնության Հանձնախմբի» միջոցավ, օրինակելի բարեխղճությամբ ու անաչառությամբ:

Սիրելի հավատացյալներ,

Նոր սկիզբ առնող 1978 տարին, ազգային-եկեղեցական բացառիկ նշանակություն ունեցող տարի է լինելու, որովհետև մեր եկեղեցին ու ժողովուր-

դը ոգեկոչելու են անմոռաց հիշատակն ու վաստակը երկու մեծ Հայրապետների՝ երջանակահիշատակ Ներսես Կաթողիկոս Աշտարակեցու և Հովհաննես պատրիարք Կոլոտի, որոնք մեծագործ նախակարապետները եղան հայ ժողովրդի հոգևոր, կրթական և ազգային վերածնունդի: Ներսես Աշտարակեցու պայծառ հիշատակը պիտի ոգեկոչենք Արևելյան Հայաստանի ազատագրման և Ռուսաստանին միացման հարյուր և հիսունամյա տարեդարձի առթիվ: Մի պատմական իրադարձություն, որ ճակատագրական դեր կատարեց հայոց պատմության մեջ, ճանապարհը բաց անելով հայ ազգի եկեղեցական, մշակութային, հասարակական, այլև քաղաքական զարթոնքի և հետագա հայ ազատագրական շարժման:

Այդ փոթորկալից ժամանակաշրջանում, նախախնամական դեր կատարեց Աշտարակեցի մեծագործ Հայրապետը, և ինքը ևս բախտորոշ գործոն հզոր ուժ հանդիսացավ իբրև՝ Արևելահայաստանի ազգային հիմքերը ամրացնող հայահավաք առաքյալ, իբրև եռանդուն բարեկարգիչ եկեղեցու և Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի, իբրև լուսամիտ ու անհոգնաբեկ կազմակերպիչ հայոց ազգային դպրության ու մշակութային նոր կյանքի: Բավական է հիշել, թե նա եղավ հոգևոր հայրը և ներշնչող ոգին՝ նոր ժամանակների լուսավորիչ Խաչատուր Աբովյանի:

Երջանիկ զուգադիպությամբ, գրեթե նույն այդ դարաշրջանում, վեց-յոթ տասնամյակներ ավելի վաղ, տարբեր պայմաններում, նման նախախնամական դեր կատարեց Կ. Պոլսի պատրիարք Հովհաննես Կոլոտ Հայրապետը արևմտահայության ծոցում, որի ծննդյան երեքհարյուրամյակը պետք է նշեն մեր եկեղեցին ու ժողովուրդը նույնպես 1978-ին:

Հովհաննես Կոլոտ և Ներսես Աշտարակեցի մեր Մայր եկեղեցու Հայրապետները, տասնևութորոշ դարում և տասնևիններորդ դարի արշալույսին, հանդիսացան եկեղեցու այն երկու սյուները, հայաշունչ ու հայրենաշեն արիացյալ Հայրապետները, որոնք լուսավորեցին հայոց մթագնած երկնակամարը և հայ ժողովրդին առաջնորդեցին դեպի ինքնաճանաչում, դեպի ինքնակազմակերպում և վերածնունդ՝ հոգևոր-եկեղեցական, կրթական, մշակութային ու ազգային քաղաքական իմաստով:

Հայաստանյայց Մայր եկեղեցու այս երկու լուսավոր դեմքերը հանդիսանում են՝ առաջինը արևմտահայության, և երկրորդը արևելահայության հոգևոր ու ազգային զարթոնքը սկզբնավորող ռահվիրաները, որոնց նվիրական գործը փալլուն կերպով շարունակեցին ապա նրանց աշակերտները և հաջորդող սերունդները հայոց մայր հողի վրա, թե՛ արևելյան և թե՛ արևմտյան հողամասերում:

Եվ որովհետև վերջերս արժանավայել կերպով նշվեց ծննդյան երեքհարյուրամյակը Մխիթար Սեբաստացի աբբահոր, անկ է չմոռանալ թե նույն այդ պատմաշրջանում, թեև հեռավոր օտար հողի վրա, սակայն նույն հայաշունչ ոգով նա և իր միաբանությունը իրենց նպաստը բերեցին հայ ժողովրդի վերածնունդի զարգացմանը, իրենց գիտական, գրական և կրթական վաստակով:

Սիրեցյալ ժողովուրդ մեր հարազատ, այս հույզերով ու այս սպասումներով շնորհավորում ենք բոլորիդ Նոր տարին և աղոթում, որ լուսաշող շնորհները Փրկչի սուրբ Ծննդյան, բաշխվեն ամենքիդ առատապես, ի շինություն ձեր հոգևոր բարոյական կյանքի: Երկնառաք այդ շնորհներով թող լույս ու խաղաղություն իջնեն ձեր սրտերում, ձեր ընտանեկան հարկերից ներս, ձեր եկեղեցական ու ազգային կյանքում:

Եվ մանավանդ աշխարհը համայն, բոլ մի անգամ ևս լցվի Միածին Փրկչի խաղաղարար օրհնությամբ, և մարդիկ ու ազգություններ բոլ ողջունեն միմյանց բարի կամեցողությամբ, իբրև զավակները միևնույն Երկնային Հօր, իբրև միատեղ բնակվող եղբայրներ, որոնք ապրում են միևնույն հարկի տակ որ մեր երկրագունդն է, որոնք ապրում են միևնույն մարդկային ճակատագրով, որոնք մեռնում են միևնույն՝ հոգիների փրկության հույսով:

«Զի ո՛չ առաքեաց Աստուած զՈրդի իւր աշխարհ՝ թէ դատեսցի զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ նովա» (Յովհ. Գ. 17):

Արդ, ցնծացեր և ուրախ եղեր՝ զի Փրկիչն աշխարհի Բրիստոս՝ ծնավ և հայտնեցավ:

Սուրբ Էջմիածնից և Մեր հայրական սրտից բոլորիդ՝ որ ի Հայաստան և ի ափյուռս աշխարհի, բոլորիդ անխտիր բյուր օրհնություն և խաղաղություն: Ամեն:



Քույր Եկեղեցիներ



ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱԾԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ԲՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ
ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոռմեական կաթողիկ եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻՆ (Հոռմ),

Կոստանդնուպոլսի հունաց տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),

Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա),

Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հունաց ուղղափառ եկեղեցու
Պատրիարք, Նորին Սրբություն ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ-ԻՆ
(Ալեքսանդրիա),

Երուսաղեմի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Ա-ԻՆ (Երուսաղեմ),

Ղպտի ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԵՆՈՒԴԱ Գ-ԻՆ (Ալեքսանդրիա),

Անտիոքի և համայն Արևելքի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն ԷԼԻԱՍ Դ-ԻՆ (Դամասկոս),

Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲՈՒՆԱ ՏԵԿԼԵ ՀԱՅՄԱՆՈՏԻՆ (Ադիս-Աբեբա),

- Հնդկաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու կաթողիկոս, Նորին
Սրբություն **ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա - ԻՆ**
(Քոթայամ),
- Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱՅԻՆ (Թբիլիսի),
- Ռումին օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԺՈՒՍՏԻՆՆՆ (Բուխարեստ),
- Բուլղար օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),
- Անտիոքի և համայն Արևելքի հույն կաթողիկ եկեղեցու Պատրիարք, Նորին
Սրբություն **ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ** (Կաֆասկա),
- Անտիոքի ասորի կաթողիկ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵԿ Բ - ԻՆ (Բեյրութ),
- Քենթրբերիի արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և
միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
ՅՐԵԴԵՐԻԿ ԳՈՆԱԼԳ ԿՈԳԱՆԻՆ (Լոնդոն),
- Աթենքի և համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
ՍԵՐԱՅԻՄԻՆ (Աթենք),
- Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ՀԵՐՄԱՆՆ (Բելգրադ),
- Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
ՎԱՍԻԼԻՆ (Վարշավա),
- Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին
Գերաշնորհություն **ԳՈՐՈՅԵՆՆ** (Պրագա),
- Հայ կաթողիկե եկեղեցու Պատրիարք, Նորին Ամենապատվություն
ՀՄԱՅԱԿ - ՊԵՏՐՈՍ ԿԵՏԻԿՅԱՆՆ (Բեյրութ),
- Կիպրոսի արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍԻՆ (Նիկոզիա),
- Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար
դոկտ. **ՅԻԼԻՊ ՓՈԹԸՐԻՆ** (Ժնև),
- Վատիկանի պետական քարտուղար, Նորին Ամենապատվություն
կարդինալ **ԺԱՆ ՎԻԼԼՈՅԻՆ** (Վատիկան),
- Վիեննայի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
կարդինալ **ՅՐԱՆՅԿՅՈՆԻԳԻՆ** (Վիեննա),
- Փարիզի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
կարդինալ **ՅՐԱՆՍՈՒԱ ՄԱՐՏԻՆ** (Փարիզ),
- Լիոնի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
ԱԼԵՔՍԱՆԳՐ ՌԸՆԱՐԻՆ (Լիոն),
- Քրիստոնեական միության քարտուղարության նախագահ, Նորին
Ամենապատվություն կարդինալ **ԺԱՆ ՎԻԼԲԵՐՆԳՄԻՆ** (Վատիկան),
- Մարսելի արքեպիսկոպոս, Գերաշնորհ
ՌՈԺԵ ԷՋԵԳԱՐԱՅԻՆ (Մարսել),
- Լատվիական ՍՍՀ ավետարանական-լուսերական եկեղեցու արքեպիսկոպոս,
Նորին Գերազանցություն **Յ. Պ. ՄԱՏՈՒԼԻՍԻՆ** (Ռիգա),
- Էստոնական ՍՍՀ ավետարանական-լուսերական եկեղեցու արքեպիսկոպոս,
Նորին Գերազանցություն **ԱԼՅՐԵԳ ՏՈՒՄԻՆԳԻՆ** (Տալլին),
- Միջին Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ,
Վերապատվելի **ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆՆ** (Բեյրութ),

Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ

ՄԱՌԻՐԻԼԻՈՍԱԿԿԻՆ (Երուսաղեմ),
Խաղաղության համաքրիստոնեական 'կոնֆերանսի գլխավոր քարտուղար
դոկտ. ԿԱՐՈԼԻՏՈԹԻՆ (Պրագա),
Իրաքի պապական նվիրակ, Գերաշնորհ

ԺԱՆ ՌՅՈՒՊԻՆ (Բաղդադ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր
ՊՈՂՈՍ վարդապետ ԱՆԱՆՅԱՆԻՆ (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր
ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա),
Վերապատվելի ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԵԼՎԱԾՅԱՆԻՆ (Մարսել),
Վերապատվելի ՎԱՀԱՆ Հ. ԹՈՒԹԻԿՅԱՆԻՆ (Նյու Յորք),

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Մայր Աթոռ ս. Էջմիածնից, երջանիկ ենք վերստին բերելու Ձեզ քաղցր ավետիսը աշխարհի Փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի սուրբ Ծննդյան, Մեր սրտից բխած ամենաբարի մաղթանքներով՝ ուղղյալ Ձեզ, Ձեր եկեղեցու հոգևոր սպասավորներին և համայն ձեր հավատացյալ ժողովրդին:

Սուրբ Ծննդյան լույսերով և շնորհներով թող մի անգամ ևս լցվեն բոլոր աղոթքի Տները և հոգիները բոլոր մարդկանց՝ հառավել խաղաղություն և պայծառացում մարդկային կյանքի:

Այսօր, Քրիստոսի սուրբ Ծնունդով համայն մարդկությանը բաշխվող սիրո և խաղաղության երկնային պատգամը թող առավել ոգեշնչի աշխարհը մարդկային, և մոր տարին առավել թող ամրապնդի բարի կամեցողության և խաղաղ գործակցության հարաբերությունները պետությանց ու ժողովուրդների միջև:

Ի սրտե մաղթում ենք Ձեզ քաջառողջություն՝ երկար արևոտ տարիներով, որպեսզի փայլուն հաջողություններով շարունակեք Ձեր սուրբ առաքելությունը ձեր աստվածասեր ժողովրդի կյանքում և մեր օրերի աշխարհում:

Եղբայրական հարգալից սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

•
•

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Ամանորի և Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան շնորհավորական գրություններին ի պատասխան ստացվել են բույր եկեղեցիների հոգևոր պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների՝ այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական եղբայրության ու համագործակցության սրտագին ոգին բույր եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ
ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈՂՈՐ
ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Մայր Աթոռ սուրբ Էջմիածնից Նոր տարվա այս լուսարացին, երջանիկ ենք վերստին Ձեզ բերելու քաղցր ավետիսը աշխարհի Փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի սուրբ Ծննդյան, Մեր սրտից բխած ամենաբարի մաղթանքներով հանդերձ ուղղյալ Ձեզ և համայն հավատացյալ Մեր զավակներին:

Սուրբ Ծննդյան լույսերով և շնորհներով, թող մի անգամ ևս լցվեն ձեր աղոթքի Տները և հոգիները բոլոր հալ հավատացյալների, հառավել շինություն և պայծառացում մեր ազգի հոգևոր ու մշակութային կյանքի:

Այսօր, համայն մարդկությանը բաշխվող սիրո և խաղաղության երկնային պատգամը, թող առավել ոգեշնչի աշխարհը մարդկային և նոր տարին թող առավել ամրապնդի բարի կամեցողության ու խաղաղ գործակցության հարաբերությունները պետությանց և ժողովուրդների միջև:

Ի սրտե մաղթում ենք Ձեզ տոկուն առողջություն երկար արևոտ տարիներով ու հոգեշեն փայլուն իրագործումներով ի փառս մեր սուրբ եկեղեցու: Եղբայրական սիրով ի Փրկիչն մեր Քրիստոս Հիսուս՝

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

*
* *

Ամանորի և սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և մամակներ մեր մկիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրհորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:



քաջատողջության և անապատ կորովի՝ շարունակելու համար Ձեր հայրենակների փայլուն գործունեությունը լի նորանոր հաջողություններով:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին

*
* *

ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵՎԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
ՄԵԾԱՐԳՈՒ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՍՐԱԹՅԱՆԻՆ

Երևան

Հանուն հայ եկեղեցու և հավատացյալ մեր ժողովրդի շնորհավորում ենք Ձեզ Ամանորի ուրախ առիթով և մաղթում Ձեզ քաջատողջ երկար կյանք ու արդյունավետ գործունեություն մեր վերածնված մայր հայրենիքի վերելքի ու ծաղկման ճանապարհին:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին

*
* *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա.-ԻՆ

Ա. Էջմիածին

Նոր տարվա առթիվ ինձ հղած Ձեր շնորհավորանքների համար հայտնում եմ իմ անկեղծ շնորհակալությունը:

Սրտանց շնորհավորում եմ Ձեր Նոր տարին՝ մաղթելով Ձեզ քաջատողջություն:

Ցանկանում եմ, որ 1978 թվականը լինի սովետական հայրենիքի և ժողովուրդների բարեկամության բարգավաճման, խաղաղության և խաղաղ համագործակցության տարի:

Բ. ՍԱՐԿԻՍՈՎ

ՀՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Երևան

*
* *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա.-ԻՆ

Ա. Էջմիածին

Ամանորի առիթով ընդունեցեք մեր սրտաբուխ շնորհավորանքները:

Թող 1978 տարին բարգավաճում բերի մեր հայրենիքին և Ձեզ համար լինի քաջատողջության և բեղմնավոր գործունեության արգասավոր տարի՝

ի շահ ժողովուրդների բարեկամության և խաղաղության ամրոջ աշխարհում:

Ֆ. Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան

•
•

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Նոր տարվա առթիվ ընդունեցեք մեր սրտանց և ջերմ շնորհավորանքները: Ցանկանում ենք Ձեզ քաջաոգոջություն, երկար տարիների կյանք, հաջողություններ Ձեր ազգային և հայրենասիրական գործունեության մեջ:

Թող 1978 թվականը լինի սովետական հայրենիքի հետագա բարգավաճման, ամրոջ աշխարհի ժողովուրդների խաղաղության և բարեկամության տարի:

Ա. ՀԱՍՐԱԹՅԱՆ

ՀԱՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԵՆԹԵՐ

ՀԱՅ ԷԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱ

Երևան





ԱՄԱՆՈՐՅԱ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ

Ժամանակը և իր խորհուրդը, ահա Նոր տարվա կամ Ամանորի թելադրանքը մեզանից յուրաքանչյուրին:

Նոր տարին որպես ժամանակի մի հատված, մի հանգրվան է հանդիսանում, որ մարդը կանգնում և հաշիվ է տալիս ինքն իրեն: Այդ պահը կյանքի այն հատվածն է, երբ մարդը հետադարձ մի հալացք է գցում իր անցած ուղու և իր կատարած գործունեության վրա, բարի ու չար արարքների վրա:

Այս տարի ևս, ավանդություն դարձած Նոր տարվա տոնակատարությունը Մայր Աթոռում կատարվում է հանդիսավորությամբ:

Դեկտեմբերի 31-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 20-ին, Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանության, ներքին թեմերի առաջնորդների ուղեկցությամբ, առաջնորդվում է միաբանական սեղանատուն, որ հոգևոր ճեմարանի դասախոսներն ու ուսանողությունը և Գերագույն հոգևոր խորհրդի անդամները ծափողջույններով դիմավորում են Նորին Սրբությանը:

Միաբանական սեղանատան տոնածառի գույնզգույն լույսերի շողարձակումներով ակնապարար տեսարան էր ստեղծվում:

Սեղանատան կամարների տակ մի պահ լուրջում է տիրում, և ապա հնչում է տիրական ու հայրաձայն շեշտով Վեհափառ Հայրապետի արտասանած «Հայր մեր»-ը և «Ծաշակեսցոք»-ը:

Հոգևոր ճեմարանի երգչախումբը զվարթ ու հանդիսավոր հնչեցնում է ճեմարանի քայլերգը՝ երաժշտության դասախոս և ՀՍՍՀ վաստակավոր արտիստ Խորեն Մելիանեջյանի ղեկավարությամբ:

Բացման և Նոր տարվա շնորհավորական խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարությանը, որը, խոսքն ուղղելով Վեհափառ Հայրապետին, ասում է.

«Վեհափառ Տեր,

Նոր տարվա սեմին ենք այս ժամին. մեզանից յուրաքանչյուրը քիչ հետո մի պահ կանգ է առնելու նայելու համար իր անցած ուղուն, որախանայու կամ տխրելու իր ծրագրերի իրագործման կամ ձախողման փաստի առաջ:

Մեր ժողովուրդն այս տարի ևս խաղաղության պայմաններում հայրենի երկրում և սփյուռքի տարածքի վրա ապրեց իր ստեղծագործական վերելքը: Գիտության, տնտեսության և շինարարության բնագավառներում մեր ժողովուրդը հասավ նորանոր հաջողությունների: Եվ այս փաստը, անտարակույս, մեծապես ուրախացնում է մեզ:

Վեհափառ Տեր, նվիրական այս պահին հոգևոր ճեմարանի տեսչությունն իր հալացքն է նետում անցած մի տարվա վրա: Ուրախանում ենք, որ Ձեր հայրական անմիջական հսկողության տակ ճեմարանի ութ սաներ ավարտել են իրենց ուսումնառության շրջանը և շուտով պաշտպանելու են իրենց դիպլոմային աշխատանքները:

Ուրախ ենք, որ մեր երկու սաները՝ Ստեփան Զաքարյանը և Հովսեփ Մովսիսյանը, դեկտեմբերի 28-ին, ս. Ստեփանոսի տոնի օրը, սարկավագության աստիճան, իսկ Գ. և Բ. դասարանի 11 սաներ էլ դպրության աստիճան ստացան լուսարարապետ տ. Հուսիկ սրբազանի ձեռամբ: Հուսով ենք, որ բոլորն էլ կարդարացնեն մեր ժողովրդի

հույսերը և կոտորածն ենեղեցու համեստ ու նվիրյալ սպասավորներ:

Վեհափառ Տեր, Դուք որպես Գլուխն ու Պետը Հայոց առաքելական եկեղեցու, Ձեր գահակալության 22 տարիների ընթացքում Ձեր կարելին արեցիք Հայաստանյայց եկեղեցու հեղինակությունը համաշխարհային ապարեզի վրա բարձրացնելու: Դուք եղաք մահ խաղաղության մարտիկ և հայ ժողովրդի անունից դատապարտեցիք բոլոր տեսակի գեներերի արտադրությունը և Ձեր ձայնը բարձրացրիք անարդարությունների դեմ:

Դուք դարձաք Էջմիածնի, մայր հայրենիքի և սփյուռքի միջև հաստատված ոսկե կամուրջը և արթուն պահակը: Դուք Ձեր հետ հայրենիքը և Էջմիածինը տարաբաշխարհացրիվ մեր ժողովրդին՝ միփառելու, գոտեպնդելու և խանդավառելու համար: Նաև Ձեր շինարար գործունեությամբ փառքի նոր էջեր ավելացրիք Էջմիածնի պատմության մեջ:

Այս Նոր տարվա հուզիչ, ուրախ առիթով թույլ տվեք, Վեհափառ Տեր, որպես մեր մեծ Ոստուգապետի, շնորհավորել Ձեր Նոր տարին, շնորհավորել Մայր Աթոռ և Էջմիածնի սիրելի միաբանության, դասախոսական կազմի, աշխատավորության, ուսանողության Նոր տարին՝ կրկնելով. կեցցե Հայաստանյայց առաքելական և եկեղեցին, կեցցե Մայր Աթոռ և Էջմիածինը, կեցցե Ամենայն Հայոց Ս. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը, կեցցե և Էջմիածնի հոգևոր ճեմարանը:

Հոգևոր ճեմարանի և դասարանի ուսանող Պետրոս Ասողկյանը արտասանում է Արշալույս Մարգարյանի «Տարեմուտ» բանաստեղծությունը, և ապա ուսանողական երգչախումբը կատարում է Կարո Զաքարյանի «Խնջույքի երգ» և Արամ Խաչատրյանի «Գարուն երևան» երգերը:

Ի դիմաց դասախոսական կազմի ողջույնի և շնորհավորանքի իր ջերմ խոսքն է ասում հոգևոր ճեմարանի հայ ժողովրդի պատմության դասախոս Սիմոն Կրկաշարյանը:

Ուսանողների երգչախմբի կատարմամբ նկնում են Կարա Մուրզայի «Լեփո լե, լե», «Ալագյազ» և «Քեզի մեռնիմ» երգերը:

Բ դասարանի ուսանող Թորոս Մելեքիչյանն արտասանում է Վահան Թեքեյանի «Աղոթք վաղվան սեմի աղջե» ստեղծագործությունը: Այնուհետև Բ խարանի սան Հրաչ Օղյուզյանը անգլերեն լեզվով ընթերցում է «Լուսն բարոզ»-ը Մատթեոսի Ավետարանից: Բ խարանի սան Վահրամ Տերտերյանը, ի դիմաց ուսանողության, որդիական ջերմ և երախտագիտական խոսք է ասում՝

ուղղված Վեհափառ Հորը և դասախոսական կազմին:

«Վեհափառ Տեր,

հերկրապիք ու մանդիսավոր այս երեկոյին հավաքվել ենք պատմական այս սուրբ հարկի կամարների տակ՝ դիմավորելու համար Նոր տարին:

Խանդավառ այս մթնոլորտում ցնծում են մեր սրտերը, և այս տոնածառից սփռվող հազարագույն շողերը արտացոլում են մեր հոգիների նոր իղձերն ու ձգտումները:

Տոնն է այսօր մարդկության: Խորհրդավոր այս ժամին թող զանգերը դողանցեն խաղաղության բաղք մեղեդին, թող դողանցեն, թող դողանցեն մարդկանց սրտերում երջանիկ հուշակումն ավետող խաղաղության զանգերը:

Խաղաղության Իշխանը՝ Քրիստոս, դարձե՛ր առաջ՝ իր աստվածային սիրո քարձուկներից, որպես տիեզերական օրենք և կյանքի սկզբունք, որպես առաջնորդող լույս, ատելության ու թշնամանքի կործանարար քափիղներում մոլորված մարդկությանը տվեց իր երկնաուր պատգամը փրկարար. «Եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: Եվ սակայն այսօր, դարեր հետո, քաղում ավերիչ պատերազմների և տատապանքների բույից անցած մարդկությունը, ավա՜ղ, ավելի քան երբևէ, տոչորվում է խաղաղության ճարավով:

Տագնապի ու անստուգության մատնված միլիոնավոր մարդիկ այսօր կարիք ունեն խաղաղության՝ հանապազօրյա հացի ու ջրի նման: Ահա թե ինչու մեր Փրկչի աստվածային պատգամն այնպես բաղք է հրկնյուն, այնպես արձագանքում մեր սրտերում տարեմուտի այս տոնական գիշերը: Թող նոր տարին, ուրեմն, լինի աշխարհում խաղաղության նվաճման և վերջնական հաստատման տարի համար մարդկության քաբօրության և երջանկության համար:

Վեհափառ Տեր, թող 1978 տարին Ձեզ համար լինի օրհնաբեր ու բեղմնավոր տարի, առողջության, հաջողության և երջանկության տարի:

Մեր սրտաբուխ մաղթանքներն ուղղված են մահ ձեզ բոլորիդ, սիրելի ներկաներ, թող Աստված պարգևի ձեզ երջանկություն, առողջություն և նորաճող հաջողություններ կյանքում և աշխատանքում:

Վեհափառ Տեր, Մայր Աթոռ և Էջմիածնի հոգևոր ճեմարանի ուսանողության անունից թույլ տվեք շնորհավորել Ձեզ Նոր տարվա առիթով, համարել Ձեր սուրբ Աջը՝ ստանալու համար Ձեր հայրական օրհնությունները:

Շնորհավոր Նոր տարի»:

Արտակարգ հետաքրքրություն և աշխու-

ծություն է տիրում Ամանորի սեղանի շուրջ, երբ Բ յարանի սան Խաչիկ Խարազյանն ընթերցում է կադանդեք-սրախոսությունները:

Հանդիսությունն այնուհետև շարունակվում է ավելի բարձր տրամադրությամբ: Արտասանվում են Սերգեյ Եսենինի (ռուսերեն) «Ո՛ր Աստվածամայր» (Վարդգես Լևկազյան՝ Ա յարան) և Սիլվա Կապուտիկյանի «Եվ հավատում ենք» (Ստեփան Կարապետյան՝ Գ դասարան) բանաստեղծությունները: Երգվում են հարսանեկան երգաշարից՝ «Թագվոր բարով» և «Առնեն երթամ» խմբերգերը: «Զվարթնոց» միակախումբը Կիրակոս սարկավազի դեկլամարությամբ կատարում է «Հոյ մազան իմ յարը», «Իմ չիմարի յարը», «Ինչպես կանչեմ քեզի հիմա» և «Լուռ գիշեր, սուրբ գիշեր» երգերը:

Այս խանդավառ երգերին հաջորդում է մի քանի րոպե սպասողական և դադարի դրություն, երբ բաժանվում են վիճակահանության տոմսակները:

Վիճակահանությունից հետո Վեհափառ Հայրապետն Իր օրհնության խոսքն է ասում բոլոր ներկաներին ու շնորհավորում նրանց Նոր տարին:

«Հայր մեր» միաձայն երգված աղոթքով և Հայոց Հայրապետի արտասանած «Պահպանիչ»-ով ավարտվում է հանդիսությունը: Ժամը 12-ին հնչում են Մայր տաճարի զանգերը: Հոգևոր ճեմարանի ուսանողները Մայր տաճարում աղոթքով ու շարականով դիմավորում են նոր տարին:

ԱՄՍՆՈՐՅԱ Ս. ՊՍՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ

Հունվարի 1-ին, կիրակի.—Առավոտյան ժամը 10.30-ին Մայր տաճարում Ամանորյա ս. պատարագ է մատուցում Ծիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպս. Ծաբարյանը:

Ս. պատարագին ներկա է լինում նաև Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի, Իջման ս. Սեդանի առաջ, քարոզ է խոսում պատարագիչ սրբազան հայրը՝ «Տեսչիք» որպես ճշմարտի գնացք, մի իբրեւ անիմաստք, այլ իբրեւ իմաստունք. գնեցեք զժամանակս (Եփես. Ե 15) քնաքանով:

Այնուհետև Մայր տաճարում, Իջման ս. Սեդանի առջև, հանդիսավորությամբ կատարվում է Հայրապետական մաղթանք:

Հայրապետական մաղթանքի ավարտին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափոքով առաջնորդվում է Վեհարանի ընդունելության սրահ, ուր ընդունում է Մայր Ա-

թոռի միաբանության Ամանորի շնորհավորանքները:

Ի դիմաց միաբանության, Հայոց Հայրապետի Նոր տարին շնորհավորում է Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրյանը:

Վերջում Վեհափառ Հայրապետը ջերմագին շնորհավորում է Մայր Աթոռի միաբանության Նոր տարին և Իր հայրական օրհնություններն ու պատգամները ջամբում բոլորին:

Հանդիսության ավարտին միաբանությունը աջահամբույրով Վեհափառ Հայրապետից ստանում է 1978 թվականի Մայր Աթոռի մեկական օրացույց:

Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՐՈՒՄ

Հունվարի 5-ին, հինգշաբթի.—Ծրագայոց Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր Մայր տաճարում, ժամը 17-ին, սկսվում է երեկոյան հանդիսավոր ժամերգություն: Եկեղեցական թափոքով Մայր տաճար է առաջնորդվում Վեհափառ Հայրապետը: Մայր տաճարը լեցուն է հավատավոր ժողովրդով:

Օրվա տոնին համապատասխան կարդացվում են ս. Գրոց հատվածներ: Չորս ուրարակիրներ Ավագ խորանից ընթերցում են Դանիել մարգարեի «Երից մանկանց» օրհներգությունը:

Ապա սկսվում է Ծրագայոյցի ս. պատարագը: Պատարագում է տ. Մովսիկ վրդ. Սարգսյանը:

Ս. պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի է ունենում ս. Ծննդյան նախատոնակի կարգը:

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ» ու «Խորհուրդ մեծ և սքանչելի...» շարականները ավետում են հավատացյալներին Քրիստոսի ս. Ծնունդը:

Երեկոյան ժամը 20.30-ին Ղազարապետի միաբանական սեղանատանը տրվում է ճաշկերույթ, որին մասնակցում են Մայր Աթոռի միաբանությունը և հոգևոր ճեմարանի ուսանողությունը: Օրվա տոնի առթիվ օրհնվում են Մայր Աթոռի աղն ու հացը, և ներկաները վայելում են Ծննդյան ավանդական նավակատիքը:

Ս. ԾՆՆԴՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊՍՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ

Հունվարի 6-ին, ուրբաթ.—Տօն Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.



Այս տարի ևս Մայր Աթոռի միաբանությունը, խոտենեամ հավատացյալների մասնակցությամբ, տոնաց մեր Տիրոջ և Մենկյան և Աստվածահայտնության տոնը:

Օրվա մեծ տոնի ուրախ առիթով Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արսեն եպս. Բերբերյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված Գերագույն հոգևոր խորհրդի, Մայր Աթոռին առընթեր իրավաբանական հանձնաժողովի անդամներով, մայրավանքի պաշտոնեական ներկայացուցիչներով և հոգևոր ճեմարանի դասախոսներով:

Զանգերի ուրախ դողանքների հետ հնչում է նաև հավատավորներին ավետարներ «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ» երգ-աղոթքը:

Մայր տաճարը լիքն է աղոթավոր հավատացյալներով: Ս. պատարագի երգեցողությունը կատարում է Մայր տաճարի երգչախումբը՝ Խորեն Մելիսանեջյանի ղեկավարությամբ: Ս. պատարագի երգերի որոշ հատվածների մենակատարումներով հանդես են գալիս ճանաչված և սիրված երգչուհիներ Գոհար Գասարյանը, Լուսինե Զաքարյանը և Նորա Մելքումյանը:

«Հայր մեր»-ից անաչ, ս. Մենկյան և Աստվածահայտնության տոնի առթիվ, շնորհավորելով հայ ժողովրդի մեծ տոնը, քարոզում է Վեհափառ Հայրապետը (Նշված քարոզը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 3):

Հայոց Հայրապետի՝ Մենկյան քարոզը հունվարի 7-ին, երեկոյան ժամը 23-

ին, ձայնաւորում է երևանի ոսպնիկայանից:

Ս. պատարագի ավարտին Ավագ խորանի վրա պատարագիչ սրբազան հայրը կատարում է Զորահնչաց հանդիսավոր կարգը՝ ոգեկոչելով հիշատակը ս. Հովհաննես Մկրտչի ձեռքով Հորդանան գետում Քրիստոսի մկրտության:

Հավարտ եկեղեցական արարողության Վեհափառ Հայրապետը հանդիսավորությամբ առաջնորդվում է Վեհարան, ուր բնդունում է քաղում շնորհավորանքներ ս. Մենկյան տոնի առիթով:

• •


Ժամը 15-ին Վեհափառ Հայրապետը Վեհարանի սեղանատանը քարենհանում է Խրեն սեղանակից դարձնել, ս. Մենկյան տոնի առիթով, Գերագույն հոգևոր խորհրդի, Մայր Աթոռին առընթեր իրավաբանական հանձնաժողովի, Մայր Աթոռի միաբանության անդամներին, ինչպես նաև մայրավանքի պատասխանատու աշխատողների և այլ հյուրերի:

Ս. Մենկյան ճաշատեղանին ներկա էր նաև ՀՍՍՀ Միևիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասարթյանը:

Ընդունելությունն ավարտվում է Վեհափառ Հայրապետի գոհարանական մաղթանքով:

ԱՆԱՍՏԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄՈՎՍԻՍՅԱՆ





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՈՒՆԵՐ

Հունվարի 1-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում մատուցվում է Նոր տարվա առաջին ա. պատարագը: Պատարագում է տ. Նարեկ եպս. Ծաբարյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ա. պատարագի Մայր տաճարի իջման սեղանի առջև քարոզում է պատարագիչ սրբազանը՝ «Տեսչիք՝ որպես ճշմարտի գնացեք, մի իբրեւ անիմաստք, այլ իբրեւ իմաստունք. գնեցեք զժամանակս» (Եփես. Ե 15) բնաբանով, և ապա, հանուն Մայր Աթոռի միաբանության, աջահամբույրով շնորհավորում է Վեհափառ Հայրապետի Նոր տարին, որից հետո կատարվում է Հայրապետական մաղթանք:

Կեսօրից հետո, ժամը 14-ին, Վեհափառ Հայրապետի կողմից Վեհաբանի սեղանատանը տրվում է տոնական ճաշկերույթ:

Հունվարի 7-ին, շաբաթ.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում տ. Նշան քին. Բելլերյանը: Հավարտ ա. պատարագի կատարվում է հոգե-

հանգստյան պաշտոն վասն համայն ննջեցելոց հոգիների խաղաղության և փրկության:

..

Հունվարի 8-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում պատարագում է տ. Անանիա վրդ. Արաբաջյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Ամենեցուն ժամանակ է, եւ ժամ ամենայն իրաց ի ներքոյ երկնից: Ժամանակ ծնանելոյ եւ ժամանակ մեռանելոյ... ժամանակ լալոյ և ժամանակ ծիծաղելոյ... ժամանակ ցրելոյ քարինս և ժամանակ ծողովելոյ քարինս» (Ժող. Գ 1—8) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

..

Հունվարի 15-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում և քարոզում ուխտավորաբար Մայր աթոռում գտնվող Բաղդատի հոգևոր հովիվ տ. Օջական քին. Գրլըջյանը:

Ա. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

• •

Հունվարի 16-ին, երկուշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհափառ Հայրապետի մախազանությամբ գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

• •

Հունվարի 22-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մովսիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Տէր ողորդա զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան» քննարկումով:

Ա. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

• •

Հունվարի 24-ին, երեքշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Մայր Աթոռ այցելեց հյուրաբար Հայաստանում գտնվող ֆրանսիացի բժիշկ և պատմաբան, 1977 թ. Փարիզում ֆրանսերեն լեզվով լույս տեսած «Հայերը. մի ցեղասպանության պատմություն» գրքի հեղինակ Իվ Թերնոնը՝ իր տիկնոջ հետ:

Հարգարժան հյուրերին ողջունեց և բարի գալուստ մաղթեց Մայր Աթոռի դիվանապետ և Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ տ. Արսեն եպ. Բերքերյանը:

Այնուհետև հյուրերը ծանոթացան Մայր Աթոռի շրջափակին, այցելեցին Մայր տաճար, եկեղեցական արվեստի թանգարան: Նրանց ամփոփ կերպով ծանոթացրին հայ եկեղեցու պատմության, հոգևոր-մշակու-

թային կյանքի հետ: Հյուրերն այցելեցին նաև Վեհաբանի ցուցասրահները և հիացմունքով ու մեծ հուզումով դիտեցին հայոց ոսկեգիր այբուբենը:

Ժամը 12-ին մեծարգո հյուրերին քարեհաճեց ընդունել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը: Հայոց Հայրապետի և հյուրերի միջև տեղի ունեցավ ջերմ ու սրբապահ զրույց, որին ներկա եղավ նաև Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարզն Շահբազյանը:

• •

Հունվարի 25-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետը, ողնկցությամբ Մայր տաճարի լուսարարապետ և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ տ. Հուսիկ եպ. Սանթրոյանի, Մայր Աթոռի միաբան տ. Մովսիկ վրդ. Սարգսյանի և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիսյանի, մեկնեց հովիվապետական այցելության Խրաթի հանրապետություն:


Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին և Նրա շրախմբի անդամներին ճանապարհեցին Մայր Աթոռի միաբանները:

Հայոց Հայրապետին ճանապարհելու էր եկել նաև ՀՍՍՀ Միհիստրների խորհրդին ատրնեներ հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պարոն Անդրանիկ Հասարայանը:

• •

Հունվարի 29-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Ամանիա վրդ. Արարաջյանը:





ՀԱՅ-ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷԶԵՐԻՑ*

Բեռլինի Վեհաժողովից (1878 թ.) անցել էին տասը տարիներ, բայց և հայ ժողովրդի հույսերը Մեծն Բրիտանիայից օգնություն ստանալու՝ չէին չքացել:

Լոնդոնում գործող «Հայ հայրենասիրական ընկերակցության» նախագահ Կարապետ Հակոբյանի ստորագրությամբ բազմաթիվ նամակագրություններ են տեղի ունեցել նրա և Քենթրբերիի արքեպիսկոպոսի միջև, նամակագրություններ, որոնց ամբողջական հրապարակումը մեծապես օգտակար կլինի հայ-անգլիական հարաբերությունների պատմությամբ զբաղվողների համար:

Սույն ընկերակցությունը բազմաթիվ թերթիկներ է հրատարակել, հանրային հանդիպումներ է կազմակերպել և քարոզչական մեծ գործ ծավալել «Հայկական հարցի» բարվոք լուծման ակնկալությամբ:

1888 թվականին Կարապետ Հակոբյանի՝ Քենթրբերիի արքեպիսկոպոսի քարտուղարին գրած մի նամակից պարզվում է, որ ընկերակցության հրատարակած թերթիկները տպագրվելուց առաջ Քենթրբերիի արքեպիսկոպոսի հավանությանն են ենթարկվում: Սույն նամակում Հակոբյանը բացատրում է, թե անհրաժեշտ են գտնում ավելացնել հետևյալ նախադասությունը.


«Արդյոք Մեծն Բրիտանիան դեռ երկար ժամանակ լռությո՞ւն պիտի պահի» (նամակ № 1):

Խիստ շահեկան են նաև «Հայ քրիստոնյաների պաշտպանության կոմիտեի» հրատարակած թերթիկները: Այդ կոմիտեի նախագահն է եղել ժամանակի անգլիական պառլամենտի անդամ Ալբերտ Սփալսերը:

1893 թ. հունիս 14 թվակիր մի թերթիկից իմանում ենք Լոնդոնի Էկզետեր դահլիճում հանրային մի ցույցի կազմակերպման մասին՝ ի պաշտ-

* Ծարուհաված «Էջմիածին» ամսագրի 1977 թվականի № ԺԲ-ից:

պանություն Թուրքիայում ձերբակալված և բանտարկված Ֆոնուզի և Ջեյթունի արքեպիսկոպոսների, Սմբատ Բյուրառտի, որոնց նամակը, գրված Հայեպի Կենտրոնական բանտից, հրատարակել ենք «Էջմիածին» ամսագրի նախորդ համարում (Էջ 28): Թերթիկում ստվում է. «Այս ճիգերը հաջող կերպով ապահովել են ազատումը Մ. Թումայանի և Քեյսյանի (երկուսն էլ բողոքական քարոզիչներ Ջեյթունում), թեև դեռևս կան ուրիշներ, որոնք խնդրում են մեր օգնությունը» (նամակ № 2):



Լոնդոնում ազգային բողոքի միտինգի հրավեր Հայաստանում քրիստոնյաների չարչարանքների և կոտորածների մասին

Նման մի թերթիկ նույնպես կոչ է անում մասնակցել Լոնդոնի ս. Մեյմս սրահում կազմակերպված միտինգին հետևյալ լուղուցով. «Ազգային բողոք ընդդեմ Հայաստանի քրիստոնյաների չարչարանքի և կոտորածի»:

Սույն հանրային միտինգը կազմակերպել է Անգլո-հայկական ընկերակցությունը՝ նախագահության ներքո Արկելի Դուքսի, բողոքելու համար այն հալածանքների դեմ, որոնք շարունակվում են Թրքահայաստանում, և պարտադրելու, որ շուտափույթ իրագործվի Բեռլինի համաձայնագրի 61-րդ հոդվածը և անգլո-թրքական 1878-ի համաձայնությունը (թերթոն № 3):

Պատմական արժեք են ներկայացնում նաև 1904-ի Ամենայն Հայոց

կաթողիկոս Խրիմյան Հայրիկի Լոնդոն ուղարկած եկեղեցական պատվիրակության թղթակցությունը Քենթրբերիի արքեպիսկոպոսի հետ:

6 օգոստոս 1904 թվակիր նամակում Ամերիկայի հայոց առաջնորդ տ. Լուսինի Սարաճյանը և Պարսկա-Հնդկաստանի հայոց առաջնորդ տ. Սա-

Sympathies with the intolerable
sufferings of a Christian
Church which holds so
much in common with
your own

We should be profoundly
indebted to Your Grace if
Your Grace would consent
to receive us, and appoint
an hour when we may
wait upon you

Your Grace's Brethren
in Christ

H. Sarajian
Archbishop of the Armenian
Church -

J. Ayradian
Archbishop of the Armenian
Perso-Indian

To

His Grace

The Archbishop of Canterbury

Խրիմյան Հայրիկի կողմից ԱՄՆ-ի հայոց առաջնորդ տ. Լուսինի արքեպիսկոպոս Սարաճյանի և Պարսկա-Հնդկաստանի հայոց առաջնորդ տ. Սահակ արքեպիսկոպոս Այվառյանի նամակը Քենթրբերիի արքեպիսկոպոսին՝ իրենց պատգամավորության մասին

հավ Այվառյան արքեպիսկոպոսները, իբրև պատվիրակներ Ամենայն Հայոց կաթողիկոսի, գրավոր դիմում են կատարում Քենթրբերիի արքեպիսկոպոսին և հայտնում, որ իրենք եկել են Լոնդոն Քենթրբերիի արքեպիս-

կոպուսին ներկայացնելու Թուրքիայի կառավարության հայահալած քաղաքականությանն ընդ փաստեր, մանավանդ նույն տարվա գալմաճը Սասունի հայկական կոտորածների մասին (նամակ № 4):

Ամենայն Հայոց կաթողիկոսի պատվիրակները Լոնդոնում ունեին մի այլ կարևոր հանձնարարություն, այն է՝ անձամբ խրիմյան Հայրիկի նամակի հանձնումը Անգլիայի Էդվարդ 7-րդ թագավորին:

Փարիզից Քենթրբերիի արքեպիսկոպոսին դոկտ. Հակոբ Լորիս-Մելիքովի 1904 թ. դեկտեմբերի 6-ին գրած նամակից հայտնի է դառնում, որ Անգլիայի թագավորը ընդունում է Ամենայն Հայոց կաթողիկոսի պատվիրակներին դեկտեմբերի շուրջ 10-ին (նամակ № 5):

Խրիմյան Հայրիկի նամակի հայերեն բնագիրը չկարողացանք ձեռք բերել: Մեր ձեռքում ունենալով նամակի անգլերեն թարգմանությունը, այն կրկին թարգմանել ենք հայերենի: Ստորև ներկայացնում ենք այդ խիստ պատմական և կարևոր նամակը (նամակ № 6):

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՆԱՄԱԿԸ ԱՆԳԼԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐԻՆ

ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՈՐԻՆ ԾՆՈՐՀԱԶԱՐԴ
ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ԷԴՎԱՐԴ 7-ՐԴ ԱՐՔԱՎՈՐԻՆ

Տեք, կայսր Հնդկաստանի,

Հայաստանյայց եկեղեցին քրիստոնեությունն ընդունեց արևելյան մյուս ժողովուրդներից առաջ, և դարեր շարունակ նրա թագավորներն ու կաթողիկոսները պատերազմ էին մղում մահմեդականության և կրակապաշտության դեմ:

Իր անկախությունը կորցնելուց հետո մեր ժողովուրդն առաջինը հանդիսացավ, որ իր առևտրով բացեց դռները դեպի Հեռավոր Արևելք, որ տառածվում էին Հնդկաստանից մինչև Ամստերդամ:

Այսօր մեր ժողովուրդը մնում է հավատարիմ իր հավատքին, հավատարիմ՝ գերիշխան ազգերին: Նրանք ջանացին խաղաղորեն առաջադիմել գիտության, արվեստների, արհեստների, գյուղատնտեսության և առևտրի մեջ, ինչպես նաև հանրային պաշտոններում, երբ նրանց վրա իշխողները այդ նրանց վատահեցին:

Եվ այսօր, 20-րդ դարի առաջադիմության և ազատության շեմին, հուսահատության մեջ գտնվող մեր ժողովուրդը ներկայացնում է իր խոնարհ դիմումը Ձերդ Վեհափառության իր դժբախտ Հովվապետի տկար ձայնով, աղերսելով Ձերդ Վեհափառության հզոր միջամտությունը հանուն Թուրքիայում հայկական նահանգների ճնշված բնակչության:

Ձերդ Վեհափառության կառավարությունը գիտի, որ Բեռլինի Վեհա-ժողովում հայ ժողովուրդը բողոքի իր ձայնը բարձրացրեց իրեն ճնշողների՝ քրդերի, թուրքերի և չերքեզների դեմ:

Այս ձայնը լսվեց 1878 թ. Եվրոպայի պետությունների առաջ, այն ժամանակ, երբ ես արքեպիսկոպոս էի և նախկին պատրիարքը Կոստանդնուպոլսի: Ես ուղարկվեցի Վեհաժողովին և առաջինը եղա բողոքելու Օսմանյան իշխանության դեմ՝ մոտիկից իմանալով նրա ճնշման, հարստահարության և բռնաբարության արարքները:

Գնացի Եվրոպա, այցելեցի Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Ավստրիա

և Խաչիա, մինչ իմ գործակից Խորեն արքեպիսկոպոս Նարայելը գնաց Ռուսաստան, որտեղ դեռ իշխում էր ազատարար Ալեքսանդր Բ կայսրը: Վեհաժողովը ճիշտ գտավ մեր պահանջները և հաստատեց Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը:

Թող հաճելի լինի Ձերոյ Վեհափառությանը, որ ես չեմ կարող թաքցնել այս իրողությունների ճշմարտությունը: Վերջին քառորդ դարի ընթացքում մեր խաղաղ հայերի վիճակն ավելի վատթարացել է բարելավվելու փոխարեն և ավելի ծանրացել՝ առավել բազմացող տուրքերով, բազմաթիվ բանտարկություններով, սոսկալի չարչարանքներով, արստով և անող արտագաղթով:

Իմ ժողովուրդը պակասել և սպառվել է կրկնվող և ընդհանուր կոտորածներով, բռնի կրոնափոխությամբ և սխառեմատիկ կերպով գործադրվող բարբարոսությամբ:

Երեխաներ և երիտասարդներ չեն խնայված, անհամար երիտասարդ աղջիկների անմեղությունը բռնաբարված է, բախանաներ մորթված են, մինչ երկիրը կարմրած է տարեց մարդկանց թափված արյունով, բազմաթիվ պատկանելի հոգևորականներ չարչարված են, մի անմեղ ժողովրդի խնայողություններն ու սեփականությունը թալանված են: Նրա կյանքի և գործունեության ավյունը չորացած է և նրա ներկա կենսունակությունը գրեթե կմախքի է վերածված:

Վատթարագույնն այն է, որ ազատ թողնված պաշտոնյաները, զինվորները, քրդերն ու չերքեզները չեն գոհանում իրենց կատարած կոտորածներով, որոնք սկսվեցին 1895 թ. և տևեցին մինչև 1896 թ.: Նույն տեսակի անոնի չարդեր են կատարվել նաև Սասունում ու Մուշում և դրանք սպառնում են աստիճանաբար տարածվել հայկական բոլոր նահանգներում:

Որպես պետք Ընդհանրական, Առաքելական Հայ եկեղեցու և որպես Հոգևոր Հայրն աշխարհապիտո հայ ժողովրդի, բաժանելով իմ զավակների երջանկությունն և նրանց տառապանքներն ու մարտիրոսությունը և գիտեցնելով, որ իմ ժողովրդի վիճակը Թուրքիայում անուսանելի է և, ճշգրիտ կերպով ու ճշմարտացիորեն բացատրելուց հետո կացության տխուր իրականությունը, կրած իմ 85 տարիների ծանրության տակ, խոնարհաբար աղերսում եմ Ձերոյ Վեհափառությանը, որ գերագույն ազնվությունն ունենաք բարձրացնելու մարդասիրական Անգլիայի ամենագոր պաշտպանության ձայնը՝ ապահովելու համար բարեկեցությունը տառապող և անմեղ իմ ժողովրդի, որ ներկայիս ծանրորեն ճնշված է մանմեղական լծի տակ:

Ես չեմ ցանկանում ձեռք բերել ո՛չ Արշակունիների կորած թագը և ո՛չ էլ Բագրատունիների արքայական մականը, բայց ամենայն խոնարհությամբ խնդրել թեթևացումը տուրքերի բեռան, որ ծանրորեն ճնշում է կողոպտված ժողովրդին, առևտրականների և ալյուր ազատ շրջագայությունն երկրի ներսում և դրսում, գաղթականների վերադարձը, վերամատուցումը կողոպտված սեփականության, բանտարկյալների ներումը, անարդարությունների դեմ բողոքելու իրավունքը, վայրենի քրդերի, չերքեզների և մահմեդական մոլեռանդների դեմ անձնական պաշտպանության իրավունքը, և վերջապես, որ քրիստոնյա պետություններն անեն նոր կարգադրություններ իրենց հրակողության ներքո:

Որպեսզի այս խոնարհ դիմումը հասնի Ձերոյ Վեհափառությանը, ես ընտրել եմ արժանավոր երկու հոգևորականներ՝ Սարաճյան Սրբազանը և Այվաթյան Սրբազանը, Ամերիկայի և Պարսկա-Հնդկաստանի հայ արքե-

պիսկոպոսները: Մեծապես հույս ունեմ, Ձերդ շնորհաշատ Վեհափառություն, որ իմ աղոթքը պատասխան կգտնի Ձերդ Վեհափառության մարդասիրական զգացումին մեջ և, շնորհիվ Ձերդ Վեհափառության հզոր կառավարության միջամտության, իմ տառապյալ ժողովուրդը կգտնի մի քիչ խաղաղություն և ապահովություն:

(Ստորագրություն)

(ՄԿՐՏԻՉ Ա. ԽՐԻՄՅԱՆ)

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին

(Դիմումի հավանական թվականը)

1904 թ.

Դեկտեմբեր 21-ի նամակով դոկտ. Հ. Լորիս-Մելիքովը Քեհթրքերիի արքեպիսկոպոսին ուղղած նամակում հայտնում է, թե ինքը ստացել է Քեհթրքերիի արքեպիսկոպոսի քաջազրական նոր նամակը Լոնդոնից հայ պատվիրակության մեկնումի երեկոյին և մեծ հույսեր է կապում Անգլիայի հետ, որը վստահորեն առանձին չի թողնելու իր քրիստոնյա հայ եղբայրներին և դրանով պատվիրակության առաքելությունը համարում է հաջող ավարտված:

Նամակում մեջ է բերում Քեհթրքերիի արքեպիսկոպոսի նամակից հետևյալ հատվածը.

«Մեծն Անգլիացի ժողովուրդը, առաջնորդված իր եկեղեցու պետի բարի կամեցողության օրհնակով և կարծիքով, պիտի պահի հարատև իր հրկողությունը մարտիրոս իր եղբայրների վիճակի վրա» (նամակ № 7):

**Ա. ԷԶՄԻԱԾՆԻ ՍԻՆՈՂԻ ՆԱԽԱԳԱՀ Տ. ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
(ԲԱՔԱՄՅԱՆՑ) ՆԱՄԱԿԸ ՔԵՆԹՐԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ
(1884 թ. 21 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ)**

**ՄԿՐՏԻՉ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹՅԱՄԲ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԵՎ ՆԱԽԱԳԱՀ ԷԶՄԻԱԾՆԻ Ա. ՍԻՆՈՂԻ.**

Նորին Գերաշնորհության արքեպիսկոպոսին Քեհթրքերիի, առաջնորդին և միտրոպոլիտին համայն Անգլիո, հույժ սիրեցյալ Մեր եղբորը.

Աստուծո շնորհն ու խաղաղությունը ընդ Ձեզ.

Եղբայրական սիրո նամակը, որ պրն. Աթելստան Ռիլելը նոր հանձնեց Մեզ, մեծ գոհումակություն պատճառեց Մեզ, հատկապես նրա այն մասը, որ անգլիկան եկեղեցու համակրանքն է արտահայտում հանդեպ մեր եկեղեցուն: Նկատի ունենալով այս, ցանկանում ենք վստահեցնել Ձերդ Գերաշնորհությանը, որ Մենք ևս Մեր կարգին համակված ենք նույն զգացումներով դեպի այն եկեղեցուն, որ Դուք ղեկավարում եք աստվածային նախախնամությամբ:

Այդ նամակից Մենք ուրախացել ենք առավել ևս տեղեկանալով Ձերդ Գերաշնորհության բարի մտադրությունների մասին մեր խելոճ ժողովրդի վերաբերյալ, որ անպաշտպան է և ոչ ոք ունի իր մասին հոգացող, և որ Ձերդ Գերաշնորհությունն այնքան ցանկանում է ստանձնել նրանց հովանավորությունը և հոգալ նրանց կարիքները՝ այսպիսի հեռավոր երկիր ուղարկելով մի ներկայացուցիչ, որը նրանց մատուցելու է այն օգնությունը, որին կարիքն ունեն:

Քող բարին Աստված Իր շնորհների զանձարանից վարձատրե Ձեզ ապեհտական և հերոսական այն նվիրման համար, որ Դուք ցուցաբերում էք այս խեղճ քրիստոնյաների դատը պաշտպանելով, որոնք տառապում են անհավատի ծանր լծի տակ:

Եզրափակում ենք սույն նամակը բարի կամեցողության Մեր եղբայրական արտահայտությամբ առ Ձերդ Գերաշնորհությունը՝ աղոթելով, որ աստվածային օրհնությունը միշտ լինի Ձերդ Գերաշնորհության և այն հոտի վրա, որ հանձնվել է Ձեր առաջնորդությանը:

Ձերդ Սրբության սիրեցյալ եղբայրը և նվիրյալ
բարեկամն ի Քրիստոս մեր Տեր Աստվածը,
Սուրբ Սինոդի նախագահ՝

Մկրտիչ Արքեպիսկոպոս
(Ստորագրություն)

№ 59

Էջմիածին

21 սեպտեմբերի 1884 թ.

ԱՐՍԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵՐԵՆԵՐՅԱՆ





ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱԾՆՉԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ*

85. Փիլիպպոս «Մարկավագ»

Փիլիպպոս երկրորդն է այն յոթնյակին, որ ընտրվեցավ հասարակաց սեղանին ապաստվորելու: Ստեփանոսի մահեն հետո «մեծ հալածում» մը շղթայագերծվեցավ Երուսաղեմի մեջ, ընդդեմ քրիստոնեից, «և ամենքն ալ ցրվեցան Հրեաստանի և Սամարիո գյուղերը բացի առաքյալներեն»: Այս «ցրվյալներուն» մեջ էր նաև Ստեփանոսի ընկերը և պաշտոնակիցը Փիլիպպոս, որ Սամարիա գնաց և սկսավ հոն քարոզել (Գործ. Ը 4—40): Փիլիպպոս քարոզչական գործունեության միացուցած էր նաև հրաշագործության շնորհը, այնպես որ շատեք հավատացին, դարձի եկան ու մկրտվեցան, և այսպես ազատագրվեցան կախարդանքեն Սիմոն անուն մոգի մը, որ իր ազդեցության տակ առած էր Սամարիո բնակչությունը: Միմյն իսկ ի վերջո Սիմոն մոգ ևս հավատաց ու մկրտվեցավ:

Երբ Երուսաղեմի մեջ առաքյալները լսեցին որ Սամարացիք դարձի եկած են, անոնց ղրկեցին Պետրոսը և Հովհաննեսը,

որոնք աղոթեցին և «ձեռք դրին անոնց վրա», ու մկրտյալները ստացան նաև ս. Հոգի:

Սիմոն մոգ տեսնելով, որ առաքյալներու ձեռք դնելովը մարդիկ ս. Հոգի կստանան, դրամ առաջարկեց անոնց խնդրելով որ այդ իշխանությունը իրեն ալ տան: Սաստիկ զայրացավ Պետրոս և ըսավ. «Կորսվե ասկե. որովհետև Աստուծո պարգևները դրամով չեն գնվիր» (Գործ. Ը 20):

Աստուծո հրեշտակին թելադրությամբ Փիլիպպոս իջավ դեպի հարավ, Գազայի կողմերը, ուր հանդիպեցավ Եթովպիո թագուհիին «Հզոր Անրքինիին», որ Երուսաղեմ ուխտի եկած՝ կվերադառնար իր երկիրը:

Փիլիպպոս մոտեցավ Անրքինիի կառքին և տեսավ որ ան ս. Գիրք կկարդար և հարցուց.

—Կհասկնա՞ս արդյոք կարդացածդ:

—Ինչպես կրնամ հասկնալ, ըսավ Անրքինի, եթե մեկը չբացատրե ինձի: Ու խնդրեց որ իր կառքը ելլե և նստի իր մոտ: Կարդացածը Եսայի մարգարեի հետևյալ հատվածն էր.

* Ծարուհակված «Էջմիածին» ամսագրի 1977 թվականի № 15 է—ԺԱ-ից:

«Ոչխարի պես սպաննվելու առաջնորդվեցավ».

Ինչպես գաղտնիք անմոռնի կմնա իր խու-
զիչին առջև,
Այնպես ալ ինք բերանը չի բանար:
Իր խոնարհության համար ոչ որ արդարու-
թյուն ըրավ անոր.
Ով պիտի պատմե անոր գալիքը.
Քանզի անոր կյանքը կվերնա երկրեն»
(Ես. ԾԳ 7—8):

— Կաղաչեմ, ըսավ ներքինին, որո՞ւն հա-
մար կըն մարգարեն այս խոսքերը. իրե՞ն
համար, թե ուրիշի մը համար:

Ու Փիլիպպոս այս համարեն ճամբա ել-
նելով սկսավ ավետարանել անոր Հիսուս
Քրիստոսի մասին: Երբ այսպես խոսելով
կերթային, հանդիպեցան ջուրի մը, և ներ-
քինին ըսավ.

— Ահալիսիկ ջուր, ի՞նչ բան կարգիլն
գիս մկրտվել:

— Եթե կհավատաս քոյոր սրտով կրնաս
մկրտվիլ, ըսավ Փիլիպպոս:

— Կհավատամ թե Հիսուս Քրիստոս Աս-
տուծո Որդին է, ըսավ ներքինին: Ու հրա-
մայեց կեցնել կառքը, իջան երկուքն ալ
կառքեն, ու Փիլիպպոս մկրտեց զայն: Ներ-
քինին շարունակեց իր ճամբան «ուրախու-
թյամբ»:

Իսկ Փիլիպպոս իր քարոզական գործը
առաջ տարավ նույն շրջանի ծովեզերքա
քաղաքները մինչև Պաղեստինյան Կեսա-
րիա, ուր հաստատվեցավ վերջնականա-
պես: Երբ Պողոս առաքյալ վերջին անգամ
Երուսաղեմ կվերադառնար իր առաքելա-
կան շրջագայութենեն, իջևանեցավ անոր
տունը, և այդ առթիվ կնիշվի թե Փիլիպպոս
ունեւ «չորս կույս աղջիկներ, որոնք մար-
գարեական շնորհով օծուված էին» (Գործ.
ԽԱ 8):

Փիլիպպոս սարկավագի կամ «Ավետա-
րանիչի» վախճանի մասին գրեթե ոչինչ
գիտենք:

Կոռնենք զայն Խաչի հինգերորդ կիրա-
կին հաջորդող երեքշաբթի օրը, այլ Նոր
Ստակարանի սրբոց հետ:

Հուլյնք՝ հուլիս. 11: Լատինք՝ հուն. 6:

36. Կոռնելիոս հարյուրապետ

Առաջին հեթանոսը որ քրիստոնյա ե-
ղավ: Թեև ասկե առաջ տեսանք Դուկիա-
նոս հարյուրապետը, որ հավատաց Խաչե-
ւորթյան ընթացքին, բայց անոր մրկտված
ըլլալը և այլ պարագաները չեն ներկայաց-
ված Նոր Կտակարանին մեջ. իր մասին
մեր գիտցածը ավանդութենեն է: Տեսանք
հաս Եթովպիո թագուհիին ներքինին, որ
թեև «Եթովպացի» ըսված է, բայց այդ
պատճառ մը չէ, որ չենթադրվի որ ազգով

երես մըն էր, քանի որ Երուսաղեմ եկած
էր «Երկրպագանելու համար» (Գործ. Ը
27): Արտասահմանի հրեաները կկոչվեին
անունով այն երկրին ուր հաստատված էին.
«Լիբեացի, Կիպրացի, Կիլիկեցի» և այլն:

Կոռնելիոս հաստատված էր Պաղեստինը
կառավարող հռոմեացի կուսակալներու
կեդրոն Կեսարիա քաղաքը, մասիկը այս-
օրվան Հայֆա քաղաքին: «Իտալացի» կոչ-
ված գունդին հարյուրապետ մըն էր: Հա-
վանաբար այն քաղաքաւոր հեթանոսներն
էր, որոնք տեսնելով հրեական կրոնի մեջ
գտնված ճշմարտության լույսը, հրաժարած
էին իրենց քնիկ կրոնքեն և աստվածներն
ու կալաւտիէն ճշմարիտ Աստվածը: Կոռնե-
լիոսի մասին ըսված է. «Բարեպաշտ և
երկրորդած մարդ մըն էր ամբողջ տունովը,
ողորմություն կբաշխեր ամենքին ու Աս-
տուծո աղոթք կընէր ամեն ատեն» (Գործ.
Ժ 1—2):

Օր մը Աստուծո հրեշտակը կերևի իրեն ու
կըսե. «Աղոթքդ և քարեզործություններդ
Աստուծո առջև բարձրացան և ընդունելի
եղան. արդ Հուպե մարդ դրկե և կանչել
տուր Պետրոս անունով մարդ մը, որ կըր-
նակի Սիմոն անունով խաղախորդի մը տու-
նը, ծովին մոտիկը»: Այդպես մարդ կորկե
Կոռնելիոս և կանչել կուտա Պետրոս ա-
ռաքյալը, որ իր կարգին նույն օրը տեսիլք
մը ունեցած էր, որուն իմաստը Կոռնելիո-
սեն կանչվելն հետո միայն հասկցավ. այ-
սինքն չքաշվիլ երբեք Ավետարանը քարո-
զելէ հաս հեթանոսներուն, և անհնգմն ալ
նորադարձներ ունենայե: Գործք-ի քա-
ղաքորթյամբ՝ «ոչ որ խառնակ կամ ան-
տուրբ համարեի» ծիսական իմաստով:

Երբ Պետրոս հասավ, Կոռնելիոս արդեն
իր տունը հրավիրած էր «իր ազգատոհմը
և կարևոր քաղկականները» և կապանք ի-
րեն: Այնքան պարզ, հիմնական ու հետա-
քըքրական է Պետրոսի այս առթիվ խոսած
քարոզը, որ կարծես նույնությամբ առաջ բե-
րել:

«Ճշմարտությամբ վերահասու եղած եմ,
որ Աստված խորություն չդնէր մարդոց մեջ,
ալ հոգ չէ թե մարդ մը որ ազգի մեջ ալ
ըլլա, եթե երկրորդած է և արդարություն
կգործե, ընդունելի է Անկե: Աստված իր
խոսքը դրկեց Իսրայելի որդիներուն խա-
ղաղության ավետիսը տալու համար Հիսուս
Քրիստոսի միջոցով, որ Տերն է ամեն քա-
նի: Դուք արդեն լսած պիտի ըլլաք այն
բաներու մասին որոնք պատահեցան Իս-
րայելի մեջ, սկսելով Գալիլիայեն, Հովհան-
նեսի մկրտության քարոզութենեն հետո,
այսինքն Նազարեթի Հիսուսի մասին, գոր
Աստված օծեց իր սուրբ Հոգիովը և գորու-
թյամբը, որ շոշեցավ բարիք գործելով և

բժշկելով բոլոր անոնք որ բռնված էին սատանայեն, որովհետև Աստված Անոր հետ էր: Ու մենք վկա ենք այն ամենում որ ըստով Հրեաստանի և Երուսաղեմի մեջ. ի վերջո սպանեցին զԱյն խաչելով: Սակայն Աստված հարություն տվավ Անոր երրորդ օրը, և արտոնեց որ երևի Ան, ոչ թե ամեն քին, այլ մեզի վկաներուս, զորս Աստված հառաջագույն ընտրած էր, որոնք կերանք ու խմեցինք իրեն հետ հարությունեն հետո: Ու պատվիրեց մեզի քարոզել ամենքին և վկայել, թե նա է Աստուծո՛ւս սահմանված դատավորը ողջերուն և մեռելներուն: Բոլոր մարգարեներ անոր մասին իրենց վկայությունը տված են, թե մեղքի թողություն պիտի ունենան բոլոր անոնք, որ կհավատան Անոր (Գործ. Ժ 34—43):

Երբ Պետրոս կխոսեր «Սուրբ Հոգին իջավ բոլոր խողմերուն վրա»: Հատկապես զարմանքի եկան այն հրեա քրիստոնյաները, որոնք Պետրոսի ընկերացած էին, երբ տեսան որ հեթանոսներուն վրա ալ սուրբ Հոգիի շնորհը իջավ: Այն ատեն Պետրոս նշանակալից ակնարկ մը նետելով իրեն հետևող հրեա քրիստոնյաներուն վրա, ըսավ. «Կրնա՞նք արգելք ըլլալ որ ասոնք չմկրտվին նաև ջուրով, երբ անոնք ալ մեզի պես ս. Հոգին ընդունեցան: Ու հրամայեց որ մկրտեն զանոնք: Տանը երդիքին ներքև հավաքված և հեթանոսներն բաղկացած այս փոքր խումբը եղավ այն փոքրիկ ձյունագնդակը, որ մինչև այսօր կգլորի ու կմեծանա մեր երկրագունդի ամբողջ տարածքին վրա:

Կոռնելիոսի մասին ավանդությունը կրսե որ Սկեփսիոն անունով քաղաք մը գացած ու քարոզած է, այնտեղ թեև չարչարանքներու ենթարկված՝ բայց խաղաղ վախճան մը ունեցած է:

Կոռնելը՝ զայն Հիսնակի Գ. կիրակիին հաջորդող Գշ.ին այլ սուրբերու խումբի մը հետ: Հույնք՝ սեպտ. 13: Լատինք՝ փետր. 2:

Գլուխ չորրորդ

ԳՈՐԾԱԿԻՑՔ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՔ ՊՈՂՈՍԻ

Նոր Կտակարանի սուրբերու այս վերջին բաժնին մեջ կհամադրվին Գործք Առաքելոցի և առաքելական թուղթերու մեջ հիշված այն քրիստոնյա գործիչները, որոնք տոնացույցի անցած են և որոնք գրեթե ամբողջությամբ կապված են Պողոս առաքյալի հետ, իբրև անոր գործակիցները կամ աջակերտները:

87. Անանիա

Մկրտիչը Պողոս առաքյալին Դամասկոսի մեջ:

Սողոս Դամասկոսի ճամբուն վրա ունեցած փառակնային տեսիլքեն հետո, գրեթե կուրացած մտած էր քաղաք: Երեք օր ոչ կերավ ոչ ալ խմեց, այլ աղոթքով ու խոկոմով անցուց: Երրորդ օրն է, որ Աստված կթելադրե Անանիային որ երթա և պետք եղածը խոսի անոր: Երբ և ինչ պարագաներու տակ քրիստոնյա եղած է Անանիա, ոչինչ ըսված է. բնիկ Դամասկոսցի էր թե Հրեաստանեն գացած, այդ ալ հայտնի չէ. իրականությունը այն է, որ Փրկչի համարձույնն քանի մը տարիներ հետո բավական թիվով քրիստոնյաներ գտնված են այնտեղ, որ հալածիչ Սողոս պետք կգա Երուսաղեմեն հետո իր հալածողական գործունեությունը տարածել նաև Դամասկոսի մեջ:

Անանիա գիտնալով հանդերձ, որ Սողոս հալածիչ մըն էր, Աստվածային հրահանգին հնազանդելով գնաց այն տունը ուր կմնար Սողոս: Ձեռքերը դրավ անոր վրա և ըսավ. «Սավուղ եղբայր, Տերը դրկեց զիս, այն Հիսուսը որ երևեցավ քեզի հոս գալուդ՝ ճամբուն վրա, որպեսզի տեսողությունդ վերստանաս և սուրբ Հոգիով լեցվիս»: Երբ Անանիա ձեռքերը դրավ Սողոսի գլուխին՝ «Անոր աչքերեն կեղևի պես բաներ մը թափեցան և իր տեսողությունը վերագտավ ու մկրտվեցավ» (Գործ. Թ 15—19):

Այսչափ է մեր գիտցածը Անանիայի մասին Նոր Կտակարանեն: Հայսմավորքը սակայն կավելցնե, որ իբրև քրիստոնյա ձեռքակալված և դատավորի առջև հանված է, որ ըսավ իրեն. «Կոտենեմ որ պատկառելի և իմաստուն մարդ մը կերևիս, ուստի չարչարանքով պարսպ տեղ դորուստիդ պատճառ մի ըլլար, այլ զոհե մեր աստվածներուն»: Անանիա կպատասխանե. «Չեմ զոհեր և երկրպագություն չեմ ըներ ձեր խոլ, համր և անզգա աստվածներուն, այլ կպաշտեմ Հիսուս Քրիստոսը, իմ ճշմարիտ Աստվածս, որ մեզի գիտության լույս եղավ, զոր տեսանք մեր աչքերով և շոշափեցինք մեր ձեռքերով, և որ զմեզ ազատեց կռապաշտության մոլորությունեն»: Կենթարկվի սաստիկ չարչարանքներու. ի վերջո քարկոծումով կկնքե իր կյանքը:

Մենք՝ Խաչի Ե կիրակիի հաջորդ Գշ.ին: Հույնք՝ հոկտ. 1-ին, լատինք՝ հնր. 25-ին:

88. Բառնաբաս

Քրիստոնեական նախնական եկեղեցիի գլխավոր գործիչներեն է Բառնաբաս, և ե-

դավ Պողոսը իր առաքելական ճամբուն մեջ առաջնորդողը: Ծնած է Կիարոս, քայքայողական բատերապետին վրա կերևի Երուսաղեմի մեջ, ուր ունի եղբայր մը կամ բուր մը և եղբորորդի մը համեմատ Մարկոս Ավետարանիչի: Ինք «Ղևոնացի» էր, այսինքն քահանայական ցեղը: Ուներ ազարակ մը, զոր ծախեց և դրամը բերավ համեմեց առաքյալներուն, օգտագործվելու համար եկեղեցիի հասարակաց պետքերուն:

Իր անունը նախապես Հովսեփի էր, զոր առաքյալները փոխեցին Բառնաբասի, որ կնշանակե «Որդի մխիթարության»: Այս փոփոխությունը կատարվեցավ հավանաբար նկատի ունենալով իր քննադատությունը, որ եղած է անկեղծ, տարուկ, զվարթամիտ ու հաղորդական, ինչպես կերևի իր առաջին գործունեության ընթացքին, որ արձանագրված է Գործք Առաքելոցին մեջ:

Առաքյալներ երբ իմացան որ Անտիոքի մեջ հեթանոսներ ալ դարձի եկած են, իբրև ներկայացուցիչ ղրկեցին Բառնաբասը, որ ստույգ տեղեկություն բերե իրենց այս մասին: «Երբ եկավ Անտիոք, տեսավ Աստուծո շնորհը որ տրված էր նաև հեթանոսներուն, ուրախացավ Բառնաբաս և Կիարոս: Արևմտեքն ալ, որ սրտի հոժարությամբ հավատարիմ մնան Տիրոջ, որովհետև զվարթամիտ մարդ մըն էր, և լեցուն՝ սուրբ Հոգիով և հավատքով» (Գործք ԺԱ 22):

Բառնաբասն էր, որ դարձի եկած Սողոսը ներկայացուց առաքյալներուն, «որոնք կրվախնային անկե—իբրև նախկին հավածիչներ—և չէին կրնար հավատալ թե դարձի եկած էր: Բառնաբաս առավ զայն ու բերավ առաքյալներուն, և պատմեց թե ինչպես Տերը տեսավ և խոսեցավ Անոր հետ. ու Դամասկոսի մեջ ալ համարձակությամբ քարոզեց հանուն Հիսուսի» (Գործք ԺԲ 26—27):

Երբ Պողոս Երուսաղեմեն իր հայրենիքը վերադարձավ, դարձյալ Բառնաբասն է, որ մինչև Տարսուս գնաց և Պողոսը գտնելով Անտիոք բերավ. և ամբողջ տարի մը միասնաբար քարոզական գործունեություն ունեցան Կապարության այդ մեծ քաղաքին—Անտիոքի—մեջ, որ այս առթիվ առաջին անգամ բլլալով Քրիստոսի հետևորդները «ՔՐԻՍՏՈՆՅԱՆ» կոչվեցան (Գործք ԺԱ 25—26):

Քրիստոնեական քարոզության մեջ նոր ուղի մը քայլվեցավ, երբ Անտիոքի գլխավոր մտավորական գործիչները, որոնք ծանոթ են «ՄԱՐԳԱՐԻՆ ԵՎ ՎԱՐԳԱՊԵՏ» տիտղոսներով, և որոնց գլուխն է Բառնաբաս և կրտսերագույնը՝ Սողոս, ս. Հոգիի ներշնչված որոշեցին կազմակերպել քարոզական արշավանքներ դեպի հեռավոր

երկիրներ: Այս պաշտոնը և պարտականությունը հանձնեցին Բառնաբասի և Սողոսի: Վերոհիշյալ խումբի մարդիկը «պանեցողություն և աղոթք ընելե հետո իրենց ձեռքերը դրին անոնց—Բառնաբասի և Սողոսի—վրա և արձակեցին»:

Այսպես սկսավ Պողոս առաքյալի առաջին քարոզական առաքելությունը, ուր գլխավորը և առաջնորդը պաշտոնապես Բառնաբասն է: Անտիոքեն նստեցին Բառնաբասի հայրենիքը՝ Կիարոս, որուն ամբողջ երկայնքին, արևելքեն արևմուտք, քարոզեցին և հասան Պաֆոս, այսօրվան Պաֆոս, որ կղզիի հովվմեացի կառավարիչներուն կեղորոնն էր: Այստեղ ունեցան իրենց մեծագույն հաջողությունը, նախ չեղորացուցին մուրթեցուցիչ և խաբեքա եղիմաս մոզը, զայն կուրության դատապարտելով, և ապա դարձի բերին կղզիի Հովվմեացի Բեղեշի տեղակալը, Սերգիոս Պողոսը. «Դամաստոսն մարդը»: Այս կետեն սկսյալ Սողոս կկոչվի Պողոս, այդ անունը հավանաբար փոխ առնելով Հռովմայեցի կառավարիչին:

Կիարոսեն անցան Փոքր Ասիա, այսօրվան Անթալիո մոտիկ Պերգեի ճամբով: Այս ճամբորդության ընթացքին իրենց հետ է նաև Բառնաբասի եղբորորդին Մարկոս Ավետարանիչը, որ կամ անհանգստանալով և կամ ճամբորդությանը դժվարության չդիմանալով, վերադարձավ Երուսաղեմ: Բառնաբաս ու Պողոս միասին շարունակեցին իրենց քարոզությունը մինչև այսօրվան Գոնիա, ուր կաղ մը բժշկեցին, որուն վրա ապշելով տեղացիները խորհեցան, որ «Աստվածներ մարդկային կերպարանքով իրենց իջած են. Բառնաբասը կկոչեն Դիոս, այսինքն Զևս կամ Արամազդ, հավանաբար իր պատկանելի կերպարանքին համար» (Գործք ԺԴ 11—12): Երջակա քաղաքներ ևս ավետարանելով Անթալիայի վրայով վերադարձան Անտիոք:

Բառնաբաս Պողոսի հետ ներկա եղավ Երուսաղեմի առաքելական ժողովին, ուր գլխավոր խոսողները կամ տեղեկաբերները եղան, հեթանոսներու մեջ իրենց կատարած առաքելական գործունեության և հաջողությանը մասին: Ժողովի որոշումները Անտիոքի եկեղեցին բերողները եղան Բառնաբաս և Պողոս, ժողովի կողմն նշանակված ուրիշ երկու ներկայացուցիչներու հետ, որոնք կկոչվեն Շիլա և Հուդա:

Ժամանակ մը հետո Պողոս առաջարկեց Բառնաբասին երկրորդ քարոզական ճամբորդության մը ելլել: Բառնաբաս փափաքեցավ դարձյալ իրենց հետ առնել իր եղբորորդին Մարկոսը: Պողոս համաձայն չգտնվեցավ, առարկելով, որ ան առաջին

ճամբորդության ատեն՝ գործը կիսատ ձգած և ետ դարձած էր: Այս անհամաձայնության վրա հառնաբաս Մարկոսը առնելով Կիպրոս վերադարձավ: Այս կետին սկսյալ հառնաբաս այլևս չհիշվիր Գործք-ի մեջ: Ավանդությունը կրես որ առաջին եպիսկոպոսը եղած է Կիպրական եկեղեցիին, որ իր առաքելական հանգամանքին վրա հիմնվելով, մինչև օրս ալ ինքնագլուխ կամ անկախ եկեղեցի մըն է: Նահատակված կրնդկաւորի Կիպրոսի Սաղամիմա քաղաքին մեջ: Կհիշատակենք զայն ալ «Առաքյալներու» հետ Խաչի Ե կիր.ի հաջորդ Գ2: Հույնք և լատինք՝ հնա. 11:

39. Ծիղա կամ Սիդվանոս

Մեկ և նույն անձի այս կրկնակ անունները մեր տոնացույցին անցած են իբրև երկու տարբեր անձեր: Նույն շփոթությունը կա նաև հունաց օրացույցին մեջ. բայց մենք բացահայտորեն վստահ ենք, որ այս գույզ անունները մեկ անձի սեփական են. Ծիղա իր եբրայական անունն է, իսկ Սիդվանոսը՝ անոր հունական ձևը:

Ծիղա առաջին անգամ կերևի Գործք Առաքելոցի մեջ, երբ Երուսաղեմի ժողովի կողմէ իբրև ներկայացուցիչ կընտրվի ուրիշ ընկերոջ մը հետ, ժողովի որոշումները Պողոսի և հառնաբասի հետ Անտիոք տանելու համար: Արդարև Անտիոքի մեջ Ծիղա և իր ընկերը «շատ մը խոսքերով մխիթարեցին եղբայրները և սրտալուրջեցին զանոնք»: Ատեն մը մնացին Անտիոք, մյուս ընկերը վերադարձավ Երուսաղեմ, «իսկ Ծիղայի հաճո թվեցավ այնտեղ մնալ»:

Պողոս երբ տեսավ որ հառնաբաս չկորցավ ընկերանալ իր մտադրած երկրորդ ճամբորդության, այն ատեն իր ընտրությունը կայացուց Ծիղայի վրա և միասին ճամբա ելան Անտիոքեն դեպի Հյուսիս. մտան Կիլիկիա, և սկսան քրիստոնեական քիչքներ ստեղծել ամենուրեք իրենց ճամբու ընթացքին: Այցելեցին Պողոս առաքյալի նախապես հիմնած եկեղեցիները Գոնիայի շուրջ: Հառաջացան մինչև Անգարայի կողմերը և ապա արևմուտք դառնալով անցան այսօրվան Էսկիշեհիր և Պիեռիկի վրայով հասան Տրովադա, ուրկե նավ առնելով անցան Եվրոպական ցամաքամաս, Մակեդոնիա, սկսեցին այսօրվան Գավալայեն, որ այն ատեն կկոչվեր Նոր քաղաք (Նեսապոլիս):

Մակեդոնիո Ֆիլիպպե քաղաքին մեջ բանտարկվեցան Ծիղա և Պողոս, բայց ազատվելով բանտեն շարունակեցին իրենց շրջագայությունը ամբողջ Հունաստան հյուսիսեն հարավ, Սեյանիկ, Աթենք և Կորն-

թոս, ուրկե դարձյալ Փոքր Ասիա անցան, Եփեսոս, և անկե նավ առնելով ուղղակի վերադարձան Երուսաղեմ:

Այս ճամբորդության ընթացքին Սեյանիկի մեջ վերջին անգամ կհիշվի Ծիղա (Գործք ԺԷ 4), որմե հետո այլևս իր հետքը կկորսվի: Կհիշատակվի սակայն Պողոս առաքյալի Բ Կորնթացվոց թուղթին մեջ (Ա 19) թե Կորնթոսի մեջ Ավետարանը քարոզված է Պողոսի, Ծիղայի և Տիմոթեոսի կողմէ: Թեսաղոնիկեցիներու գրված Պողոսի երկու թուղթերուն սկիզբը գրված է նաև Ծիղայի անունը, որպես թե երկուքին կողմէ գրված ըլլային: Մինչև իսկ Պետրոսի առաջին թուղթի հետևյալ հատվածեն հետևեցնելով՝ այդ ալ կրնա գրված նկատվիլ Ծիղայի կողմէ, թեղադրվելով անշուշտ առաքյալին կողմէ. «Սեղվանոս հավատարիմ եղբոր ձեռքով, կարծեմ թե փոքր ի շատե գրեցի ձեզի՝ մխիթարելու համար զձեզ...» (Ա Պետր. Ե 12):

Նկատելի պարագա մըն է, որ Գործք Առաքելոցի մեջ ան կհիշվի միշտ իբրև Ծիղա, իսկ առաքելական թուղթերուն մեջ՝ իբրև Սիդվանոս: Իր վախճանի մասին գրեթե ոչինչ գիտենք: Կկարծվի, որ Ֆիլիպպեի առաջին եպիսկոպոսը եղած՝ և այնտեղ վախճանած ըլլա: Մենք կտոնենք Խաչի Ե կիր.ի հաջորդ Գ2. օրը, ուրիշ «Առաքելոց» հետ: Հույնք՝ հյւ. 30: Լատինք՝ հյւ. 13:

Լատին եկեղեցին կհիշատակի զայն Սիլաս անվան տակ:

40. Հովհաննես Մարկոս ավետարանիչ

Մեր տոնացույցին մեջ այս ՀՈՎՀԱՆՆԵՍ և ՄԱՐԿՈՍ անուններն ալ նկատված են երկու տարբեր անձեր և ըստ այնմ անցած են օրացույցի: Կրկնակ անունով ծանոթ այս անձը առաջին անգամ կերևի Գործք Առաքելոցի մեջ, երբ Պետրոս առաքյալ բանտեն ազատվելով ասոնց տունը կուգա. «Եվ Պետրոս... եկավ տունը Մարիամին, մորը Հովհաննեսին, որ կոչվեցավ Մարկոս» (Գործք ԺԲ 12): Ասկե նախ կհետևի, որ ՀՈՎՀԱՆՆԵՍ և ՄԱՐԿՈՍ նույն անձին երկու տարբեր անուններն են, մին եբրայական, մյուսը՝ հուն-հռոմեական: Այս կրկնանությունը կնշմարվի քրիստոնեական եկեղեցիի առաջին գործիչներուն մեծ մասին վրա: Վերոհիշյալ հատվածեն կհետևի նաև թե իր մայրն ալ ծանոթ անձնավորություն մըն էր նորածին եկեղեցիի մեջ, և թե, ինչ որ ավելի կարևոր է, իրենց տունը նախնի քրիստոնեից գլխավոր հավաքավայրերեն մեկն էր, որովհետև վերոհիշյալ

մեջբերումին կհաջորդէ աւ խոսքը. «Որ շատեր հավաքված էին և կաղոթեին»:

Ուրեմն Մարկոս Երուսաղեմացի է, և եղբորորդի Բառնաբաս առաքյալի, ինչպէս կհաստատուի Պողոս առաքյալի Կողոսացւոց թուղթին, ուր ողջուն կըրկէ նաև «Մարկոս, եղբորորդի Բառնաբասի» (Դ 10): Երբ Բառնաբաս ու Պողոս Երուսաղեմ եկան, Անտիոքի հավատացյալներուն նութական նվերը բերելով Երուսաղեմի աղքատ եկեղեցիին, վերադարձին իրենց հետ առին նաև «Հովհաննէսը, որ Մարկոս կոչված էր» (Գործք ԺԲ 25): Ու իրենց առաջին ճամբորդության ընկերացաւ նաև Մարկոս, իբրև «սաշտոնցյա», այսինքն՝ օգնական, սակայն հազիվ Փոքր Ասիա մտած էին, երբ վերադարձաւ Երուսաղեմ, ինչ որ տհաճություն պատճառեց Պողոսի, և այդ պատճառով ալ չուզեց անոր ընկերակցությունը իր երկրորդ ճամբորդության. որուն վրա Բառնաբաս ու Մարկոս վերադարձան Կիպրոս, ուր ամենայն հավանականությամբ շարունակեցին իրենց սկսած ավետարանչական գործը: Պողոսի թուղթերուն մեջ կտեսնենք, որ հաշտված են իրարու հետ: Հռովմի մեջ իր քանտարկության ընթացքին Պողոսին հետ է Մարկոս, ինչպէս վերը տեսանք, որմէ ողջուն կըրկէ Առաքյալը Կողոսայի եկեղեցիին, ուր կըրկվի Մարկոս քարոզչական առաքելությամբ:

Տիմոթեոսի գրած երկրորդ թուղթին մեջ Պողոս կթելադրէ իրեն, որ «Մարկոսը քեզի հետ միասին բերես, որովհետև ինձի անհրաժեշտ օգնական մըն է» (Բ Տիմ. Դ 11):

Մարկոսին անունը անմահացնողը՝ և քրիստոնեական եկեղեցիի մատուցած մնայուն ծառայությունն է իր գրած Ավետարանը: Չորս Ավետարաններու մեջեն թեև համատուտագույնը՝ քայք միաժամանակ հնագույնն է. կկարծվի որ գրած է թելադրանքով և առաջնորդությամբ Պետրոս առաքյալի, որ զինք կկոչէ իր առաջին թուղթին մեջ «Մարկոս՝ որդի իմ» (Ա Պետր. Ե 13): Գրած կհամարվի հեթանոսներու՝ հատկապես Հռովմայեցիներուն համար: Քրիստոսը կներկայացնէ իբրև հզոր անձնավորություն մը խոսքով ու մանավանդ գործքով. իր ոճը պարզ, հստակ և համառոտ է: Կհիշատակենք 4 Ավետարանիչներու հետ, խաչի 2 կիր.ի շք. օրը: Հույնը և լատինը՝ ապր. 25-ին:

41. Դուկաս ավետարանիչ

Այս սքանչելի անձնավորության անունը երկու-երեք անգամ միայն հիշված է ամբողջ Նոր Կտակարանի մեջ, այդ ալ Պողոսի թուղթերու մեջ՝ զանազան ուրիշ ա-

նուններու կարգին: Առաջինը Փիլիմոնի ուղղյալ Պողոսի կարճագույն թուղթին մեջ իբրև իր «գործակիցը» (24-րդ համար) և Կողոսացւոց գրված թուղթին մեջ իբրև «Դուկաս սիրելի բժիշկ» (Դ 14): Այլուր առաքյալը կհաստատուի որ ամեն որ հետացած է իրմէ. «Դուկաս միայն ինձի հետ է» (Բ Տիմ. Դ 10): Այս մեջբերումներն կհետևյալի որ Դուկաս բժիշկ էր արհեստով և Պողոս առաքյալի ամենեն հավատարիմ և անձնըվեր գործակիցներն մեկը: Արդարև Գործք Առաքելոցի ԺԶ գլուխի 11-րդ համարեն սկսյալ դեպքերը կներկայացվին, առաջին դեմքով, ինչ որ կհշահմակէ թե գրողը մասնակից և ներկա է պատահարներուն: Արդ, ծանոթ է որ Գործք Առաքելոցի հեղինակը նույնիսկ Դուկասն է: Ուրեմն կհետևյալի որ Պողոսի երկրորդ ճամբորդության ընթացքին, Տրովադա քաղաքեն սկսյալ, Դուկաս ընկերացած է Պողոս առաքյալի ճամբորդությանը մինչև անոր չորրորդ և մեզի ծանոթ վերջին ճամբորդությունը դեպի Հռովմ: Իր անունեն և այլ զանազան պարագաներեն կհետևյալի որ Դուկաս հրեա մը չէր, այլ՝ հեթանոսությունէն դարձած քրիստոնյա մըն էր:

Դուկասի մեզի ձգած անգին ժառանգությունն է իր անունով ծանոթ Ավետարանը և Գործք Առաքելոցը:

Ծիտակ չենք նկատեր ավետարաններն մեկը մյուսին գերադաս նկատելը: Անոնցմէ յուրաքանչյուրը այնքան կարևոր է որքան մյուսները. մեկը այնքան կատարյալ է որքան մեկալները ու մեկը այնքան անհրաժեշտ է որքան մյուս երեքը: Վերջապես անոնցմէ յուրաքանչյուրը իր ուրույն գեղեցկությունը, ինքնահատուկ համը և հոտը ունի, ինչպէս վարդը և մեխակը, շուշանը և ոսկեծաղիկը ունին իրենց ուրույն փառքը և չափը: Դուկասի Ավետարանը, իբրև գրականություն և իբրև պարունակություն, գեղեցկություն և կատարելություն է ծայրի ծայր, Հիսուսի մանկության գողտրիկ դրվագներն մինչև Էմմաւոսի թախմոտ ճամբորդները: Սրտագրաւ են Բարի Սամարացիի և Անտակ Որդիի անփոխարինելի առակները. համամարդկային է աղքատներուն, տկարներուն, խոնարհներուն, կիներուն, մանուկներուն և մեղավորներուն հանդեպ ցույց տրված մասնավոր հետաքրքրությամբ մեր Փրկչին կողմէ: Փրկությունը քանալի բառ է այս Ավետարանին մեջ: Աղոթքը գերազանց տեղ կգրավէ այստեղ: Համաքրիստոնեական նախնագույն շարականները այս Ավետարանն առնված կամ ներշնչված են. «Ավե Մարիա», «Մեծացուցէ», «Փառք ի քարծման» և ուրիշներ:

Անփոխարինելի է Ղուկասի ծառայությունը քրիստոնեական եկեղեցիին իր «Գործք Առաքելոց» գրությանը, որ շարունակությունը է երկրորդ հատորին է իր Ավետարանին, և առաջին, այսպես ըսենք, եկեղեցական պատմությունը: Առանց այս թանկարժեք Գիրքին, շատ բան մույթի մեջ պիտի մնար Քրիստոնեական եկեղեցիի ծագումը, ծնունդին և առաջին քայլերու մասին: Կներկայացնե մախ եկեղեցիին արմատավորվիլը և տարածվիլը Պաղեստինի սահմաններում մեջ, կեդրոն ունենալով Երուսաղեմը, և ապա անոր տարածումը մերձակա երկիրներ — Սուրիա, Կիպրոս, Փոքր Ասիա, Հունաստան և մինչև Հռոմ, իբրև կեդրոններ ունենալով Անտիոքը և Եփեսոսը:

Ղուկաս հակառակ իր անցմար մնալուն Նոր Կտակարանի էջերուն մեջ, ամենն ճշանավոր գործիչներեն մեկն է մախնական եկեղեցիին: Կհիշատակենք զայն իր Ավետարանիչ ընկերներուն հետ, Խաչի Զ կիր. 2թ. օրը. հույնք և լատինք՝ հոկտ. 18:

42. Տիմոթեոս

Պողոս առաքյալի ամենն անձնվեր աշակերտը և գործակիցը, որուն կհանդիպի իր երկրորդ ճամբորդության ընթացքին Գոնիայեն ոչ շատ հեռու Լյուստրա կոչված քաղաքին մեջ: Արդեն քրիստոնյա էր ան Պողոսի հանդիպած ատեն. «Որդի հավատացյալ հրեա կնոջ մը և հեթանոս հոր մը»: Իբրև վատահեղի և առաքիհի անձ մը «վկայված էր Լյուստրացիներու և Գոնիացիներու կողմէ»: Պողոս փափաքեցավ զայն ալ առնել իր հետ իր ճամբորդության ընթացքին. Ուստի «թլփատեց զայն այն հրեաներուն համար, որոնք այն տեղերն էին. վասնզի ամենքին ծանոթ էր անոր հոր հեթանոս ըլլալը» (Գործք Զ 1—3): Ծանոթ են մաս անունները Տիմոթեոսի մեծ մոր Լավոդիայի և մորը՝ Եվփիկեի, որոնք իրմե առաջ քրիստոնյա եղած էին և որոնց մայրական հոգածության ներքև Տիմոթեոս մեծցավ ու աճեցավ քրիստոնեական հավատքին մեջ (Բ Տիմ. Ա 5): Հեթանոսության ու հրեության հետ ունեցած իր կրկնակ կապերով և մաքուր կրոնական դաստիարակություն մը ստացած ըլլալու առավելությամբ, Տիմոթեոս եղավ հարմարագույն ատաղձը Պողոսի ձեռքը, որուն վրա հատուկ հոգածություն ցույց տալով՝ այս երիտասարդն կազմեց իր լավագույն գործակիցը և քրիստոնյա առաքիհի և անձնվեր գործիչներեն մեկը: Պողոս կապված է անոր հայրական մեծ խանդավառությամբ, զոր կարտահայտե իր թուղթերուն մեջ, և զոր կկոչե ոչ միայն «սիրելի որդի», այլ մաս

եղբայր ու գործակից իր աշխատանքներուն մեջ: Պողոս Ղուկասն ու Տիմոթեոսն ավելի մտերիմ ու հավատարիմ ոչ ոք գտած է (Բղդ. Հռոմ. ԺԶ 21. Ա Կորնթ. Է 17): Իր թուղթերն ունանց գրողը կամ խմբագրողը եղած է մույնիքն Տիմոթեոս, և հետևաբար իր անունն ալ կցված է Պողոսի անվան՝ այս անվաններուն սկիզբը (Բ Կոր. Ա 1, Փիլ. Ա 1, Կոր. Ա 1): Իսկ մույնիքն Տիմոթեոսի ուղղված են Պողոսի թուղթերն երկուքը, որոնք շատ օգտակար թելադրություններ կապրումակեն ամեն հավատացյալի առ հասարակ, բայց հատկապես եկեղեցիի պաշտոնյաներուն, այդ պատճառով իսկ կկոչվին ՀՈՎՎԱԿԱՆ ԹՈՒՂԹԵՐ, Տիմոթեոսի թուղթին հետ:

Պողոս առաքյալի կողմն իրեն հանձնված առաքելություններն էին, օրինակ, քաջալեր հանդիսանալ Թեսաղոնիկեցիներուն հավաճանքներու ընթացքին (Ա Թես. Գ 2), հաստատել նորահավատները իրենց հավատքին վրա Կորնթոսի մեջ (Ա Կոր. Դ 17): Ի վերջո Պողոս թողուց զայն Եփեսոսի մեջ, իր գործը շարունակելու համար (Ա Տիմ. Ա 8), որուն առաջին եպիսկոպոսը եղավ, և այնտեղ ալ մարտիրոսացած կհամարվի:

Կտոնենք զայն Պողոսի այլ աշակերտներուն հետ, Խաչի Ե կիր.ի հաջորդ. Եջին: Հույնք՝ հնր. 22. լատինք՝ հնր. 24:

43. Տիտոս

Պողոս առաքյալի ուրիշ անվանի գործակիցը, զոր կկոչե «Սիրելի որդի ըստ հասարակաց հավատքի» (Տիտ. Ա 1): Իսկ այլուր՝ «Եղբայրս, հավասարս և գործակիցս» (Բ Կոր. Բ 13, Ը 23): Պողոսի կողմն իբրև պատգամավոր դրկվեցավ Կորնթոս, նվիրահավաքություն կատարելու Երուսաղեմի եկեղեցիին համար (Բ Կոր. Ը 16—18): Տիտոս կարող և վատահեղի անձ մը եղած է (Բ Կոր. ԺԲ 18):

Պողոս երբ հառնաբասի հետ Երուսաղեմի ժողովին մասնակցելու կերթար, իր հետ առած էր մաս Տիտոսը, իբրև լավագույն մտույշ մը հեթանոսությունն դարձող քրիստոնյայի մը, որ թլփատված չըլլալով հանդերձ, ոչինչով պակաս էր թլփատված քրիստոնյայե մը (Գաղ. Բ 1—5):

Ի վերջո Տիտոս Կրետե կղզի դրկվեցավ Պողոսի կողմն, այդ տեղի նորակազմ եկեղեցիի վերատեսչությունը ստանձնելու ու սկսված գործը ընդարձակելու համար (Տիտ. Ա 5): Պողոսի վերջին տարիներուն արդեն իսկ Հռոմն է, և անոր կողմն որոշ առաքելությամբ գացած է Դաղմատիա, Ատրիական ծովու եզերքին: Ի վերջո վերա-

դարձած կերևի կրեւտե, որուն առաջին եւ պիսկոպոսը կհամարվի Տիտոս:

Պողոս առաքյալի թողութեան մեկը ուղղված է Տիտոսին, որ հավատացյալներու հետոյ կհորդորներ պարունակելով հանդերձ հատկապէս եկեղեցիի պաշտօնյաներուն վերաբերյալ ցուցմունքներ և թելադրանքներ ունի իր մեջ: Ըստ այս թողթի ուսուցման, եկեղեցականին հիմնական պարտականությունը պիտի ըլլա «լրացնել ինչ որ կպակսի» եկեղեցիի մեջ: Իսկ՝ հոգևորականը պիտի լինի.

«Անարատ... ոչ հանդուգն, ոչ զայրացկոտ, ոչ անարգող, ոչ ապտակող, ոչ ագամ. այլ՝ հյութասեր, բարեսեր, խոնարհ, արդար, սուրբ, ժուժկալ. ուղիղ վարդապետության վերակացու, որպեսզի կարենա ողջամիտ ուսուցմամբ մխիթարել խողները, և կրճատմբել հակառակորդները» (Տիտ. Ա 7—9):

Զորավոր շեշտ մը կորվի այս թողթին մեջ բարի գործերուն վրա, ստանց սակայն առվեցնելու որ մարդ բարի գործերով միայն կփրկվի. ընդհակառակը կրսե առաքյալը.

«Ոչ թե բարի գործերով է, որ կարդարանանք, այլ Աստուծո ողորմությամբ, ավագանի միջոցով մեր վերստին ծննդամբք, և ս. Հոգիի նորոգիչ գործությամբ... որպեսզի մեր Փրկչին Հիսուսի Քրիստոսի շնորհքովը արդարացած՝ կարենանք ծառանգորդները լինել հալիտենական կյանքի» (Տիտ. Գ 5—8): Մենք Տիտոսի հիշատակը կտոնենք Տիմոթեոսի հետ, վերս հիշված թվականին: Հուլիս՝ օգս. 25: Լատինք՝ հնր. 4 և փետր. 6:

44. ՈՆԵԱԻՄՈՍ

ՈՆԵԱԻՄՈՍ թեև վերջինն է հանվանն մեր տոնացույցին անցած ավետարանական սուրբերուն, սակայն վերջինը չէ ոչ՝ Նոր Կտակարանի սուրբերուն և ոչ ալ՝ Պողոսի աշակերտներուն: Կան տակալին բազմաթիվ ուրիշ անուններ և անձեր՝ Նոր Կտակարանի մեջ որոնք կհավատանք, թե Աստուծո սուրբերու քանակին մաս կկազմեն երկինքի մեջ: Անոնցմն ոմանց պիտի անդրադառնանք ստորև:

ՈՆԵԱԻՄՈՍ խոնարհագույնն է Պողոսի աշակերտներուն, որովհետև ստրուկ մըն էր, որ արժանացավ Պողոսի հոգածության և հայրության: Այս ստրուկը Կողոսայի մեջ բնակող իր տիրոջ Փիլիմոնի տունեն փախած էր Հռոմ, ուր հանդիպեցավ Պողոսին և կրկնապես ազատագրվեցավ: Նախ քրիստոնյա եղավ, ազատվելով մեղքի և ստրկության խաթեն, և ապա կհավատանք թե

արժանացավ նաև իր երկրավոր տիրոջ Փիլիմոնի ներումին: ՈՆԵԱԻՄՈՍի այս փախուստը և Պողոս առաքյալի հանդիպումը ոչ միայն իր փրկության պատճառ եղավ, այլ նաև քրիստոնյա եկեղեցիին շանեցուց Պողոսի թեև ամենեն կարճ ու ամենեն անհավան՝ բայց միաժամանակ ամենեն գողտրիկ և գոհար մեկ նամակը. «ԹՈՒՂԹ ՓԻԼԻՄՈՆԻ»: Տրված ըլլալով որ ՈՆԵԱԻՄՈՍի մասին մեր ունեցած տեղեկության գրեթե միակ աղբյուրը այս թողթն է, և մյուս կողմն տրված ըլլալով անոր կարճությունը և կարևորությունը, նույնությամբ առաջ կրենք զայն:

«Պողոս, կապյալ Հիսուս Քրիստոսի, և Տիմոթեոս եղբայր, Փիլիմոն մեր սիրելիին և գործակիցին, ինչպես նաև Ապիսիա քոջ (Փիլիմոնի տիկինը) և Արքիպպոս մեր զինակիցին (հավանաբար երեցը Կողոսային) և ստունին եկեղեցիիդ, շնորհք ձեզի և խաղաղություն մեր Հայր Աստուծուն և Տեր Հիսուս Քրիստոսին:

Աստուծո գոհություն կմատուցանեմ ամեն ատեն երբ կհիշատակեմ քեզ աղոթքներու մեջ, երբ կսեսն քու հավատոյ և սերդ գորունիս Տեր Հիսուսի և քոյոր սուրբերու (քրիստոնյաներու) հանդեպ. թող այդ քու հավատքիդ հաղորդակցությամբ արժանի ըլլաս խորապես հասկնալու այն բարությունը (առավելությունը) գոր ունիս Հիսուս Քրիստոսի հավատալով և միանալով: Մեծապես ուրախացա և մխիթարվեցա իմանալով քու սերդ, եղբայր, որ հավատացյալները քեզմով գտած են իրենց խաղաղությունը:

Ուստի, թեև այն համարձակությամբ, գոր ունիմ ի Քրիստոս, կրնայի քեզի հրահանգել անհրաժեշտը, սակայն քեզի հանդեպ ունեցած սիրույս համար պիտի աղաչեմ քեզի, եւ, ծերացած Պողոսը, և հիմա կապյալս Հիսուս Քրիստոսի համար, պիտի աղաչեմ քեզի որդւոյս ՈՆԵԱԻՄՈՍԻ համար, գոր ծնա կապանքներու մեջ (դարձի բերի զայն իմ այս բանտարկված միճակիս մեջ): Այդ, ՈՆԵԱԻՄՈՍի համար, որ երբեմն անպիտան էր քեզի համար, բայց հիմա պիտանի է թե քեզի և թե ինձի, և գոր եղրկեմ քեզի, խնդրելով որ ընդունիս զայն իբրե իմ մեկ մասնիկս, գոր թեև կուզեի մոտս պահել, որպեսզի քու տեղդ ինձի օգտակար ըլլար Ավետարանի համար ապ կապյալ միճակիս մեջ, բայց առանց քու կամքիդ չուզեցի ոչինչ ընել, որպեսզի քու քարիքդ ստիպողական չըլլա, այլ հոժարակամ:

Եվ թերևս այս պատճառով մեկնեցավ քեզմե ժամանակի մը համար, որպեսզի հալիտենապես ունենաս զայն, ոչ որպես

ստորուկ, այլ ստորուկեն ավելի վեր մեկը, այսինքն իբրև սիրելի եղբայր, եթե ինձի համար եղբայր մըն է ան այլևս, որչափ առավել պիտի ըլլա նաև քեզի, թե մարմնապես և թե Տիրոջմով: Եթե զիս քեզի հաղորդակից կնկատես, ընդունե՛ գայն այնպես՝ ինչպես պիտի ընդունեիր զիս: Եթե քեզի դեմ հանցանք մը գործած է, կամ պարտական մնացած է, այդ ինձի հաշվէ: Ես, Պողոս, ստորագրությունս կդնեմ, թե ես պիտի հատուցանեմ չքնելու համար, որ դուն քու անձը ինձի պարտական ես: Այո, եղբայր, ուրախացուր զիս, և փարատե անձկությունը ի Քրիստոս իմ որդիիս: Վստահ ըլլալով քու հնազանդությանդ գրեցի քեզի: Որովհետև գիտեմ թե խնդրածես ավելին պիտի ընես:

Միաժամանակ ինձի համար սենյակ մը պատրաստե, որովհետև այնպես կհուսամ, որ ձեր աղոթքներուն շնորհիվ Աստված զիս ձեզի պիտի պարզեն (Կհուսամ շուտով բանտեն ազատիլ և ձեզի գալ):

Ողջույն կուտա ձեզի Եպափրաս, բանտակիցս ի Քրիստոս Հիսուս, նույնը կընեն Մարկոս, Արիստարքոս, Դեմաս և Դուկաս, գործակիցներս: Մեր Տեր Հիսուսի շնորհքը ձեր ոգիին հետ ըլլա՛:

Այս նամակին հետ գրեց Պողոս նաև մեր այսօրվան ունեցած «ԿՈՂՈՍԱՅՎՈՑ ԹՈՒՂԹԸ» և երկուքը միասին հանձնեց իր գործակիցներեն ՏՅՈՒՔԻԿՈՍԻ. և ՈՆԵՍԻՄՈՍն ալ անոր ընկերացնելով դրկեց Կողոսիս, որ կգտնվեր Փոքր Ասիո Եգեականի շրջանը, այսօրվան Տեմիզլիեն ոչ շատ հեռու: Կգրե Պողոս այդ թուղթին վերջավորության մեջ. «Մեզի վերաբերյալ լուրերը պիտի ստանաք Տյուբիկոս սիրելի եղբորմեն և հավատարիմ օգնականն ու գործակիցն Տիրոջ գործին մեջ, զոր (Տյուբիկոսը) դրկեցի ձեզի որպեսզի տեղյակ ըլլաք մեր մասին և մխիթարվիք արտով: Անոր կընկերանա նաև Ոնեսիմոս սիրելի և հավատարիմ եղբայրը, որ ձեզմե մեկն է (Կողոսացի է): Այստեղ եղածները անոնք ձեզի պիտի պատմեն» (Կող. Դ 7—9):

Ավանդությունը Ոնեսիմոսը քարոզության կորկե զանազան վայրեր, իր տիրոջ մահեն հետո: Երբ հոռվմայեցի դատավորին առջև կելլե դատվելու համար, վերջինիս հարցումին թե ո՞վ ես դուն, կպատասխանե. «Ես երբեմն մարդու ծառա էի, դրամով գնված. այժմ Աստուծո ծառա եմ, Քրիստոսի արյունով գնված՝ և ազատորոյր դարձած»: Սաստիկ չարչարանքներով կնահատակվի: Հույնք՝ նոյ. 22: Լատինք՝ փետր. 16:

ԱՅԼ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ՊՈՂՈՍԻ

Մեր տոնացույցը Ոնեսիմոսի անունեն

հետո կավելցնե. «ԵՒ ԱՅԼՈՑ ԱՇԱԿԵՐՏԱՅՆ ՊՈՂՈՍԻ»: Արդարև բազմաթիվ են Պողոսի հանվանե հիշատակված աշակերտները, որոնց կհանդիպինք Գործք Առաքելիցի՝ բայց մանավանդ իր թուղթերուն մեջ: Մենք հաշված ենք անոնցմե, բացի վերոհիշյալներե, ավելի քան քառասուն անուն: Գոնե համառոտիվ հիշատակենք անոնցմե գլխավոր նկատվածները, որոնց մասին քիչ շատ ծանոթություններ ունինք Գործք Առաքելոցեն կամ Պողոսի թուղթերեն:

1. Վերև տեսանք արդեն անոնցմե մեկը, ՏՅՈՒՔԻԿՈՍ-ը, որ առհասարակ Պողոսի թղթատարն է զանազան եկեղեցիներուն:

Իացի վերոհիշյալ թուղթեն հիշված է, որ տարած է նաև «Եփեսացվոց թուղթը» (Եփես. 2 21—22), և Տիմոթեոսինը (Բ Տիմ. 2 12): Հավանաբար Եփեսացի է, որ ընկերացավ Պողոսի այս քաղաքեն դեպի Մակեդոնիա—Կորնթոս—Երուսաղեմ ճամբորդության (Գործ. Ի 4):

2—3.—ԱԿՅՈՒՂԱՍ և ՊՐԻՍԿԻՂԱ, այդ և կին պատվական ամուլ մը, Պոնտացի, բայց կապրեին Հռովմ, ուրկե վտարվեցան, սակայն երբ Կղդդիոս կաշար 49 թվին հալածեց հրեաները Հռովմեն: Եկան ու հաստատվեցան Կորնթոս, ուր գտավ զիրենք Պողոս երբ առաջին անգամ այդ քաղաքը այցելեց և որովհետև այս ամուլն ալ արհեստով վրանակար էր, Պողոսի պես, ուստի Պողոս «հարեցավ» ասոնց (Գործ. ԺԸ 1), և միասին կաշխատեին: Անկե հետո եղան Պողոսի անձնվեր քարեկամները և գործակիցները, որոնց մասին միշտ գովեստով և զնահատանքով կարտահայտվի առաքյալը. կըսե օրինակ անոնց ակնարկելով. «Որոնք իմ տեղս իրենց պարանոցը մատուցին, որոնց գովեստը կխոսիմ ոչ միայն ես, այլ հեթանոսներու բոլոր եկեղեցիները» (Հռոմ. ԺՁ 3): Ասոնց տունը հավաքավայր էր հավատացյալներու, այսինքն «Առտնին եկեղեցի» մըն էր: Արժանի էին ասոնք որ անցնեին միասնաբար նաև մեր տոնացույցի մեջ, ինչպես անցած են մյուս եկեղեցիներուն մոտ:

4.—ՈՆԵՍԻՄՈՒՓՈՐՈՍ, ուրիշ շատ պատվական քարեկամ ու գործակից Պողոսի, հավանաբար իրարու ծանոթացան Եփեսոսի մեջ: Երբ Պողոս Հռովմի մեջ երկրորդ անգամ բանտարկված էր, հետևյալը կգրե իր աշակերտ Տիմոթեոսին. «Սա գիտցիր, որ Փոքր Ասիացիները ամենքն ալ հետացան ինձմե... Սակայն Աստված իր բարիքները առատացնե Ոնեսիփորոսի տան վրա, որ շատ անգամ հանգստացուց զիս և իմ կապանքներս ամոթ չի սեպեց. այլ՝ երբ Հռովմ եկավ պնդագույն փնտռեց ու գտավ զիս. թող Տերը ողորմություն ընե անոր—

դատաստանին օրը: Իսկ թե որչափ օգտակարություն ունեցավ ան ինձի Եփեսոսի մեջ, այդ դու ինքնին քաջ գիտես» (Բ Տիմ. Ա 15—18, Դ 19):

5.—ԵՐԱՍՏՈՍ, կոշված է Կորնթոսի «Ծառապը». այս տիտղոսը նույնն է «սահապ» կամ «սահիպ» արաբերեն բառին հետ, որ անցած է նաև թրքերեն լեզվին: Ա. Գրոց անգլերեն թարգմանությունները այս բառը կվերածեն որպես «զանձապետ»: Ինչ ալ ըլլա բառին ստույգ իմաստը՝ սա բացահայտ է, որ բարձր դիրքի տեր անձնավորություն մըն է, որ ամոք չսեպեց Պողոսին գործակից կամ աշակերտ ըլլալը. նախ դրկվեցավ Մակեդոնիա, և հետո՝ Պողոսի ընկերացալ դեպի Եփեսոս ճամբորդության, ապա վերադարձալ իր քաղաքը Կորնթոս (Գործ. ԺԺ 22, Հռոմ. ԺԶ 23, Բ Տիմ. Դ 20):

6.—ԱՊՈՂՈՍ, Աղեքսանդրացի. բանիբուն, ուսյալ և «նարտարաբան» հրեա մը, որ «գորավոր էր սուրբ գրոց գիտության մեջ» և Եփեսոս գալով «կեռար հոգևոր, կիսուեր ու կուսուցաներ ճշմարտությանը Հիսուսի մասին». բայց տեղյակ էր լոկ «Հովհաննեսի մկրտության»: Ակյուղաս և Պրիսկիլա իրենց մոտ ստին զայն և «ընդմարտագույնը» սորվեցուցին անոր: Եփեսոսն անցավ Կորնթոս, ուր մեծ ճարտարությանը քարոզեց Ավետարանը և ոռոզեց ու ընդարձակեց Պողոսի սկսած գործը (Գործ. ԺԶ 24—28):

7.—ԱՐԻՍՏԱՐԳՈՍ, Սեպանիկցի. շատ հավատարիմ գործակից մը, որուն կյանքը մահվան վտանգին ենթարկվեցավ, երբ Պողոսի դեմ ուժգին հակառակություն ծայր տվալ Եփեսոսի մեջ (Գործ. ԻԺ 29), բայց ազատվելով շարունակեց իր գործակցությունը Պողոսին, որուն Հռոմ ճամբորդության ընկերակիցներեն մեկն է (Կող. Դ 10):

8.—ԵՊԱՓՐԱՍ, Կողոսացի. հավանաբար սկստը այս քաղաքի քրիստոնեական համայնքին: Չինքը կտեսնենք Հռոմի մեջ բանտակից կամ օգնական Պողոսի (Կող. Ա 7, Դ 12):

9.—ՍԵՓԱՆԵՍ, ՓՈՐՏՈՒՆԱՏՈՍ, ԿՐԻՍՊՈՍ, ԳԱՅՈՒՍ. չորսն ալ Կորնթացի և ողղակի Պողոսն մկրտված, առաջին երեքը՝ ասբողջ ընտանոք, որոնք կնկատվին «առաջին պտուղ արայեցվոց» և որոնք «իրենք գիրենք հավատացալներու ծառայելու տրամադրած էին»: Պողոս կհանձնարարե Կորնթացիներուն, որ «Այսպիսիներուն հնազանդ ըլլան». ինչ որ կենթադրե թե եկեղեցիի մեջ բարձր դիրք ունեին: Առաջին երկուքը ուրիշ ընկերոջ մը հետ այցելած են Եփեսոս, «որոնց գալուն համար

որախ եղա» կրսն առաքյալը, ու կապեցնեն. «որովհետև ձեր պակասությունը անոնք լրացուցին, քանզի հանդարտեցուցին իմ և ձեր հոգին. արդ գիտցեք այսպիսիներուն արժեքը» (Ա Կոր. ԺԶ 15—18): Այս նախն ալ ասոնց ձեռքերով դրկեց Եփեսոսն Կորնթոս: ԿՐԻՍՊՈՍ Կորնթոսի հրեից ժողովրդապետն էր. իսկ ԳԱՅՈՒՍ՝ Պողոսի «Ասպնշականը». հավանաբար նույն անձն է, որուն ողղած է Հովհաննես առաքյալ իր Գ թուղթը:

13—14.—ՂԻՆՈՍ և ԿՐՈՂԻԱ. որոնցմե ողջուն կրկեց Պողոս Տիմոթեոսին (Բ Տիմ. Դ 21) և որոնց մասին ուրիշ ոչինչ գիտենք Նոր Կտակարանն. սակայն ավանդությունը Ղինոսը կնկատե Հռոմի առաջին եպիսկոպոսը հետ Պետրոսի. իսկ Կղոդիան՝ անոր մայրը:

15—16.—ՏՐԻՓՈՍՍ և ՏՐԻՓՈՒՍ «վատակալորներ ի Տեր» (Հռոմ. ԺԶ 12): Թեև սակե զատ ոչինչ գիտենք իրենց մասին, բայց կկարծվի որ երկվորյակ անձնավորություններ եղած են, որոնց անունները կնշանակեն եղեր «Սիրուն և Ջերմոյշ»:

17—18.—ԱՆԴՐՈՒԿՈՍ և ՀՈՒՆԻԱ, այր ու կին կամ եղբայր ու քույր կնկատվին: Պողոս առաքյալ, զանոնք կկոչե «իմ ազգականներս ու գերեկիցներս, որոնք ծանոթ են առաքելական շրջանակներու մեջ, և որոնք ինձմե առաջ քրիստոնյա եղան» (Հռոմ. ԺԶ 7):

19.—ՓԻԲԵ, գոր կկոչե առաքյալը «քույր մեր, որ ապաստավորն է Կենքրայի եկեղեցիին», և կհանձնարարե Հռոմիացի քրիստոնյաներուն, որ զայն «ընդունին հանուն Տիրոջ և արժանի սրբոց և օծանդակ եղեր անոր ինչ գործի որ կանչե ձեզ, քանզի ան ալ շատերուն օգնական եղած է, մինչև իսկ ինձի» (Հռոմ. ԺԶ 1—2): Հավանաբար «Առ ՀՐՈՎԻՄՈՍԵՅՈՍ» թուղթը այս կնոջ ձևով դրկվեցավ իր հասցեին, Կորնթոսն: Վերոհիշյալ Կենքրա քաղաքը Կորնթոսի հավանագիտուն էր:

20.—ԴԻՈՂԵՍԻՈՍ ԱՐԻՍՊԱԳԱՅԻ, Աթենացի մտավորական մը, որ գլխավոր հավատացողը եղալ՝ Պողոսի Աթենքի մեջ կատարած ոչ ալերան հաջող առաքելության մը ընթացքին (Գործ. ԺԷ 34): Ապա եղած է, ըստ ավանդության, Աթենքի առաջին եպիսկոպոսը: Դիոնեսիոսը կտոնենք Խաչի է կիրակիի նախընթաց շաբաթ օրը, «երկուստասն վարդապետաց» հետ, այն սխալ ենթադրության վրա, թե «Դիոնեսիոս»-ի անունով ծանոթ միատիկական աստվածաբանական գրվածքները, որոնք կարևոր տեղ մը կգրավեն հին եկեղեցական մատենագրության մեջ, Արիսպագիին գործերն են: Այսօր, բացահայտորեն հաս-

տատված են, որ անոնք Ե դարուն գրված գործեր են: Եթե այս սխալ կարծիքը կազմված չլլար, Արիստագացին պիտի հիշատակվեր Պողոսի աշակերտներու շարքին մեջ միայն, ինչպես եղած է արդարև Խաչի Ե կիրակիի Եջ.ին, երբ կտոնվի Պողոսի գլխավոր աշակերտներեն Տիմոթեոսի և Տիտոսի հետ:

Եվ տակավին բազմաթիվ ուրիշ աշակերտներ, որոնց անունները միայն հիշատակված են Պողոսի թուղթերուն կամ Գործք-ի մեջ. օր. Զենոն, Արտեմաս «օրինական դպիր», Կրեսկես, Կարպոս, որուն քով ձգած էր Պողոս, Տրովադա, իր «փիլոն»-ը, այսինքն ծանր ձմրան վերարկուն, զոր բերել կհամահարարե Տիմոթեոսին: Մոսթենես, ժողովրդապետ հրեից Կորնթոսի մեջ, Տրոփիմոս, զոր ձգած է «հիվանդագին ի Մելիտոս». Երուդոս և Պուդես: Հիսուս, որ անվանվեցավ Հուստոս. Նիմփա, Արքիպպոս, և տակավին քսան անուններ լոկ

Հռովմայեցվոց թուղթի ԺԶ գլուխին 5—16 համարներուն մեջ, որոնց ողջույն կղրկե Պողոս իբրև ծանոթ դեմքերու: Ասոնց մեջ է, օրինակ, «ընտրյալ» ՌՈՒՓՈՍ, Հիսուսի խաչը կրող Սիմոն Կյուրենացիի որդիներեն մեկը, մյուսը ըլլալով Աղեքսանդր, որոնք հիշված են նաև Մրկ. ԺԵ 21-ի մեջ: Ակնարկված է նաև ասոնց մորը, զոր Պողոս կնկատե նաև իր մայրը (Հռոմ. ԺԶ 13): Մոսիպադրոս, «ազգական» Պողոսի: ՏԵՐՏԻՈՍ, որ գրած է Առ Հռովմայեցիս թուղթը, իբրև քարտուղար:

Ասոնցմե շատ շատերը հանվանե հիշատակված են հույն և լատին օրացույցներու մեջ, ինչպես նաև մեր հայսմավորքներուն մեջ:

(Ծարումակելի)

(«Աստվածաշնչական սուրբեր», Իսթանպուլ, 1977, էջ 185—204):

Գիւղ բառը 54 անգամ կիրառված է, այս ընդունված ձևը միայն 6 անգամ կա Աստվածաշնչում. մեկ գիւղք, երկու անգամ գիւղս ձևով և երեք՝ գիւղից: Պետք է ասել, որ գիւղ ձևը հանված է գիւղից սեռականից. բուն դասական ձևն է գեօղ, որ 46 անգամ նույնությամբ հիշատակված է. գեղ, որ բարբառային է, գտնվում է միայն երկու անգամ: Ուրեմն դասական ձևը գեօղ-ն է, որի եզակի սեռականն է գեղջ (ԵՍ>Ե ձայնափոխությամբ), իսկ հոգնակի սեռականն է գիւղից (ԵՍ>Ի փոփոխությամբ): Գիւղ ձևը 5-րդ դարի սկզբում չկա: Այլ մատենագիրների գիւղ բառը տարբերակներում նույնպես ունի գեղ, գեօղ, գեղ ձևերը: Հետագայում գեօղ, գեղ խոսակցական ձևերը դասական ձևի պատրանք են հաղորդել գիւղ-ին, որ, ինչպես ասացինք, սարքված է գիւղից՝ հոգնակի սեռականից:

Մանրախնդիր հետազոտությունները, մանավանդ հնավանդ պատմականներում և անվավերական ու նախնական թարգմանությունների մեջ կարող են հետաքրքրական և անծանոթ ձևեր հայտնաբերել:

Լեզվի նյութական ծովածավալ հարստության հետ Սրբազան այդ գիրքը մեր գրողների համար ծառայել է իբրև գրելու ուսումնառության օրինակ և նրանց սովորեցրել է լեզվական արվեստի ճանաչելի ու թաքուն բազմաթիվ եղանակներ ու ձևեր, որոնք մշակվելով առավել ևս ազգայնացել ու դարձել են հայերենին հատուկ ոճաբանական հարստություններ և փոխանցվել են սերնդից սերունդ:

Համանիշ բառերի կիրառության ձևերը, գեղեցիկ հավելադրությունները, ձևավոր կրկնությունները, շարադասական շրջումները, հակադրություններն ու համեմատությունները իրենց դասական առաջին կիրառությունները գտել են այս գրքում և այստեղից են շրջանության մեջ մտել: Բանաստեղծական արվեստի շատ գաղտնիքներ ևս այնտեղից են սովորել մեր հին բանաստեղծներն ու գրողները:

Աստվածաշունչը ունի չափածո գրքեր. դրանք են Յովք-ը, Սաղմոսք-ը, Գիրք Աբակագ-ը, Երգ երգոց-ը, Ժողովող-ը, Մարգարեությունք-ը, Ողբք Երեմայ և այլ գրքեր: Սրանց մեջ կան բազմաթիվ կտորներ, որոնք օրհնություններ, ողբեր, գովքեր, հիմներ ու խրատներ են:

Եբրայական չափածոն բնութագրվում է անհամագությունք և վանկաբաժանման անհավասարաչափ տողատումով, սակայն տողերի երկարությունն ու կարճությունը ունեն մի սահման, որից այն կողմ երբեք չեն անցնում, որպեսզի խոսքի կշռույթը չըխախտվի: Տողերի բաժանումը չի հենվում

չափի և ձևի (նույնահանգություն) վրա, այլ հիմք է ընդունվում տողի բովանդակությունը: Համախ հաջորդ տողը նախորդի բովանդակության վերադարձությունն է բանական միանգամայն նոր ձևով. այս հնարք ծառայում է իբրև տողատման միջոց: Եվ պարզ ցույց է տալիս տողերի սահմանները. օրինակ՝ «Ապրեցո զիս, տէր, ի մարդոյ չարէ, (Յառնէ անիրաւէ փրկեա զիս): Խորհեցան զանօրէնութիւն ի սիրտս իւրեանց, (Ջոր ամենայն պատրաստեցան ի պատերազմ): (Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի), (Եւ թոյնք իծից ի ներքոյ շրթանց նոցա): Պահեա զիս, տէր, ի ձեռաց մեղաորի, (Եւ ի մարդոյ չարէ փրկեա զիս): (Խորհեցան խափանել զգնացս իմ, թաքուցին ամբարտաւանք որոգայթ ինձ): (Լաւս ձգեցին որոգայթ ոտից իմոց): (Շուրջ զշաղօք իմովք եղին ինձ զգայթակողութիւն): (Սաղմոս ԵԼԺ 1—7): Չնայած կրկնակի թարգմանության՝ հայերենը պահպանել է եբրայական բանաստեղծության էական հատկանիշները՝ կշռույթը և տողերի ձևական պեսպետությունները, որոնք սոսկ զանազանաբար կրկնություններ չեն միայն, այլ նրբերանգ իմաստային հարստություններ: Այս վերջին հատկությունը լինելով եբրայական չափածոյի բնութագրական գիծը՝ միաժամանակ խորացնում ու ծավալում է գեղարվեստական այն խնդիրը, որ դրված է բանաստեղծության հիմքում: Տվյալ դեպքում այդ կրկնությունները Սաղմոսների քնարական վիշտն ու թախծանքը դարձնում են խորագրու և ցնցող, իսկ խոսքը ստանում է գեղեցիկ ու կատարյալ մի ձև՝ օժտված կշռույթով և զարդարուն պեսպետությամբ, իմաստային հարստությամբ: Որովհետև, եթե չկա մի համանիշ բառ, որ իր համանիշից չզանազանվի իմաստային որևէ նրբությամբ և ոճաբանական յուրահատկությամբ, ապա համանիշային նախադասությունները առանձին-առանձին դառնում են այդ նրբությունների և ոճական յուրահատկությունների հանդիսարաններ:

Եբրայական չափածոն հատկանշվում է նաև տողերի հակադրականությամբ: Առաջին տողում ցծվում է որևէ գաղափար, երկրորդ տողը նախորդին բոլորովին հակադիր մի այլ գաղափար է առաջադրում, և երկու հակադիր գաղափարները նպաստում են միմյանց ցայտուն դրսևորմանը, մեկը մյուսի միջոցով լուսավորվում ու պայծառանում է: Տվյալ դեպքում նպատակը առաջին տողի բացահայտումն է լեզվական որոշակի միջոցներով, բայց հաջորդ հակադիր տողը լեզվական նոր ու հակադիր միջոցներով և իր ծառայական դերով չի սահմանափակվում, այն ևս յուրովի բացահայտ-

վում է նախորդ տողի հավաքությունը: Օրինակ՝ Որդի խորագետ հնազանդ հօր, Որդի անհնազանդ ի կորուստ եղիցի: Ի պըտողյ արդարություն կերիցէ առատ, Անձինք անօրինաց սատակեցին տարածամ: Որ խնայէ ի բերան իւր, պահէ զանձն, իսկ որ լանդուզն է շրթամբք, խոովէ զանձն իւր: Ի կարտություն է մեռնայն վատ, Ձեռք ծրաց ի դարման: Զբան անիրաւ ատեայ արդար, իսկ ամպարիշտն ամաշէ և ոչ գըտցէ համարձակութիւն: Արդարութիւն պահէ զանձնդս ճանապարհաւ, Զամպարիշտս անգզամեցուցանեն մեղք: Են որ մեծացուցանեն զանձինս և ոչինչ ունին, Եւ են որ խոնարհեցուցանեն զանձինս և ի են մեծութեամբ բազմաւ: Փրկանք անձին մարդոյ սեծութիւն իւր, իսկ տնանկն ոչ հանդարտէ պատուհասի: Լոյս արդարոց լամենայն ժամ, Լոյս ամպարշտաց շիջցի: Անձինք նենգատըք մոլորեցին ի մեղս, Այլ արդարք զբարսցին և ողորմեցին (Առակք ԺԿ 1—10): Սողոմոնի ողջ Առակները մշակված են այս ձևով և հեշտությամբ տողատվում են՝ իրենց հակադիր մասերով պաշտոտներն ի մաստավորվելով և ոճաբանորեն հարքստանալով:

Աստվածաշնչի բանաստեղծության բնորոշ հատկանիշներից մեկն էլ զուգադրությունն է: Խոսքը տողատվում է զուգահեռական ձևերով: Այս զուգահեռական տողերը ծավալվում են կամ իրրե իրար մոտիկ հաղորդումներ, կամ երկրորդը՝ լրացումը, ընդարձակումը, բացահայտումն է ստաշինի, և կամ շղթայակցվում են իրրե հարակցական կապակցություն, օրինակ՝ «Լուր գլուր գրարկութեան արտոտութեան տեսուն, և խորհրդը ի բերանդ նորա էլցէ: Ի ներքոյ ամենայն երկնից իշխանութիւն նորա էր յուս նորա ի վերայ ծագաց երկրի: Զկնի նորա գոչեցէ բարբառ: Որոտացէ ձայնի բարձրութեան իւրոյ» (Յովք 1Է 1—4):

Լուսա Աստուած և արհամարհեաց գնոսա Եւ անարգեաց յոյժ գիւրալէ: Մերժեաց իւրմէ գիտրան ի Սելով: Զխորանն, գոր բնակեցոյց ի մէջ մարդկան: Մատնեաց ի գերութիւն զգորութիւն նոցա, Եւ զգեղ նոցա ի ձեռս թշնամեաց նոցա: Արգել ի սուր գծողովորդ իւր, Եւ գծառանգութիւն իւր անտես արար: Զերիտասարդս նոցա եկեր հուր, Եւ վստն կուսանաց նոցա ոչ որ սգացաւ: Քահանայք նոցա անկան ի սուր: Եւ զայրիս նոցա ոչ որ էր, որ լայր: Զարթեալ որպէս ի քնոյ տէր, Որպէս հօգոր, զի թափէ զգինի: Ենար լետս զթշնամիս իւր նախատինս յախտենից արար գնոսա (Սաղմ. ԷԷ 59—66):

Աստվածաշնչում առաջին գիրքն էր, որ գեղարվեստական խոսքի ձևեր սովորեցրեց

մեր հին գրողներին և լեզվական արվեստի ճաշակ զարգացրեց նրանց մեջ: Եթե մեր հին լեզուն կարողացաւ թոթափել հունարան հայերենի կապակցները և ազատվել նրա վտանգավոր գայթակղությունից, պետք է բացատրել միայն Աստվածաշնչի հզոր ներգործությամբ: Նրա լեզվի պարզությունը, հայեցի մարբությունը, լեզվաճակատ գեղեցիկ արվեստը, քառապաշարի ու դարձվածքների ծով հարստությունը և այս ամենի ու քրիստոնեական կրոնի ուսմունքի հիմունքը լինելու շնորհիվ էր, որ Աստվածաշնչը տիրականորեն իշխում էր մեր լեզվի հետագա զարգացման ողջ ընթացքի վրա և պահպանում նրա հիմնական ողորդությունը՝ թույլ չտալով, որ գրական լեզուն իր կապը խզի 5-րդ դարի լեզվական առողջ ու ազգային ավանդույթից: Միշտ է, մեր հին գրական լեզուն զուգընթաց չզարգացավ համաժողովրդական խոսակցական լեզվի հետ, բայց այնուամենայնիվ 5-րդ դարի և հատկապես Աստվածաշնչի լեզվի ազդեցության շնորհիվ երկար դարեր պահպանեց իր համաժողովրդական լեզվի հատկանիշները՝ ընդհանուր քառապաշարն ու դարձվածքները, ձևաբանության հիմնական միջոցները, շարադասության ժողովրդական խոսքի ձևերը: Օնոլումները չփոխեցին մեր լեզվի բոլոր ճիշտ ընթացքը, այդ շնորհիվ իրրե հունարան հայերեն, իրրե արհեստական խրթնարանություն, իրրե լատինարան հայերեն իրենց աչքնայլ նպատակներով ու տարազներով մնացին որպես այս կամ այն ստանձին ժամանակաշրջանների արտահայտություն ու տուրք: Իրանք, հատկապես հունարան հայերենը, կարող էին ազգային հունից հանել մեր լեզուն, եթե սա հինգերորդ դարի գրականության և ստանձնագետ Աստվածաշնչի լեզվական բարձր ավանդներով չառաջնորդվեք:

Այդ ավանդներն էին Աստվածաշնչի լեզվի բյուրեղային պարզությունը: Ինչպես՝ Ժամանակ եղիր, և ոչ անցցէ: Ի բաց լեր ի նմանէ, զի դադարեցէ և ամոքեցէ զկեանս իրրե զվարձական: Զի գոյ յոյս ծառոյ անդրէն «զի թէպէտ և կտրեցի, միս անգամ ծաղկեցէ և շատաիղ նորա մի սկսկառեցէ: Եթէ ձերասցի լերկրի արմատ նորա, և ի քարի վախճանեացի բուն նորա, ի հոտոյ ջրոյ ծաղկեցի և արացէ հունձս իրրե զնորասունկ: Բայց այր վախճանեալ գնաց, անկեալ մարդ և ոչ ևս իցէ: Զի ժամանակաւ անօրի ծով, և գետք անկեալ ցամաքեցան: Եւ մարդ ննջեաց և ոչ յարիցէ, սինչն երկինք չիցեն, ոչ կարկատեցին և ոչ զարթիցեն ի քնոյ իրեանց...» (Յովք ԺԴ 5—13):

Ջի ահա ձմեռն անց, անձրևք անցին և գնացեալ մեկնեցան, Ծաղիկք երևեցան լերկրի մերում, ժամանակ եհաս յատանելոյ, ձայն տատրակի լսելի եղև լերկրի մերում, թզենի արձակեաց գրողքոջ իւր, որթք մեր ծաղկեալք ետուն զհոտս իրեանց: Արի, եկ, մերձաւոր իմ, գեղեցիկ իմ, աղանի իմ (Երգ Բ 11—13):

Աստվածաշնչի խոսքը պարզության հետ պատկերավոր է ու նկարագրել, որտեղ հրաշալի համեմատությունները իրենց բազմազան ձևերով այդ խոսքը դարձնում են գունագեղ, պայծառ, թարմ ու գրավիչ: Հայ մարդը տարվում էր ոչ միայն նրա թարմ բովանդակությամբ, այլև լեզվական արվեստի շողշողուն ձևերով, որոնք նրա մեջ զարգացնում էին պատկերավոր նոր մտածողություն, ուսուցանում էին խոսելու, մանավանդ գրելու շնորհ ու արվեստ: «Եւ եմոյծ զիս առաջի դրան տաճարին, և ահա ելաներ ջուր ի ներքոյ վարագուրաց տաճարին ընդ արևելս, զի երեսք տաճարին հայէին ընդ արևելս, և ջուրն հոսէր յաջմէ կողմանէ տաճարին հիւսիսոյ ի սեղանն կոյս: Եւ եհան զիս ընդ ճանապարհ դրանն հիւսիսոյ և շրջեցոյց զիս ընդ ճանապարհ դրանն արտաքնոյ առ դրամբն արտաքնով, որ հալէր ընդ արևելս, և ահա ջուրն հոսէր յաջմէ կողմանէ: Եւ իբրև գելս առն դէմ յանդիման և չափ ի ձեռին իւրում. և չափեաց հազար չափովն և անց ընդ ջուրն ջուր յորդութեան և չափեաց հազար չափովն և անց ընդ ջուրն, և հարկանէր ջուրն մինչև ցերանս: Եւ չափեաց հազար չափովն Եւ անց ընդ ջուր եւ հարկանէր ջուրն մինչև ցգօտին: Եւ չափեաց հազար չափովն գոլխան և ոչ կարէր անցանել, զի յորդեաց ջուրն իբրև զյորձանս հեղեղաց, ընդ որ ոչ ոք անցանցիցէ» (Եզեկ. ԽԵ 1—6): Պատկերավոր մտածողությունը և ըստ այդմ լեզվական արտահայտչությունը Աստվածաշնչի համարյա բոլոր գրքերին հատուկ են, իսկ սրանք դրսևորվում են առանձնապես համեմատություններով: Հայերենի համեմատության բոլոր ձևերը իրենց պատկերավորությամբ, հակիրճ ու ընդարձակ բանաձևերով ներմուծում սպոված են այս գրքի մեջ, և ամեն պարագայում մեր գրողները քաղել են այստեղից իրենց խոսքի բաղդատական բոլոր հնարները. Երգ երգոց-ի, Սաղմոսների, Առակաց գրքի և այլ գրքերի տարբեր ոճական մշակումները՝ մեկը իբրև քնարական բանաստեղծություն, մյուսը իբրև իմաստության խորհուրդների դասական բանաձևումներ, մի երրորդը իբրև խրատ ու պատգամ, իբրև բարոյախոսություն ու պատմություն, մեր նոր քալ առնող գրական լեզուն մղեցին լայն զարգացման ճանապարհ: Մեր լե-

զուն ոչ միայն մշակվեց աստվածաշնչական լեզվի ոճական հնարները, նրա ծով շրջաբանությունները, դարձվածաբանական ողջ համակարգը արտահայտելու գործընթացում, այլև դարձավ ուսուցման ուղեցույց և աղբյուր ամբողջ հազար հինգ հարյուր տարվա երկար ու խորխորատներով լեզուն մեր վտանգավոր ճանապարհին: Միայն փոքրիկ Երգ երգոցի մեջ մեր լեզուն համեմատությունների բազմազան այնպիսի ձևեր է հանդես բերել, որոնցից շատերը կենդանի ու գործուն են առ այսօր: Բաղդատությունը կատարվում է **քան** կապով. Ջի բարի են (նախնական փոփոխակ **քաղցր են**) ստինք քո **քան** զգինի և հոտ իւղոց քոց քան զամենայն խունկս (Ա 1—2): Բանգի գեղեցկացան ստինք քո, քոյր իմ հարսն, քանգի գեղեցկացան ստինք քո ի գինու, և հոտ հանդերձից քոց քան զամենայն խունկս (Դ 10):

Բաղդատությունը արտահայտվում է **իբրև** կապով. «Եւ ծաղիկ դաշտաց, շուշան հովտաց: Իբրև շուշան ի մեջ փշոց, այնպես մերձաւորդ իմ ի մեջ դասերաց: Իբրև խընձորի ի փայտս անտառի, այնպես եղբորորդին իմ ի մեջ ուստերաց» (Բ 1—3): «Մեղր և կաթն ի ներքոյ լեզուի քոյ և հոտ հանդերձից քոց իբրև զհոտ կնդրկի» (Դ 11): Իբրև զթել որդան են շրթունք քո և խօսք քո գեղեցիկք. իբրև զկեղև նռան են այսք քո, բաց ի լուրջներդ (Դ 6):

Բաղդատությունը արտահայտվում է ներգոյական հոլովով. «Տէր արար զքեզ, հաստատեաց զքեզ, պատրաստեաց զքեզ յարգանդէ, **գեղեցիկդ ի կանայս** (Լ 6). Յո՛գնաց եղբորորդին քո, **գեղեցիկդ ի կանայս**»: Բաղդատությունը արտահայտվում է ստորոգելիական վերադիրի միջոցով, որը ստորոգելով հավասարեցվում է համեմատության մեջ դրվող առարկային. օրինակ՝ Եղ անուշ հեղեալ է անուն քո: Ծրար ստաշխին է Եղբորորդին իմ ինձ: Ողկոյզ նոճոյ է եղբորորդին իմ ինձ» (Ա 2, 12, 13):

Հաճախ այսպիսի ստորոգումը արտահայտվում է առանց ստորոգող հանգույցի. «Աչք քո աղանիք: Եւ ծաղիկ դաշտաց, շուշան հովտաց: Ծրթունք նորա շուշանք բղխեն զմոռս լիութեան: Զեռք նորա ոսկիք ճախարակեալք: Որովայնք նորա տախտակ փղոսկրեայ ականակապ յականց շափիղայ: Սրունք նորա սինք մարմարեայք հաստատեալք ի վերայ ոսկի խարսխաց» (Դ 1, Ե 19—15): Բաղդատությունը իրացվում է նաև որպէս կապով. «տեսի զամպարիշտն վերացեալ, բարձրացեալ որպէս զմայրս լիքանանու (Սաղմոս ԼՁ 35): Մտին հեթանոսք ի ժառանգութիւն քո, պղծեցին զտա-

նար սուրբ քո, արարին գերուսաղէմ որպէս զհիշու մրգավանդանոց (Մատ. 24 1):

Բաղդատությունը արտահայտվում է նման ամականով և նմանել բայով. օրինակ՝ «նմանեցա մեծութիւն (մեծութիւն նշանակում է հասակ) քո արմատնույ, և ստիկք քո ողկուզաց. նման է եղբորորդին իմ այժմեան կամ որթուց եղանց ի վերայ լեռանց Բերեյայ (Է 7, Բ 9): Համեմատությունների այս ձևերը միայն երգ երգոցից բաղեցինք, բայց որքան հետաքրքրական համեմատություններ կան Աստվածաշնչի մյուս գրքերում: Երբեմն համեմատությունը արտահայտվում է ծավալուն կերպով. մի նախադասություն կամ խոսքային մի հատվածի մեջ նկարագրվում է երևույթ կամ երևույթներ և ապա հաջորդ նախադասությունը կամ հատվածը դառնում է համեմատության եզր նույնպէս, այնպէս, որպէս, զորօրինակ բաղդատական դերանուններով: Օրինակ՝ Որք ասարսիին ինչէն, արդ ամաասիկ հասին ի վերայ իմ: Իբրև զծին կամ իբրև զստն որոշեալ, որ հալցի ի հասանելոյ ջերմութեան և ոչ ճանաչիցի, թէ որպէս էր, նույնպէս և ես լրայ յամենեցունց, կորեայ և տնանկացայ (Յովք 2 16—18): Մի նախանձիր ընդ չարս, մի ընդ այնոսիկ, որ գործեն զանօրէնութիւն: Զի որպէս խոտ վաղվադակի ցամաքեացին, որպէս զդաւարի խոտոյ վաղվադակի անցցեն (Մատթու 12 1—2): Որպէս փորձի ի բովս արծաթ և ոսկի, նույնպէս ընտրէ զսիրտս Աստուած» (Առակք ԺԷ 3—4): Թէպէտ և նախատի վատ, ոչ ամաշէ, նույնպէս և որ առնու ցորեան փոխ ամարանի (Առակք Ի 4): Մի ոտեր հաց ընդ առն չարական և մի ցանկանար կերակրոյ նորս. զոր օրինակ թէ մազ որ կլանէ, այնպէս ոտն և ընպէ» (Առակք ԻԿ 6—8):

Մեր գրողները Աստվածաշնչից սովորեցին շրջաբանությունների կիրառության արվեստը, սրա թույլ խոսքերը դարձան մեր խոսքի աղն ու համը, և իբրև բնաբան բարոյներ ու ճանտեր ստեղծվեցին սրանց շուրջը: Աստվածաշնչում մարդը կոչվում է որդի մարդոյ, նենգ մարդը՝ շրթունք նենգատրք, մեծախոսը՝ լեզու մեծաբան, առտուած՝ տէր երկնից, թագաւոր փառաց, տէր զօրութեանց, օտարը՝ որդի օտարաց, գառն՝ որդի խոյոյ, լեզուն՝ խեղ շրթանց. մայրս՝ յղացեալն զիս. ջրկրի՝ ի ներքոյ արեգական. ես՝ անձն իմ, մահ՝ քուն յախտենից. լալ՝ իշուցանել արտասուս. ակն՝ ճրագ մարմնոյ, արուսեակ՝ աստղ առաւօտու. զիհի՝ արիւն խաղողոյ, արիւն որթոյ, ծիածան՝ աղեղն Աստուծոյ և այլն: Իսկ սրանք իրենց բնագրում խոսքի գեղեցկության ընտիր միջոցներ են, որոնք այդ խոսքը դարձնում են

կենդանի, վատ ու պատկերավոր: Ծրագ մարմնոյ ակն է, եթէ ակն քո առատ է (այստեղ էլ ակն—լույս), ամենայն մարմինդ լուսատւ եղիցի (Մատթ. Է 22): Իշուց արտասուս մեծամեծս, և ոչ որ էր, որ միսիսարէր զնա (Ողբ Երեմայ Ա 9):

Ի ջերմս խշտեաց իրեանց տաց արհաւիրս և արբեցուցից զնոսա, զի թմբրեացին և ննջեցեն քուն յախտենից (Երեմիա ՄԱ 39): Տեսի ես զամենայն արարեալս, որ արարեալ են ի ներքոյ արեգական (Ժողովոյ Ա 14): Առեալ ամից զբեզ ի տուն մօր իմոյ և ի սենեակ յղացելոյն զիս (Երգ Ը 2):

Իսկ Աստվածաշնչի թույլ խոսքերը իմաստուն սավաճները, առածներն ու առակները այնպէս են տարածված մեր հին գրական խոսքի մեջ, որ դարձել են նրա հյուսվածքն ու հենքը և տվել են նրան յուրահատուկ քիթիական երանգ ու բնույթ: Աստվածաշնչից են անցել մեր հին գրական խոսքին ու ժողովրդին Ունայնութիւն ունայնութեանց, և ամենայն ինչ ընդունայն է (Ժողովոյ Ա 2): Վայ քեզ, քաղաք, որոյ թագաւոր քո մանուկ է (նույն տեղում Ժ 16): Շուն, որ կենդանի է, լաւ է քան զառիւծ մեռեալ (նույն տեղում Ժ 4): Որ փորէ խորիորատ, ի նոյն անկցի (նույն տեղում Ժ 8) (համեմատիր, փոս փորողը ինքն է ընկնում փորը): Պատուական է սակաւիկ ինչ յիմաստութենէ, քան զմեծ փառս անմտութեամբ (նույն տեղում Ժ 1): Ամենայն ծառ, որ ոչ առնիցէ զպտուղ բարի, հատանի և ի հոտ արկանի (Մատթ. Գ 10): Զայն բարբառոյ յանապատի (նույն տեղում Գ 3): Ոչ հացիս միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանի (նույն տեղում Գ 3): Ակն ընդ ական և առամն ընդ առաման (նույն տեղում Ե 38): Մի կալ հախտակ չարին. այլ եթէ որ ամիցէ ապտակ յաչ ճնօտ քո, դարձո նմա և զմիտն (նույն տեղում 39): Մի գիտացցէ ծախ քո, զինչ գործէ աչ քո (նույն տեղում 2 3): Ամենայն ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, և ծառ չար՝ պտուղ չար առնէ: Ոչ կարէ ծառ բարի՝ պտուղ չար առնել և ոչ ծառ չար՝ պտուղ բարի առնել (նույն տեղում Է 18): Եւ ոչ արկանեն զինի նոր ի տիկս հինս (նույն տեղում Ժ 17): Զի ոչինչ է ծածուկ, որ ոչ յայտնեցի, և գաղտնի, որ ոչ ծանցի (Ժ 26):

Այս թույլ խոսքերը հայ մարդու ամենօրյա կիրառության հյուսքն էին և՛ բանավոր, և՛ գրավոր խոսքի մեջ:

Հայ գրողը Աստվածաշնչից էր սովորում խոսքային յուրահատուկ ձևերի՝ փոխաբերությունների կիրառությունը, որոնք առաջին անգամ այնտեղ էին ներդրեն կիրառված և որոնք խոսքը ստորյա իր գործնական գործառնությունից բարձրացնում և

դարձնում են վերացական ու գեղեցիկ, անսովորական ու թարմ: Այստեղ է, որ առաջին անգամ սերը դառնում է սիրած, արդարությանը՝ արդար, երկամբն ու սիրտը՝ ինքը անձը, իմաստությունը՝ իմաստուն, ձախը՝ ձախ ձեռք, աջը՝ աջ ձեռք, կարմիր որդի՝ որդան կարմիր, և սրանց հետ մեր հին խոսքի բազմաթիվ գեղեցիկ պեսայեությունները սփռվում են հայերենում իբրև թանկագին ակնագարդեր, որոնք փայլ ու իմաստային հարստություն են հաղորդում նրան: Լուր, տէր, արդարության և նայեա ի խնդրումս իմ (Սաղմ. ԺԶ 1): Նստա յաթոռ սրբության իրոյ (նույն տեղում ԽԶ 9): Փորձեա զիս, Տէր, և քննեա զիս. փորձեա զերկկամունս իմ և զսիրտ իմ (նույն տեղում ԻԵ 2): Զի քեզ ասաց սիրտ իմ, և խնդրեցին: Ծիծաղելով գործե՛ անըզգամ գշար, իսկ իմաստությունս առն (փոխն. այր իմաստուն) միթե՞ զհամար (Առակք Ժ 23): Քանի գեղեցկացար և քանի քաղցրացար, սէր, ի փափկության քում (Երգ Է 6): Զախ նորա ընդ գլխով իմով, և աջ նորա պատեացէ զինն (նույն տեղում 6): Կարգեցէք ի վերայ իմ գւէր (նույն տեղում 4):

Աստվածաշնչում են ձև ու կերպարանք և ոճական գեղեցկություններ դարձել մեր բաների համանիշային կիրառությունները, որոնք ոչ միայն իմաստային պեսայեության թանկագին զարդեր են, այլև ունեն այն գործնական նշանակությունը, որ համախառն քաջատուն են իրենց անձանոթ զուգադիրների նշանակությունները: Համանիշ զուգադիրների այդ կիրառությունները մեր լեզվական արվեստի այն առանձնահատկություններից են, որ միշտ թարմ են ու կենդանի, և երբեք դրանցից նույնաբանության տպավորություն չենք ստանում: Ահա մի քանի օրինակներ. նստէր և լար և ողբայր Երեմայ զողբս զայս ի վերայ Երուսաղեմի (Ողբք Երեմայ Ա): Եւ քահանայք նորա հաչեն հառաչեն և յողոց հանեն (նույն տեղում 4), (Երբայական բնագիրը առաջին երկու համանիշը չունի): Եւ էր զարդարեալ բեհեզովք և կերպասովք, զորս էր կարգեալ և կազմեալ Լարովքն ծիրանեօք և բեհեզովք (Եսթեր Ա 6): Եւ չորացոյց զիս յաւուր բարկութեան սրտմտութեան իրոյ (Ողբք Երեմայ Ա 12): Հուր պատեաց զՅակոբ, հաշեաց և մաշեաց զամենայն, որ շուրջ էր զնովար (նույն տեղում Բ 3): Լուարուք, յուարուք զայս, զի ես հեծեմ հառաչեմ, և ոչ որք է, որ մխիթարէ զիս (նույն տեղում Ա 21): Որոց թիւր իցեն ճանապարհք իրեանց և կամակոր շափոք նոցա (Առակք Բ 15): Ծնունդք երկրի և որդիք մարդկան, ի միասին մեծամեծք և տնանկք

(Սաղմ. ԽԸ 3): Ամենայն նշանք և արուեստիք, զոր առաքեաց տէր առնել լերկրին Եգիպտացոյ ի փարաուն և ի ծառայս նորա և յամենայն երկիր նորա, զնշանս մեծամեծս, զձեռն հզօր և զբազուկ բարձր, զոր արար Մովսէս առաջի որդոցն Իսրայելի (Բ Օրինաց ԼԴ 11—12):

Ասվեց արդեն, որ լեզվում չկա մի այնպիսի համանիշ, որ լրիվ ծածկի մյուսին թե՛ իմաստային նրբություններով և թե՛ ոճական հողի վրա: Դրանցից յուրաքանչյուրը իր դերն ու նշանակությունը ունի և օժտում է նախադասությունը որևէ շնորհով: Բացի այս՝ մեր լեզվի համանիշները նպաստում են հին և իմաստակորույս բաների իմաստները ճշտելու և վերականգնելու: Նույնիսկ նաև բաներ, որոնք միայն իրենց համանիշի հետ են կիրառվում. օրինակ՝ հաչել քալը միշտ հառաչել բային կից է գործածվում: Համեմատիր Ուտէին զիսրայել բերանայիր ամենայն բերանով (Ես. Թ 10): Եւ անկանորդք (անկարորդք) կօշկաց նոցա՝ հողաթափք իրեանց հնացեալք և կարկատեալք յոսս իրեանց (Յես. Թ 5): Զնշանս և զարուեստս, զոր արար ընդ իս բարձեալն, հաճոյ թուեցաւ առաջի իմ պատմել ձեզ (Դան. Գ 99): Արդ լուր դու զտեսիլ երագոյն իմոյ, զոր տեսի (նույն տեղում Դ 6): Այլ եփրեմ այս չար, զհետ եղև խորշակի. զօրհանապազ զնանրություն և զանոտիս յաճախեաց (Ովսէ ԺԲ 1): Զուեցուք զնստուք, և երթիցուք զուղղորդն (Ծնունդք ԼԳ 12): Իբրև լուսն, ստրջացան արքն և սրտմտություն էր նոցա յոյժ զվարձանս և զօժիտս, և տաց, որչափ և ասիցէք (նույն տեղում 12): Զի զարհուրեացեն և երկեցուցեն զիս (Նեեմ. Զ 14): Զթաղամասաւորն և զմալեալն և զքաճաարտուն և զհատեալն մի մատուցանիցես տեսուն (Ղևտ. ԻԲ 24): Ուշադրություն դարձրեք վերջին համանիշների վրա: Մեր նոր լեզվում չեն մնացել թաղամասաւոր, մալեալ, քաճաարտո, հատեալ, որոնք բոլորն էլ նշանակում են կուրտ, կրտված: Եթե սրանք իրար հետ իբրև համանիշներ չկիրառվեին, առնվազն թաղամասաւոր և քաճաարտո բաները կմտնեին այնպիսի բաների շարքը, որոնց իմաստները մուր են մեզ համար առ այսօր:

Մեր թարգմանիչները հայ ժողովրդի լեզվի ընդերքից դարձվածքների ամբողջ գետեր են բխեցրել, և դրանք ծովացել են Աստվածաշնչի մեջ իբրև հարստություն և իբրև խոսքի ոճավորման գեղեցիկ միջոցներ: Առաջինը Աստվածաշնչում է, որ պարզ բայեր կիրառելու փոխարեն առաջնությունը տվել է բաղադրյալ ձևերին. աղօթել-ուն, գերադասել է աղօթս առնել. Յաղօթս կալ,

աղօթք մատուցանել, երկրպագել-ուն՝ երկիր պազանել, պատասխանել-ուն՝ պատասխանի տալ, պատասխանի առնել, հետևելուն՝ գհետ երթալ, այցելել-ուն՝ այցելութիւն առնել և այսպէս կուտակվել են բաղադրյալ կամ հարադրական բայերի անթիվ շարքեր իրենց ժողովրդական գեղեցիկ արտահայտչությամբ, իմաստային ընդարձակությամբ, ու նրբերանգներով, դրանց համանիշ ու զուգադիր ձևերի առատությամբ. այսպէս՝ աւարել բայի դիմաց ունենք բաղադրյալ աւար հարկանել, աւար ածել, լաւարի ածել, աւար տանել, յաւարի տոնոլ, աւար հարկանել: Այցելել բայի փոխարեն ունենք այց առնել, այց ելունել, յայց լինել, այցելու լինել, այցելութիւն առնել: Երկնցուցանել, զարհուրեցուցանել բայերի հետ Աստվածաշնչում ունենք ահ մատուցանել, երկիւղ մատուցանել, ահ տրկանել, ահ տալ, երկիւղ տալ. իսկ զարհուրել, երկնել բայերի հետ ունենք ահ անկանել, լի լինել ահիւ, ահ պատել, զահի հարկունել, ահ ունել՝ կայնոլ, ահ հասանել: Ամաշել բայի հետ իբրև զուգադիր համանիշներ են կիրառվում ամօթ զգենոլ, յամօթ՝ յամօթի լինել, զամօթի՝ յամօթի հարկանել, ամօթով լինել, ամօթով կալ, ամօթ կրել: Այսպիսով բայական զուգադիրների հետ Աստվածաշնչում կան հազարավոր միմյանց զուգադիր բայականակցություններ, որոնք քամված են համաժողովրդական հայերենի ընդերքից և որոնք համապատասխան դարաշրջանի լեզվաբանական զարգացման պահանջի անընդհատ փոփոխվել և հարմարվել են տրվալ շրջանի լեզվաբանական վիճակին՝ մի կողմից գրական լեզվում, իսկ մյուս կողմից՝ բարբառներում ու խոսվածքներում: Ահա մի քանի համանիշ օրինակներ ևս, պահ արկունել, սահ դնել, պահ կարգել, պահ մատուցանել (կալանալորել, կալանքի տակ պահել), առաջի առնել, առաջի արկանել, առաջի կացուցանել: Սուգ առնոլ, սուգ զգենոլ, սուգ ունել, սուգ առնել, ի սուգ նստել: Սպաս առնել, ի սպասու կալ, սպաս ունել, սպաս տանել, փորձ առնել, փորձ առնոլ, փորձ գտանել, փորձ խնդրել, փորձ տալ, փորձ տեսանել, փորձ փորձել, ի փորձ արկանել: Յանդիման առնել, յանդիման լինել, յանդիման կալ, յանդիման կացուցանել, յանդիման հարկանել, յանդիման հանել:

Աստվածաշնչի ծովածավալ դարձվածաբանությունը իր կազմության պէս-պէս ձևերով նման մի աշխատանքով չի սպառվի: Առանձին գրքի ու քառարանի գործ է, ուր պետք է ուսումնասիրվի և ներկայացվի ամբողջությամբ քառարանային ձևով ու բացատրություններով:


Մեր լեզվի բառերի իմաստային հարստությունները նույնպէս առաջին անգամ կիրառության ու ցուցադրման լայն առարկեղ են իջել Աստվածաշնչում: Միևնույն բառի իմաստային տարբեր դաշտերը ոչ միայն նոր հասկացություններ են արտահայտում, այլև ռեաբանական բազմազան հարցեր են լուծում, այն բառական միջավայրում, որտեղ դրանք հանդես են գալիս: Աստվածաշնչում արժարժվում են կրոնապաշտամունքային բազմազան հարցեր՝ պատմական միջավայր, կենցաղային, պետական կյանք, ռազմական սխրագործություններ, իրավական, տնտեսական ու ստորյա հարաբերություններ: Այստեղ լայն չափերով բնությունը օգտագործվում է իբրև նկարագրության նյութ և մանավանդ իբրև հեմարան համեմատության, հակադրության, զուգադրության և խոսքի այլ ուղղակի և անուղղակի կազմավորման համար: Բովանդակության այս ծովածավալ հարստության համար առանձին-առանձին բառեր գտնել և գործադրել անհնար մի քան էր հալոց լեզվի համար, որ գրավոր խոսքի մեջ փորձ չունեն: Առհասարակ ոչ մի լեզու չի կարող այդքան բազմապիսի հասկացությունների համար առանձին բառեր տրամադրել: Այստեղ միշտ օգնության է գալիս բառի բազմիմաստությունը, որ հայերենը Աստվածաշնչում լիովին մեջտեղ հանեց զարմանալի նոխարանք ու նրբերանգներով: Ահա մի քանի օրինակներ միայն իբրև ցուցադրության և իմաստային նրբերանգների:

Հարկանել բայի առաջին իմաստն է գանահարել, ձեռել, ինչպես՝ (Մովսես) «Ետես այր մի եգիպտացի, զի հարկանելը զոմն երբայեցի» (Ելք Բ 11): Այս հիմնական և բնութագրող իմաստները Աստվածաշնչում փարթամ ծառի նման ճյուղավորվում են: **Հարկանել** բայը իր իմաստային զուգադրությամբ ոչ միայն անկախ է հանդես գալիս, այլև դարձվածների մեջ, որ նշան է, թե դա հայերենի ամենագործածական բայերից մեկն է: **Գանահարել, ձեռել** իմաստից առաջանում է **հարու տալ**: Իսկ եթե հարցն ցույ գալը կամ զկին (Ելք ԻԱ 28): Սրանցից ծագում են **կոտորել, ջարդել**: Եւ անցից բնդ ամենայն երկիրդ Եգիպտացոց ի գիշերի յայսմիկ և **հարից** զամենայն անդրանիկ երկիրդ Եգիպտացոց ի մարդոյ մինչև յանասուն (Ելք ԺԲ 12): Սրան զուգահետ, գուցե և նախորդ իմաստից առաջ է կազմվել **հարկանել** բայի **սպանել** նշանակությունը: Ինչպես՝ «Եւ ասէ ցնոսա Ռութեն. Մի հարցուք զդա յոգի... (դարձվածք է) մի հեղուք արիւն (Ծնունդը Լ: 22): Սրանից հետո դժվար է ասել, թե առաջնությունը որ

իմաստին պետք է տալ: Բերում ենք օրինակները մասնադասարաններում առանց որևէ մեկին նախապատվություն տալու: «Երգարան, որ առ դուրս տանն կային, հարին կուրությամբ (կուրացրին) ի փոքրու մինչև ցմեծն» (Մանուկ ԺԺ 11): Խայթել, կծել. «Երեղիցի Դան օձ դարանակալ ի ճանապարհի հարկանել զգարշապար. երկվարի (Մանուկ ԽԺ 17): Կառուցել, կանգնեցնել. «Երեղիցի եհար զխորան իւր ի լերինն» (նույն տեղում ԼԱ 25): Լցնել, սփռել. «Ահա ես հարից զամենայն սահմանս քո գորտի» (Ելք Ը 2): Փչացնել, ոչնչացնել, տակով անել: Երեղիցի քանցար, որ ի դաշտի էր, եհար կարկուտն (Ելք Թ 25): Նվազել, փչել: Երեղիցի ուրախության ձերոյ յ յամասագլուխս ձեր հարկանիցէք փող (Թիւք Ժ 10): Մափ զծափի հարկանել (ծափահարել. Թիւք ԻԴ 10): Կտրատել, կտրել. Հրամայեաց զկառաւիսն հարկանել (Բ Մակ. Դ 30): Մի հարկանիցես ծառատունկն անցա (Բ Օրենք Ի 19): Հիվանդացնել, վարակել. Հարցէ զքեզ տէր կեղով Եգիպտացոցն ի թանչիւք (Բ Օրենք ԻԸ 27): Հարցէ զքեզ տէր յիմարութեամբ և շացութեամբ և ապշութեամբ մտաց (Մտքով կհիմարացնի, կըշրացնի և կապշեցնի տերը (Բ Օրենք ԻԸ 28): Ուտել. Զարդիւնս երկրի քո հարցէ թրթուր (Բ Օրենք ԻԸ 42): Տանջել, տվայտանք պատճառել. Ընդէ՛ր հարկանել զքեզ սիրտ քո, ո՛չ լաւ եմ ես քեզ քան զտասն որդի (Ա Թագ. Ա 8): Գրավել, առնել: (Դաւիթ) Եհար զՍիկերակ և այրեաց զնա հրով... և ոչ սպանին զայր և զկին (Ա Թագ. Լ 1—2): Տապալել. ցած գցել. ընդէ՛ր ոչ հարեք զնա ընդ գետին (Բ Թագ. ԺԸ 11): Նետել. Երեղիցի Զովար երիւսն ետու ի ձեռին իւ-

րում և եհար զնոսա ի սրտի Արիստողոմայ (նույն տեղում 14): Առ դու քեզ գետու... ձգես և հար զգետինդ (Դ Թագ. ԺԳ 18): Պատերազմ հարկանել (պատերազմել: Ա Մնաց. ԺԲ 8): Հարին մարտ պատերազմի (Ա Մակ Ժ 75): Բռնել հար զխրատու իմմէ (պահիր իմ խրատը, հետևիր իմ խրատին (Առակք Դ 13): Բռնել հարեալ համբուրեաց զնա (բռնեց համբուրեց նրան: Առակք Է 13): Որ ոտն հարկանել կորուսելուն, ոչ արդարացի (արհամարհել. Առակք ԺԷ 5): Արք անօրէնք հուր հարից զքաղաքէ (հրդեհել. Առակք ԻԺ 8): Վարսել հարկանիցէ ցից յորմս նորա (Սիրաք ԺԴ 25): Սարսափեցնել, վախեցնել. Տեսլեամք հարկանել զիս (Յովք Է 14): Հանդիմանել, նախատել. Հարցէ զերկիր քանի բերանոյ իւրոյ (Ես. ԺԱ 4): Հարի զձեզ տապով և արկի զձեռն դաշուկն (տապահարել. Ամովս Դ 9): Հարցէ զմեծ ապարանսն կործանմամբ (կործանել: Ամովս Զ 12): Երեղիցի զքեզ ապականութեամբ (հիվանդացնել. Միքէ Զ 13): Հարի զձեզ անարդարութեամբ (անբերրի դարձնել: Անգէ. Բ 17): Հարից զամենայն Երիվար տագնապա և զհեծեալ նորա յիմարութեամբ (տագնապահարել, հիմարացնել: Զաք. ԺԲ 4): Խցել: Լուսն Դանիել եղ, ձիւք և ճարպ և մազ և եփեաց ի միասին և արար զնդակս և եհար ի բերան վիշապին (Դան. ԺԴ 26): Ամրացնել: Առ սպունգ լի քացախաւ, հարեալ լեղեզան, ետ ըմպել նմա (Մատթ. ԻԶ 48): Հիշենք ման գան հարկանել. Մշակքն գան հարին զնա (Ղուկ. Ի 10): Հարկ հարկանել (հարկ վճարել, հարկվել). Կացուցին զնա ի տեղի մի հարկ հարկանել (Ա Մակ. Ը 7):

(Ծարումակելի)



Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵՔԵՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ ԱՆՏԻՈՔԱՅԻ* (354—407)

Ա. ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵՔԵՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Հույն եկեղեցու հայրապետների մեջ ոչ մեկը այնքան ծավալուն, բազմաժանր ու հարուստ մատենագրական վաստակ չի թողել, որքան Ա. Հովհան Ոսկեքերանը:

Ոսկեքերանի մատենագրական վաստակը եւս այստեղ ներկայացվում է հիմնականում ըստ Quasten-ի ուսումնասիրության¹:

Ոսկեքերանը միակն է Անտիոքի Աթոռի և դարձի ներկայացուցիչների մեջ, որի մատենագրական վաստակը մեզ հասել է համարյա ամբողջությամբ²:

Այս հանգամանքը բացատրվում է ամենից առաջ հեղինակի անձնավորության մեծ հմայքով և նրա գրվածքների գաղափարական-բարոյական գեղեցկությամբ, արտահայտչականության կատարելությամբ և սլատկերավորությամբ, լեզվի և ոճի Ատիկյան հատկանիշներով: Ոսկեքերանի ոճը «ներդաշնակ արտահայտությունն է Ատիկյան ոգու»³:

Եկեղեցու հայրապետներից ոչ մեկը իր կյանքով, գործունեությամբ և մատենագրական վաստակով չի արժանացել այնքան իրավ հիացումների, սիրո և ուշադրության, որքան Ոսկեքերանը:

Մեծ հայրապետի անվան ու վաստակի շուրջ ստեղծված համաքրիստոնեական հիացումների արտահայտությունների մեջ

իրենց բաժինն ունեն հաս, ըստ մասնագետների, նրա կյանքի ողբերգական իրադարձությունները, նրա նկարագրի արտակարգ անկեղծությունն ու մաքրությունը, նրա գործունեության մեջ հանդես եկող ուղղամտությունն ու արդարադատությունը, կարեկցանքն ու նվիրումը, որոնք մեծացրել ու հռչակել են նրա փառքն ու համբավը:

Այս բոլորով Ոսկեքերանը հանդիսանում է հույն եկեղեցու մեծավաստակ հայրերի մեջ ամենաշնորհալիներից մեկը և քրիստոնեական վաղեմիության ամենից հմայիչ անձնավորությունը: Նրա պերճախոսության բացառիկ տաղանդը նրան քերեց ՈՍԿԻՔԵՐԱՆ հայարտ տիտղոսը, որը գրավեց նրա իրական անվան տեղը եկեղեցու պատմության մեջ Զ դարից սկսած⁴:

Ոսկեքերանը գրել է բազում մեկնություններ, ճառեր, ներքողյաններ, համակներ, որոնք ընդհանրապես կրոնական քարոզչության ձև ունեն: Այդ գրվածքները միաժամանակ հեղինակի սուրբ ժամանակահատվածի, Անտիոքի և Կ. Պոլսի եկեղեցական, ընկերային, մշակութային և պետական կյանքի պատկերագրող պատմությունն են ներկայացնում և հանդիսանում են անգնահատելի գանձարան աստվածաբանների, պատմաբանների և հնաբանների համար:

Ոսկեքերանի մեծ համբավը որպես հոեւորի, որի հետ այդ թաւում մասամբ միայն Օգոստինոսը կարող է համեմատվել ըստ մասնագետների, խոր ազդեցություն է թողել թե՛ իր ժամանակակիցների և թե՛ հետնորդների վրա:

* Գարունակված «Էջմիածին» ամսագրի 1977 թվականի № ԺԲ-ից:

¹ Johannes Quasten. Patrology, III, էջ 429—483:

² Նույնը, էջ 429:

³ Նույնը:

⁴ Նույնը:

Մեզ հասել են նաև Ոսկերեքի գործերի բազում թարգմանություններ Ե դարից սկսած: Դրանցից հնագույններն են նրա գործերի լատիներեն, ասորերեն և հայերեն թարգմանությունները, որոնք արժեքավոր են մանավանդ Ոսկերեքի մատենագրական ժառանգության գիտական-քննադատական բնագրեր կազմելու համար:

Ոսկերեքի գործերն ունեցել են հին և նոր բազում հրատարակություններ, և՛ ամբողջական, և՛ հատվածական:

Migne-ի հայրաբանական հրատարակությունների մեջ Ոսկերեքի մատենագրական վաստակն ամփոփվել է 47—64 սովոր հատորներում⁵:

Ս. Հովհան Ոսկերեքի մատենագրական վաստակն ըստ բովանդակության և թեմատիկայի բաժանվում է հետևյալ մասերի⁶.

1. Քարոզ-մեկնություններ:
2. Դավանաբանական և հակաճառական գրվածքներ:
3. Բարոյախոսական ճառեր:
4. Եկեղեցական մեծ տոների առթիվ խոսված քարոզներ:
5. Ներքողյաններ:
6. Հավիտ Կատարածի քարոզներ:
7. Ժառեր (բահանայության, վանական կյանքի, դաստիարակության, կուսության, այրիության, տառապանքի մասին):
8. Նամակներ:

1. ՈՍԿԵՐԵՔԻ ՔԱՐՈԶ-ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ոսկերեքի մատենագրական ողջ վաստակում ընդարձակ և կարևոր տեղ են գրավում նրա քարոզ-մեկնությունները, որոնցում նա հանդես է գալիս որպես **հոգիների ճշմարիտ բժիշկ**⁷: Նա հմտորեն ու համարձակ ախտորոշում է իր ժամանակի քարոջական հիվանդությունները, նշում դրանց բուժման հնարավորություններն ու միջոցները, միաժամանակ խստորեն դատապարտում հասարակության կյանքում գոյություն ունեցող տգեղ ու այլանդակ քարքերն ու արարքները, եսամոլությունը, հեշտասիրությունը, տգիտությունը, կաշառակերությունը և այլ մոլություններ, որտեղ էլ որ դրանք հանդես գան, թե՛ պալատում, թե՛ հանրության կյանքում:

Այդ քարոզ-մեկնությունների մեծ մասը բավականին ընդարձակ է և արտասանվել է հաճախ երկու ժամվա ընթացքում, բայց

այդ առթիվ տեղում արտահայտված համաժողովրդական համակրանքը, հաճախ եկեղեցիներում կրկնվող ծափահարություններն ու խանդավառությունները ցույց են տալիս, որ դրանցում տեղ գտած մեծ Հայրապետի, եկեղեցու ճշմարիտ և բազմաշնորհ Վարդապետի խոհերն ու զգացումները հասնում էին ունկնդիրների սրտին ու գիտակցությանը և նրանց պահում սկզբից մինչև վերջ լարված ու հափշտակված հոգեվիճակում, մտահափշտակության և հոգեկան վերացման մեջ. «Հոյակապ է Ոսկերեքի երևակայությունը. քրիստոնեական կենցաղավարության մասին նրա ունեցած խոր ու անկեղծ գաղափարները նրան արժանի են դարձնում մեր հարգանքին ու հիացումին, նույնիսկ այսօր»⁸:

ա. Մեկնողական քարոզներ:

Ոսկերեքի քարոզներն ու ճառերն ընդհանրապես մեկնողական նկարագիր ունեն գրված կամ խոսված Հին ու Նոր Կտակարաններից ընտրված բնաբանների վրա: Սույն քարոզներից և ճառերից շատերն արտասանվել են 386—397 թվականներին, հիմնականում Անտիոքում, երբ Ոսկերեքը քարոզիչ էր նշանակվել Ֆլավիանոս հայրապետի կողմից, պաշտոն, որը նա կատարում է մեծ նախանձախուժությամբ, հմտությամբ և հեղինակությամբ, իրեն ապահովելով միջեկեղեցական կյանքում Անտիոքից դուրս նաև լայն համբավ, անուն և հռչակ, որպես եկեղեցու **Ոսկի-Բերան**:

Մեկնողական բնույթի իր քարոզների և ճառերի մեջ Ոսկերեքը կանգ է առել միշտ Աստվածաշնչի բնագրերի պատմական-քերականական իմաստի և նշանակության վրա, ինչ որ ավանդությունը և ուղղությունն էր Անտիոքի աստվածաբանական դպրոցի, քան ա. Գրքի այլաբանական իդեալական իմաստի վրա, ինչ ձգտումն էր և ուղղությունը Ալեքսանդրիայի աստվածաբանական դպրոցի:

Ոսկերեքն Աստվածաշնչի բնագրի պատմական հասկացողությունը հմտորեն կապակցել է կյանքի գործնական, անմիջական ըմբռնումների հետ, ունկնդիրների ռաստիարակության ու նրանց հոգևոր առաջնորդության համար:

Սույն կարգի քարոզների ու ճառերի մեջ Ոսկերեքի մտածման խորությունն ու արտահայտչականության տիրական հատկությունը բացառիկ են, եզակի, տպավորիչ ու ազդեցիկ, նույնիսկ այսօրվա բժախնդիր ընթերցողի համար: Երբ իր քարոզներում ու ճառերում Ոսկերեքը խոսում է Հին ու Նոր Կտակարանների մասին, նա հավասար

⁵ Նույնը, էջ 430:

⁶ Նույնը, էջ 438—478:

⁷ Նույնը, էջ 438:

⁸ Նույնը:

քապես «իր կազմածի մեջ է» և բացառիկ տաղանդն ունի իր ընտրած բնաբանները պատշաճեցնելու իր ժամանակի կյանքի պայմանների և ընկերային-հասարակական հրատապ հարցերի լուսաբանմանը:

Ոսկերեքանի մեկնողական քարոզները միաժամանակ համարվում են ծիսական-պաշտամունքային գործնական ձեռնարկներ, որոնք մատնացույց են անում, թե ինչպես պետք է կատարվեն եկեղեցական ընթացիկ տարում պաշտամունքներն ու սրբազան արարողությունները, և նշում այդ քարոզների ընթերցման կարգը բյուզանդական եկեղեցիում Մեծ պահոց և Զատիկի շրջանում:

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՅԱՆ ՔԱՐՈԶ-ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա. Քարոզ՝ Ծննդոց գրքի վրա⁹:

Ոսկերեքանի քարոզաձև մեկնությունների հնագույնն է համարվում Ծննդոց գրքի մասին խոսած նրա քարոզների երկու շարքը: Առաջին շարքը ընդգրկում է Ծննդոց գրքի Ա—Գ գլուխները և բաղկանում է 9 քարոզներից, արտասանված 386 թվականին Անտիոքում: Երկրորդ շարքը բաղկացած է 67 քարոզներից, որպես ամբողջական մեկնություն Ծննդոց գրքի Դ—ԻԸ գլուխների վրա: Սույն քարոզների շարքն արտասանվել է դարձյալ Անտիոքում 388 թվականին: ք. Քարոզներ սաղմոսների վրա¹⁰:

Ոսկերեքանի քարոզչական-մեկնողական վաստակի գեղեցկագույն էջերն են հանդիսանում 387—397 թվականներին Անտիոքում սաղմոսների ընտրովի բնաբանների վրա խոսած նրա 58 քարոզները, որոնք ավելի «բացատրություններ» կամ մեկնություններ են սաղմոսների մասին, քան քարոզներ¹¹:

Սույն քարոզ-մեկնություններում Ոսկերեքանը խոսում է ընդհանրապես իր «սիրելի թեմաների»՝ առաքինության և մոլության (Սաղմ. Ծ, ԾԽԲ, ԾԽԶ), ճշմարիտ աղոթքի կարևորության (Սաղմ. Է 1, ԾԽԱ), եկեղեցիներում սաղմոսներգության կարգի (Սաղմ. ԽԱ, ԾԼԴ, ԾԾ), ս. Պետրոսի Հոռմում բնակության (Սաղմ. ԽԸ), դեպի սուրբ երկիր՝ Երուսաղեմ կատարված ուխտագնացության (Սաղմ. ԾԹ), քահանայական պաշտոնի վեհության (Սաղմ. ԾԺԳ, ԾԺԶ), կոտորյան (Սաղմ. ԽԴ, ԾԺԴ) և արժանավորապես ս. Հաղորդություն ստանալու մասին (Սաղմ. ԾԼԳ):

⁹ Աստվածաշունչ մատենան, 1895, Կ. Պոլիս, Կրքնդոց, էջ 1—50:

¹⁰ Աստվածաշունչ մատենան, նույնը, էջ 557—654:

¹¹ Quasten, նույնը, էջ 435:

Ոսկերեքանի սույն բնույթի քարոզներում կան նաև հակաճառություններ արիստական, մանիքեական և Պողոս Սամոսատցու մոլությունների դեմ (Սաղմ. ԽԶ, ԾԹ, ԾԽԸ)¹²:

Ոսկերեքանը սաղմոսների մեկնության մեջ ընդհանրապես օգտագործում է սաղմոսների Յոթանասնից հունարեն քարոզմանությունը, ինչպես նաև այլ թարգմանություններ: Այնպես որ նա կողք-կողքի օգտագործել է սաղմոսների չորս թարգմանություններ, նույնիսկ «եբրայերեն ու ասորերեն» բնագրերը¹³:

գ. Քարոզներ Եսայիի գրքի վրա¹⁴:

Ոսկերեքանը Եսայի մարգարեի գրքի Ը-րդ գլխի մասին գրել է 6 քարոզ-ճառեր, որոնց մի մասը նա արտասանել է Անտիոքում, իսկ մյուս մասը՝ Կ. Պոլսում: Ոսկերեքանի «Եսայիի վրա գրած ամբողջական մեկնությունը ավելի ընդարձակ է հայերեն թարգմանության մեջ և համարվում է հանձարեղ գործ»¹⁵: Ոսկերեքանը գրել է նաև 5 քարոզներ Սամվել մարգարեի մոր՝ Աննայի (Ա Թագ. Ա—Բ 21) և 3 քարոզ՝ Դավթի ու Սալոմոնի վրա (Ա Թագ. ԺԶ 21):

Հասել են մեզ նաև հատվածներ Ոսկերեքանի Երեմիայի, Դանիելի, Առակաց և Հորի գրքերի մեկնություններից¹⁶:

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ-ՔԱՐՈԶՆԵՐ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳՐԲԵՐԻ ՎՐԱ

Ոսկերեքանը քարոզակերպ հանձարեղ մեկնություններ է գրել չորս Ավետարանների վրա: Մեզ հասել են հատվածներ միայն Մատթեոսի և Հովհաննեսի Ավետարանների մեկնություններից:

ա. Մեկնություն Մատթեոսի Ավետարանի վրա¹⁷:

Ոսկերեքանը 90 ճառեր-քարոզներ է գրել Մատթեոսի Ավետարանի վրա, որոնք համարվում են հնագույն և ամբողջական մեկնություններն առաջին Ավետարանի մասին, հայրաբանական գրականության շրջանից:

Սույն ճառերն արտասանվել են 390-ին Անտիոքում: Ոսկերեքանը հարձակվում է նաև Մանիքեական աղանդավորների վրա բազում ստիթներով և մերժում նրանց այն

¹² Մանիքեության աղանդի մասին տես Երվանդ վրդ. Տեր-Մինասյանց, Ընդհանուր եկեղեցական պատմություն, ս. Էջմիածին, 1908, էջ 186—87, 190, 243, 301—303: Պողոս Սամոսատցի, տես նույնը, էջ 160—161, 174, 245, 260:

¹³ Quasten, նույնը, էջ 435:

¹⁴ Աստվածաշունչ, նույնը, էջ 704—767:

¹⁵ Quasten, նույնը, էջ 431:

¹⁶ Նույնը, էջ 436:

¹⁷ Նոր Ատակարան, Մալք Աթոռ, 1975, էջ 3—91:

սխալ կարծիքը, թե Հին Կտակարանը խորապես տարբերվում է Նոր Կտակարանից, ինչպես նաև Հին Ուխտի Աստվածը, որ խստության, վրեժխնդրության և արդարության Աստվածն է, տարբերվում է Նոր Ուխտի Աստծուց, որ է սիրո Աստվածը: Ոսկեքերանը ցույց է տալիս, որ Հին և Նոր Կտակարանների Աստվածը նույն օրենսդիրն է, միայն այն տարբերությամբ, որ Հին Ուխտը նախապատրաստությունն էր Նորի, սովորը նրա: Հիտուսի պատվերները լրացնում են միայն հրեաներին շնորհված Մովսիսական օրենքը:

Ոսկեքերանն Ավետարանները համարում է Աստվածային Թագավորի նամակները և բացատրում նրանց բովանդակության մեջ գոյություն ունեցող և արտաքինապես թվացող անհամաձայնությունները որպես ապացույց Ավետարանների հեղինակների ինքնուրույնության և Ավետարանների միմյանցից ունեցած անկախության:

Ոսկեքերանի վերոհիշյալ ճառերը միաժամանակ ուղղված են արիոսական մոլորությունների հերքմանն ու ջախջախմանը և Որդու հավասարությանը Հոր Աստուծո հետ, նույնիսկ այն դեպքում, երբ Որդին Ավետարաններում խոսում է իր մասին մարդկային ձևով, ակնարկելով իր մարդկային բնությունը: Քրիստոսի ավետարանական առակների ոսկեքերանյան մեկնաբանությունը համաձայն է, և հեղինակի բարոյական ու խստակրոն խրատները ցույց են տալիս նրա ժամանակի սովորություններն ու կենցաղը:

Սույն մեկնություն-քարոզներում Ոսկեքերանը թատրոնների դեմ հաճախ ասում է դատապարտության խիստ խոսք:

69 և 70 ճառերը նվիրվել են վանականության գովքին: Ոսկեքերանը նկարագրում է վանականների կյանքի ձևը, նրանց զգեստները և երգեցողությունը՝ հակադրելով այն քեմի թատերական երգերին: Նա քաջալերում է վանականների տարած հաղթանակը մոլորությունների դեմ ու նրանց նվիրումը գնահատում որպես տիպար ու օրինակելի բոլորի համար: Հանձնարարում է նրանց սիրել ողորմածությունը և աղքատները համարել Քրիստոսի և քրիստոնյայի եղբայրներ:

Մատթեոսի Ավետարանի մեկնության հայերեն թարգմանությունը կատարվել է Ե դարի սկզբներին: Այս մասին կիսովի ստորև ոսկեքերանյան գործերի հայերեն թարգմանության և 1826 թվականի 53 հատվածների տպագրության առիթով:

Մատթեոսի ոսկեքերանյան մեկնության հատվածներ թարգմանվել են ասորերենի (Ե դար), արաբերենի (Ժ դար), վրացերենի (ԺԱ դար): «Սույն թարգմանություններին ոչ մեկը մինչև այժմ չի հրատարակվել»¹⁸, բացի հայերեն թարգմանության հրատարակությունից:

բ. Մեկնություն-ճառ Հովհաննոս Ավետարանի վրա¹⁹:

391 թվականին Ոսկեքերանը Հովհաննոս Ավետարանի մասին արտասանել է 88 ճառեր, յուրաքանչյուրը 10—15 րոպե տևողությամբ: Սույն ճառերը արտասանվել են առավոտյան ժամերգության ընթացքում և կրում են ավելի հակաճառական բնույթ և ուղղված են արիոսականների դեմ, որոնք, Հովհաննոս Ավետարանի քրիստոսաբանական հատվածները և հատկապես Ա. գլուխը²⁰ սխալ մեկնելով, քարոզում էին, թե Որդին «ի լեռներն է ձոր» չէ: Ոսկեքերանն այդ ճառերում զարգացնում է մանավանդ Քրիստոսի մարդկությանը «ունայնացուց գանձն» (Փիլյ. Բ 7) առաքելական բանաձևի ուղղափառ հասկացողությունը: «Հիտուս Քրիստոս, որը Աստուծո կերպարանքով էր, բայց Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց, այլ իր անձը ունայնացրեց, ծառայի կերպարանք առնելով»: Ոսկեքերանն այդ ճառերում ապացուցում է նաև, որ հերետիկոսներն իրավունք չունեն չարափոխելու Հովհաննոս Ավետարանի բնագրերը ի պաշտպանություն իրենց մոլոր ուսմունքին, որովհետև ավետարանական այդ բնագրերը կատարելապես համաձայն են եկեղեցու դավանած ճշմարիտ վարդապետությանը:

Հովհաննոս Ավետարանի վրա խոսած ոսկեքերանյան ճառերն ունեն մասնավոր քրիստոսաբանական նկարագիր և տարբերվում են իրենց ձևով, բովանդակությամբ և կազմությամբ հեղինակի մյուս ս. Գրական գործերից:

գ. Գործք Առաքելոց գրքի վրա գրված ճառերը²¹:

Ոսկեքերանը 55 ճառ-մեկնություններ է գրել Գործք Առաքելոց-ի վրա: Սույն ճառերը, հեղինակի իսկ վկայությամբ, գրվել են Կ. Պոլսում 400 թվականին, շարունակական հոգեկան տագնապների, եկեղեցական-քաղաքական հուզումների մեջ: Հակառակ տագնապալի, անհանդարտ այս հոգեվիճակին, սույն ճառերը ևս աչքի են ընկնում ոսկեքերանյան հուսակ, իմաստալից և հոգեչեն մեկնությամբ:

Ոսկեքերանը դառնությամբ նշում է, որ

¹⁸ Quasten, նույնը, էջ 488:

¹⁹ Նոր Կտակարան, նույնը, էջ 248—316:

²⁰ Նոր Կտակարան, նույնը, էջ 248—251, «Եւ Բանն մարմին եղև»:

²¹ Նույնը, էջ 317—400:

շատ-շատերը ոչինչ չգիտեն այդ սրանչեղի գրքի բովանդակության և նրա հեղինակի մասին, ուստի ինքը մախաձեռնել է Գործը Առաքելոց-ի մեկնության, որպեսզի այդ գանձը անթեղված չմնա մարդկանց աչքերից: Արդարև այդ գիրքը նվազ օգուտ չի բերում մեզ, քան Ավետարանները, որովհետև այն լեցուն է քրիստոնեական իմաստությամբ և հատակ վարդապետությամբ, ճանաչման ինչ վերաբերվում է ս. Հոգուն: Հետևաբար պետք չէ թեթևությամբ անցնել այս գրքի կողքով, այլ այն ուսումնասիրել հանգամանորեն²²:

Կրոնական, քարոշական, դաստիարակչական հարցերում Ոսկերեքանը Գործք-ի մեկնության մեջ քննության է առնում մասնավորաբար մկրտության խորհրդի ուղ կատարումը, դաստապարտում այդ պրակտիկան, խոսում հրաշքների բնության և նարատակների մասին, հակադրելով դրանք մոգականությանը և կախարդությանը: Շեշտում է աղոթքի կարևորությունը, ս. Գրոց ուսումնասիրությունը, դաստապարտում սուտ երդումները:

դ. Մեկնողական ճառեր Պողոս առաքյալի թղթերի վրա:

Ոսկերեքանի մեկնողական-քարոզչական վաստակի մեծագույն մասը նվիրվել է Հեթանոսաց Առաքյալի՝ ս. Պողոսի կյանքին, գործունեությանը, հմայիչ անձնավորությանը և նրա թղթերի մեկնությանը, ուր պայծառորեն երևում են Ոսկերեքանի քննադատության հզոր ուժը, նրա մտածողության համապարփակ խորությունը, լեզվի և ոճի անկրկնելի գեղեցկությունը: Ոսկերեքանը «Պողոսի մեջ տեսնում է կատարյալ տիպարը հոգիների հովվի, մի ազնվական անձնավորություն, որը անվախ է, անանձնական, իրեն նման հանդուգն, բուն քննադատությամբ»²³:

Թուղթ առ Հռովմեացիս²⁴:

Ոսկերեքանն Անտիոքում 381—397 թվականներին 32 ճառ—մեկնություններ է գրել Պողոսի առ Հռովմեացիս թղթի վրա, որը «նույն թղթի վրա գրված հայրաբանական մեկնությունների ամենալիզանալոր և հեղինակի ամենագեղեցիկ գործն է համարվում»²⁵:

Հավանական է թվում, ըստ մասնագետների վկայության, որ Ոսկերեքանը սույն ճառ-մեկնության մեծ մասը գրել է, երբ ինքը դեռ սարկավազ էր: Սույն մեկնության մեջ Ոսկերեքանը թեև շոշափում է դավա-

նաբանական-եկեղեցական քաղում հարցեր, բայց հանգամանորեն չի զբաղվում դրանց բազմակողմանի և խոր ուսումնասիրությամբ: Հեղինակը հետաքրքրվում է ավելի քարոշական, վստահական-ճգնալորական կյանքի հարցերով: Ոսկերեքանը սույն աշխատության մեջ մեծ հիացող է ս. Պողոսի, նրա առաքելական գործունեության և քարոզության վրա: «Ամբողջ մեկնությունը սկսվում է ավարտվում է Հեթանոսաց մեծ վարդապետ-ուսուցչի հանդեպ խանդավառության և հիացմունքի պոթովումով: Հայրաբանական ողջ գրականության մեջ չի կարելի գտնել մի այլ գրվածք, որը ս. Պողոսին ներկայացնի այնպիսի գործվանքով ու հափշտակությամբ, ինչպիսին անում է Ոսկերեքանը Հռովմեացվոց թղթի վրա գրած իր ճառերով»²⁶:

23-րդ ճառը համարվում է «քրիստոնեական քաղաքական մտածողության ամենակոտ և փայլուն գրվածքը»: Սույն ճառում Ոսկերեքանը հատկորեն տարբերություն է դնում ա՛յն իշխանության, ա՛յն ուժի միջև, որ աստվածային է, և ա՛յն պաշտոնի միջև (աշխարհիկ իշխանություն), որ մարդկային ծագում ունի: «Ոսկերեքանն առաջին աստվածաբան գրողն է, որը բացատրում է քաղաքական իշխանության ծագումը, որպես մի դաշինք մարդկանց միջև»²⁷, սույն տարբերելով աստվածային իշխանությունից: Ի՞նչ է քաղաքական իշխանության էությունը: Այդ իշխանությունը որտեղի՞ց է ստանում իր ուժն ու հեղինակությունը: Ոսկերեքանը մեկնաբանում է այս հարցի ստիժով Հռոմեացվոց թղթի ԺԳ գլխի 1—7 համարները:

«Ամեն մարդ, որ իշխանության տակ է, թող հնազանդության մեջ մնա, քանզի իշխանությունը այլ տեղից չէ, եթե ոչ՝ Աստծուց, և եղածները Աստծուց են կարգված: Հետևաբար, ով հակառակում է իշխանությանը, Աստծուն հրամանին է հակառակում... իշխանավորները վախենալի չեն քաղի գործերի համար, այլ՝ չար գործերի: Ուզո՞ւմ ես չվախենալ իշխանությունից, քարին գործիր և նրանից զուլասանք կատանաս, որովհետև նա Աստծուն պաշտոնյա է քեզ՝ քարի գործերի համար, իսկ եթե չար գործես, վախեցիր, քանի որ սուսերը մեջքին իզուր տեղ չէ կախված: Աստծուն սպասավոր է նա, վրեժխնդիր՝ քարկության համար, նրա դեմ, որ չարն է գործում. դրա համար պետք է հնազանդվել... ոչ միայն քարկության համար, այլ նաև՝ խղճմտանքի պատճառով» (Հռոմ. ԺԳ 1—6):

²² Quasten, էջ 440:

²³ Նույնը, էջ 441:

²⁴ Նոր Կտակարան, նույնը, էջ 409—446:

²⁵ Quasten, էջ 442:

²⁶ Նույնը, էջ 443:

²⁷ Նույնը, էջ 444:

Հոռմեացվոց թղթի վրա գրված ճառ-մեկնություններն այնքան ընդարձակ են, որ դրանք երկու ժամվա ընթացքում հազիվ են արտասանվել կամ ընթերցվել:

Թուղթ առ Կորնթացիս Ա. և Բ²⁸:

Ոսկերեքանը նախ Անտիոքում և ապա Կ. Պոլսում 44 ճառ է արտասանել Ա. Կորնթացվոց և ապա 30 ճառ՝ Բ. Կորնթացվոց թղթերի վրա: Ա. Կորնթացվոց թղթում (Բ 6—10) Ոսկերեքանը մանրամասն խոսում է Ավետարանի պաշտոնյաների դերի մասին: Արիոսականներ և այլ տիպի հերետիկոսներ մերժում էին քրիստոնեական կրոնի խորհուրդների կատարումը, մանավանդ մկրտության խորհրդի կատարումը (Ա. Կորնթ. ԺԵ 29—30): Մկրտության խորհրդի մասին Ոսկերեքանի խորհրդածություններն ուղղված էին հերետիկոսների դեմ, որոնք ժխտում էին նաև Ջատիկի նախատեսված մկրտության պահին նոր մկրտվողների արտասանած մկրտության ուղղափառ հանգանակը, ուր բանաձևված էին մեղքերի թողության, մեղքների հարության և հավիտենական կյանքի արժանանալու քրիստոնեական հավատքի սկզբունքները²⁸:

Մկրտության խորհրդի մասին Ոսկերեքանի արտասանած ճառը «շատ կարևոր է մկրտության ծիսակատարության պատմության համար»²⁹:

Թուղթ առ Գաղատացիս³¹:

Ոսկերեքանը բանավոր կերպով համար առ համար մեկնել է նաև Գաղատացիներին ուղղված Պողոսի թուղթը, երբ դեռ Անտիոքում էր գտնվում:

Թուղթ առ Եփեսացիս³²:

Ոսկերեքանի սույն մեկնությունը բաղկանում է 24 ճառերից, որոնք արտասանված են Անտիոքում, նրա այնտեղ կեցության վերջին օրերին: Սույն ճառերում Ոսկերեքանը ընդհանրապես խոսում է վանականության և, ի մասնավորի, Անտիոքի շրջակայքում վանական-ճգնավորական հաստատությունների մասին, հաստատություններ, որոնք վճռական դեր են խաղացել նրա կյանքում, որպես վանական-ճգնավորի:

20-րդ ճառը «շատ կարևոր է ամուսնության մասին» Ոսկերեքանի ուսմունքի տեսակետից: «Այն կարդացվում է ինչպես բարոյական մի օրենսգիրք տղամարդու և կնոջ» ընտանեկան հարաբերությունների մասին և պայծառ ապացույց է Ոսկերեքանի

նի «իդեալական մտահղացման քրիստոնեական ամուսնության մասին»³³:

Ոսկերեքանը իր ճառը կառուցել է Պողոս առաքյալի եփեսացիներին ուղղած թղթի հետևյալ արտահայտությունների վրա ընտանեկան հարաբերությունների հարցում. «Ինչպես եկեղեցին հնազանդվում է Քրիստոսին, նույնպես և կանաչ թող հնազանդվեն իրենց մարդկանց ամեն ինչում... որովհետև մարդն է գլուխը կնոջ, ինչպես որ Քրիստոսն է գլուխը եկեղեցուն և ինքն է փրկիչը այդ մարմնի» (Եփես. Ե 21—33):

Թուղթ առ Փիլիպեցիս³⁴:

Ոսկերեքանը Կ. Պոլսում 15 ճառ է գրել փիլիպեցիներին ուղղյալ իր թղթի վրա, երբ ինքն արդեն եպիսկոպոս էր: Սույն ճառերում նա հանգամանորեն և հեղինակությունով խոսում է եպիսկոպոսի պատասխանատվությունների, ինչպես նաև «տկարամիտ Արկադիոս կաշարի մասին», որը շատ տխուր դեր է խաղացել Ոսկերեքանի պատրիարքության շրջանում նրա դեմ արքունիքի կատարած անարդար հակառակությունների մեջ՝ խաղալիք դառնալով իր «չար և անըզգամ կնոջ՝ Եփորքսիա կաշարուհու ձեռքում»:

7-րդ ճառը, որը մեկնությունն է Փիլիպեցվոց թղթի Բ 5—11 համարների, պատմական և կարևոր շատագույություն է ի պաշտպանություն Մարդեղության խորհրդի, ընդդեմ «հին և նոր» հերետիկոսների, այդ թվում մարկիոնականների³⁵, Պողոս Սամուսացու և արիոսականների: Ոսկերեքանը իր քրիստոսաբանական շատագույության մեջ շեշտում է Քրիստոսի «կատարյալ» աստվածությունն ու «կատարյալ» մարդկությունը, հենվելով Պողոս առաքյալի հետևյալ արտահայտության վրա. «Քրիստոս Հիսուս, որը Աստուծո կերպարանքով էր, բայց Աստծուն հավասար լինելը հափշտակությունը՝ չհամարեց, այլ իր անը ունայնացրեց՝ ծառայի կերպարանք առնելով, մարդկանց նման լինելով և կերպարանքով որպես մարդ ճանաչվելով՝ խոնարհեցրեց ինքն իրեն՝ հնազանդ լինելով մինչև մահ և մահվան՝ խաչի վրա» (Փիլ. Բ 6—11):

Այս մասին իր 7-րդ ճառում Ոսկերեքանը շեշտում է. «2փոթեք նրեմն, կամ չբաժանեք Բնությունները (Քրիստոսի անձի մեջ աստվածային և մարդկային Բնությունները): Կա մեկ Աստված, կա մեկ Քրիստոս, Աստուծո Որդին: Երբ ես ասում եմ մեկ, շեշտում եմ Միություն և ոչ թե 2փո-

²⁸ Նոր Կտակարան, նույնը, էջ 447—505:

²⁹ Նույնը, Ա. Կորնթ. Բ 6—10, էջ 476:

³⁰ Quasten, նույնը, էջ 445:

³¹ Նոր Կտակարան, նույնը, էջ 506—518:

³² Նույնը, էջ 519—580:

³³ Quasten, նույնը, էջ 447:

³⁴ Նոր Կտակարան, նույնը, էջ 581—589:

³⁵ Երվանդ վրդ. Տեր-Մինասյանց, նույնը, էջ 78—81, 109, 112, 187, 215:

թություն: Մեկ Բնությունը չի կարող ալյա-
ներվել մի ուրիշ Բնության, այլ միացած է
նրա հետ»³⁶:

Թուրք առ Կողոսացիս³⁷:

Կ. Պոլսում, իր պատրիարքության առա-
ջին շրջանում, հավանաբար 399 թվականին,
Ոսկեքերանը 12 ճառ է ասել Կողոսացիներ-
ին ուղղած իր թղթի վրա, շեշտելով եպիս-
կոպոսական իշխանության վեհությունն ու
նոգևոր նշանակությունը, իր եպիսկոպոսա-
կան աստիճանի օրինակով. «Որքան ժամա-
նակ որ,—ասում է նա,—մենք ճատել ենք
այս (եպիսկոպոսական) Աթոռի վրա, մենք
պահում ենք վեհությունն ու հեղինակու-
թյունը այս Աթոռի, եթե նույնիսկ մենք ան-
արժան լինենք... այնուամենայնիվ մենք Աս-
տուծո պատգամավորներն ենք մարդկանց
առաջ»:

Վերոհիշյալ 12 ճառերում Ոսկեքերանը
խոսում է նաև ճշմարիտ բարեկամության,
ամուսնության քրիստոնեական հասկացո-
ղության, աղոթքի և մկրտության կարևորու-
թյան, Քրիստոսի փրկագործ չարչարանե-
րի և մահվան, ա. Գրոց ուսումնասիրու-
թյան, մանավանդ ստղծության համապա-
գօրյա ընթերցման, ընկերային համերաշխ
հարաբերությունների մասին:

Կողոսացիներին ուղղած Պողոսի թղթի
Ա. 15—18 համարները քրիստոսաբանական
կարևոր նշանակություն ունեն: Քրիստոսը
«Պատկերն է աներևույթ Աստուծո, անդրա-
հիկը բոլոր արարածների, որովհետև նրա-
նով ստեղծվեց այն ամենը, ինչ որ երկրե-
քում է և ինչ որ՝ երկրի վրա, ինչ որ երևում
է, և ինչ որ չի երևում, թե՛ զաներ, թե՛ տե-
րություններ, թե՛ պետություններ, թե՛ իշխա-
նություններ ու ամեն ինչ նրանով է կան-
գուն ամբողջական»:

Առ Թեսաղոնիկեցիս Ա. և Բ թուրք³⁸:

Ոսկեքերանը Կ. Պոլսում Ա. Թեսաղ. թղթի
վրա 11 և Բ թղթի վրա 5 ճառ է գրել,
դարձյալ եպիսկոպոսական իշխանության
վեհության և այդ պաշտոնի ծանր ու բարձր
պատասխանատվության մասին. «Պատաս-
խան պետք է տամ այս բարձր պաշտոնի
համար, որով ղեկավարում եմ ձեզ», ասում
է նա իր ճառում խոսքը ուղղելով իր ուն-
կընդիրներին:

Առ Տիմոթեոս Ա. և Բ թուրք, առ Տիմոս և առ Փիլիմոն³⁹:

Ոսկեքերանի մատենագրական վաստա-
կում կարևոր տեղ են գրավում Պողոսի
հովվական թղթերի վրա գրած ճառ-մեկնու-

թյունները: Այսպես, նա Ամոթեոս 28 ճառ
է խոսել Ա. և Բ Տիմոթեոսի, 6 ճառ՝ Տիմոսի,
և 3 ճառ՝ Փիլիմոնի թղթերի վրա:

Եկեղեցու կազմակերպության և Տիմո-
թեոսի ու Տիմոսի թղթերի մասին իր գրած
ճառերում Ոսկեքերանը դարձյալ խոսում է
իր սիրած թեմայի՝ եպիսկոպոսական աս-
տիճանի կարևորության և պատասխանա-
տվության, ինչպես նաև «եպիսկոպոսի
հատկությունների» մասին, ըստ Պողոս ա-
ռաքյալի պատգամին. «Եպիսկոպոսը պետք
է անարատ լինի, մեկ կնոջ մարդ, հեզ,
խոնարհ, պարկեշտ, հյուրասեր, ուսուցա-
նող, ո՛չ նախասող, ո՛չ բռնացող, այլ՝ հան-
դարտաբար, ո՛չ կովազան, ո՛չ փողատեր»
(Ա. Տիմ. 4 1—6):

Ոսկեքերանն առանձին կարևորությամբ
կանգ է առնում նաև քահանաների (եպեց),
սարկավագների «հատկությունների» վրա
և շեշտում Պողոսի բառերով, որ նրանք էլ
հավատացյալներին բարի օրինակ լինեն
իրենց «խոսքով, վարմունքով, սիրով, հա-
վատքով և սրբությամբ» (Ա. Տիմ. 7 11—
12):

Բ Տիմոթեոսի թղթի մեկնության մեջ Ոս-
կեքերանն ակնարկում է նաև Ամոթիոսի
նոտ, Որոնտես գետի վրա, Դափնե քաղա-
քում, Ապոլլոնի տաճարի հրկիզման մասին,
որով մեղադրվեցին անիրավորեն Ամոթիոսի
քրիստոնյաները:

Փիլիմոնի թղթի վրա Ոսկեքերանի խոսած
ճառը «չառ կարևոր է ստրկության մասին
քրիստոնեական մոտեցման հարցի կապակ-
ցությամբ»: Ոսկեքերանը ստրկությունը հա-
մարում է որպես հաստատված մի իրողու-
թյուն և հետևանք «մեղքի», բայց մեղքում
է այն ընդունել որպես «Բնության անփո-
փոխելի օրենք»: Նա Պողոս առաքյալի օ-
րինակով հայտարարում է, որ եկեղեցին
ուսարբերություն, խորություն չի դնում «ա-
զատի և ծառայի, հրեայի և հեթանոսի,
արտի և էգի միջև» (Հռոմ. 9 22, Ժ 12,
Գաղատ. 9 27—29): «Չկա խորություն
հրեայի և հեթանոսի», «Խորություն չկա ո՛չ
հրեայի, և ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի և ո՛չ
ազատի, ո՛չ արտի և ո՛չ էգի, որովհետև
ոյոք ամենքդ մեկ եք ի Քրիստոս Հիսուս»:

Եվ բաշարկում է ամեն գնով ստրուկ-
ների ազատությունն իրենց քրիստոնյա տե-
րերից: Ոսկեքերանը Փիլիմոնի նման
ստրուկներին, «ծառաներին» անվանում է
Քրիստոսի եղբայրներ և պահանջում է
նրանց ազատությունը որպես «սիրելի եղ-
բայրների»:

Թուրք առ Եբրայեցիս⁴⁰:

Ոսկեքերանը Կ. Պոլսի իր պատրիարքու-

³⁶ Quasten, էջ 448:

³⁷ Նոր Կտակարան, նույնը, էջ 540—548:

³⁸ Նոր Կտակարան, նույնը, էջ 549—561:

³⁹ Նույնը, էջ 562—587:

⁴⁰ Նոր Կտակարան, նույնը, էջ 588—615:

թյան վերջին տարում, 404—405 թվականներին, 34 ճառ է խոսել Պողոսի առ Եբրայեցիս թղթի վրա: Սույն ճառերը հեղինակի մահից անմիջապես հետո հրատարակվել են Անտիոքում, Կոստանդին քահանայի գրի առած սղագրական նոթերի հիման վրա և իսկույն թարգմանվել լատիներենի:

2. ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՀԱԿԱՇՏԱՌԱԿԱՆ ԳՐՎԱԾՔՆԵՐ

Ոսկեբերանը դավանաբանական և հակաճառական բնույթի 12 ճառ է գրել «Յադագս անճառելի բնութեանն Աստուծոյ» թեմայի շուրջ: Այդ ճառերից 5-ը արտասանվել են Անտիոքում 386—387 թվականներին կիսարիտական Անոմոյանների և Եվոմոյանների դեմ⁴¹: Ոսկեբերանը «պաշտպանում է Աստուծո անճառելի, անընթացելի և անիմանալի Բնությունը վերոհիշյալ հերետիկոսների» բանապաշտական հակումների դեմ, որոնք ժխտում են քրիստոնեական կրոնի անդրանցությունը (transcendence) և Որդու Բնության հավասարությունը Հոր Բնությանը:

Ոսկեբերանը միաժամանակ շեշտում է Որդու հավասարությունը Հոր հետ: Նա վերոհիշյալ ճառերը խմբագրելիս լայնորեն օգտագործել է Աստվածաշունչը, Փիլոն Եբրայեցու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նյուսացու դավանաբանական-հակաճառական գրվածքները:

Ոսկեբերանը սույն ճառերի մի կարևոր մասը արտասանել է Կ. Պոլսում 397-ին:

Մկրտության խորհրդի մասին քրիստոնեական հրահանգներ:

386—398 թվականներին, երբ Ոսկեբերանը Անտիոքում քարոզչական պաշտոն էր կատարում, նա միաժամանակ չմկրտվածների կրթության և հոգևոր դաստիարակության համար պատրաստել է մկրտության խորհրդի կարևորության մասին քրիստոնեական հրահանգներ: Այդ հրահանգներից մեկում Ոսկեբերանը խնդրում է Զատիկին նոր մկրտվողներին աղոթել նաև իրենց մկրտող եպիսկոպոսի և քահանայի համար:

Սույն հրահանգները շատ կարևոր են նաև որպես պատմական վկայություն Դ դարի վերջերում Անտիոքի եկեղեցիներում մկրտության խորհուրդը կատարելու կարգի մասին⁴²:

Ճառ ընդդեմ հրեից:

386—387 թվականներին Ոսկեբերանը 8 հակաճառություն է արտասանել Անտիո-

քում, ընդդեմ հրեաների: Նրա ունկնդիրների մեջ եղել են քրիստոնյա հրեաներ, որոնք հաճախելիս են եղել նաև հրեից սինագոգներ: Ընդդեմ հրեից խոսած իր ճառերում Ոսկեբերանը քրիստոնյա իր հավատացյալներին զգուշացնում է հրեական տոները, մանավանդ Զատիկը, չկատարել հրեաների հետ միասին ամսի 14-ին⁴³:

Ոսկեբերանն իր վերոհիշյալ Հակաճառության մեջ ցույց է տալիս միաժամանակ, որ հրեաները մերժեցին մարգարեների կողմից անխազուշակված Մեսիային, հետևաբար արդարորեն և ընդմիջտ պատժվեցին Քրիստոսի հանդեպ իրենց բռնած դատապարտելի վերաբերմունքի համար: Սույն ճառերը միաժամանակ «ցույց են տալիս, որ այդ շրջանում հրեաներն Անտիոքում դեռևս ընկերային-հասարակական և նույնիսկ կրոնական մեծ ուժ էին ներկայացնում»⁴⁴:

Գ. Բարոյախոսական բնույթի ճառեր:

Ոսկեբերանի մատենագրական ողջ վաստակի հիմնական նպատակն է եղել հավատացյալների հոգևոր, բարոյական դաստիարակությունն ու առաքինի, աստվածահաճո կենցաղավարության ջատագովությունը, մոլությունների անխնա դատապարտությունն ու աղաքինության մեծարումն ու հոչակումը:

Այս իմաստով կարևոր նշանակություն ունեն Ոսկեբերանի հունվարի 1-ին Անտիոքում կատարված ամանորական, ավելորդ դասաշտական հանդիսությունների առթիվ արտասանած ճառը, ինչպես նաև 399 թվականի հուլիսի 3-ին Կ. Պոլսում արտասանած ճառը՝ ընդդեմ կրկեսային խաղերի և թատրոնի, երբ մայրաքաղաքի եկեղեցիների կեսը թափուր էին հավատացյալներից, որովհետև ժողովրդի մեծ մասը գնացել էր ներկա լինելու կրկեսի խաղերին:

Ոսկեբերանը խստորեն դատապարտում է նաև Ավագ ուրբաթ օրը մայրաքաղաքում կատարված կառային մրցումները և Ավագ շաբաթ օրը տեղի ունեցած թատերային ներկայացումները:

Ըստ Ոսկեբերանի թատրոնը «Սատանայի ժողով է»⁴⁵, որից հեռու պետք է մնա հավատացյալը:

Թե՛ Անտիոքում և թե՛ Կ. Պոլսում Ոսկեբերանն իր ճառերում իր ուշադրությունը կենտրոնացրել է ժամանակի ամենասուր

⁴¹ Երվանդ վրդ. Տեր-Մինասյանց, նույնը, էջ 268, 268, 272:

⁴² Quasten, նույնը, էջ 452:

⁴³ Այս մասին տես «Հայոց եկեղեցական իրավունք», աշխատասիրության Ե. վ. Մելիք-Թանգյանի, գիրք Ա, Եռիշ, 1908, էջ 38—40: Զգուշ եպիսկոպոս Տեր-Հակոբյան, Զատիկի հարցը, Բեյրութ, 1971:

⁴⁴ Quasten, նույնը, էջ 458:

⁴⁵ Նույնը:

բնկերային շարքի վրա, որ է հարստության և ծայրահեղ աղքատության հակասությունը: Հետաքրքիր է արձանագրել, որ Ոսկերեքանը Կ. Պոլսում իր պատրիարքության օրով հաշվում է շուրջ 50.000 աղքատներ, քաղաքի 100.000 քրիստոնյա բնակչության վրա:

Նա խստորեն և հետևողականությամբ դատապարտում է հարուստների անխղճությունն ու անտարբերությունը և գովաբանում ու քարձարացնում ողորմածասիրության քրիստոնեական առաքինությունը, «ևս է տալիս, քան զառնուլն» առաքելական բուկղարունքով: Այս պատճառով Ոսկերեքանը կոչվել է նաև «Սուրբ Հովհաննես Ողորմած»⁴⁰:

Մեծ տոների առթիվ խոսված քարոզներ:

Ոսկերեքանը մի շարք քարոզներ է խոսել քրիստոնեական մեծ տաղավարների և տոների առթիվ, ինչպիսիք են Քրիստոսի Ծննդյան և Աստվածահայտնության տոնը, Ավագ շաբաթվա քարոզների շարքը, այդ թվում վերջին բնորոշի, Քրիստոսի մատնության, խաչելության, թաղման, ս. Հարության, Համբարձման, Հոգեգալստյան առթիվ խոսած քարոզները:

Ներքողյաններ:

Ոսկերեքանի մատենագրական վաստակում կարևոր տեղ են զբաղում Հին Կտակարանի մեծ սրբերի, այդ թվում Հոբի, Եղիազար քահանայի, Մակարայեցիների, ինչպես նաև մարտիրոսների, Անտիոքի եկեղեցու նշանավոր հայրապետների՝ Իգնատիոսի, Բարեյասի, Եվստաթեոսի, Մելետիոսի մասին գրած ներքողյան ճառերը: Ներքողյան սույն ճառերի մեջ առանձնահատուկ կարևոր նշանակություն են ունեցել մեծ հիացումով գրված ոսկերեքանյան 7 ճառերը՝ նվիրված ս. Պողոս առաքյալի կյանքին և գործունեությանը: Այդ ճառերում Հեթանոսաց մեծ Առաքյալը նկարագրվել է որպես «քրիստոնեական կատարելության տիպար, բոլոր առաքինությունների համադրումը, Հին Կտակարանի մեծագույն դեմքերից՝ Աբելից սկսած մինչև Հովհաննես Մկրտիչ»⁴¹:

Հավուր պատշաճի ճառեր:

Այս կարգի 21 ճառերի մեջ նշանավոր է Ոսկերեքանի 386 թվականին Անտիոքում իր լաֆանայական ձեռնադրության առթիվ արտասանած առաջին ճառը, որը սրանչևի

գոնաբանական ու երախտագիտական մի խոսք է Աստծուն ուղղված իրեն վստահված առաքելական քարոզչական վսեմ կոչման համար: Ոսկերեքանը դիմում է նաև ժողովրդին աղոթելու իրեն համար, որ ինքը հանդիսանա օրինակելի ու տիպար բանաճա Ավետարանի քարոզության անդաստանում:

Հավուր պատշաճի արտասանված ոսկերեքանյան ճառերի մեջ որպես ճարտասանական արվեստի ամենաբնորոշ հուշարձան է հանդիսանում նրա՝ Անտիոքի ժողովրդին խոսած «Յաղագս Արձանաց» ճառը:

387 թվականին Անտիոքում ժողովուրդը խորապես հուզված հարկային նոր ճշումից, գետին է տալալում իր արդար գայությունի մեջ Թեոդոս (մեծ) կայսրի և կայսերական բնաանիքի արձանները: Կայսրը կատաղում է ժողովրդի կողմից իրեն հասցրված այդ վիրավորանքից և սպառնում է քանդել, այրել ողջ քաղաքը:


Անտիոքի ծերունագարդ Յիսակիանոս հայրապետը շտապում է Կ. Պոլիս՝ խնդրելու համար կայսերական ներողամտությունը: Եվ մինչ ժողովուրդը տարուրերվում էր վախի և հույսի մեջ, Ոսկերեքանն արտասանում է «Յաղագս Արձանաց» իր նշանավոր ճառը, որը կենդանի վկայությունն է այդ օրերում Անտիոքում տիրող ժողովրդական հուզումների: Ոսկերեքանն իր ամբողջ ազդեցությունն ի գործ է դնում խաղաղեցնելու ժողովրդական հուզումները և սաստում միաժամանակ հանրությանը, որը խուժել էր եկեղեցիները և մեծ վնասներ հասցրել, անկարգություններ, որոնք Աստծու բարկությունն են թափելու նույնիսկ ժողովրդի վրա, եթե շարունակվեն:

Կ. Պոլսում Յիսակիանոս եպիսկոպոսի միջնորդությունն ու բարեխոսությունը կայսրի առաջ բնդումնում են: Կայսրը ներում է շնորհում ապատամբած ժողովրդին: Ոսկերեքանն այս առթիվ Զատնի տոնի կիրակի օրը հանդես է գալիս կայսրին ուղղյալ երախտագիտության մեծ ճառով, որի մեջ նա ներկայացնում է «որպես նշմարիտ առաջնորդ և հալո իր ժողովրդին տազնապալի այդ ճանր օրերին: Ոսկերեքանի պատախանատվության գզացումը նիսանալի է, որն արտահայտում է նրա խորունկ համակրանքն ու խանդավառ, կրքոտ անկեղծությունը» ժողովրդի հանդեպ:

(Ծառունակելի)

⁴⁰ Նույնը և Ա. Կորնթ. ԺԶ 1—4:

⁴¹ Quasten, *Յույն*, էջ 456:



ԶԲԻԳՆԵՎ ԿՈՍՑՑՈՒՎ

ԼԵՀԱՀԱՅԵՐԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՌԱԶԱԲԱՆ

Լեհահայերի երաժշտության հավաքման և ուսումնասիրման գործը սրանից մոտ 42 տարի առաջ սկսել էր Բրոնիսլավա Վույչիկ-Քյուրույանը, որը մտադիր էր հետազատում այդ մասին ուսումնասիրությունը հրատարակել: Այդ ուսումնասիրությունը լեհահայերի ծիսերգերի մասին հոդվածը պիտի լիներ, որը չի տպագրվել: Հիշյալ հեղինակն այն միտքն է զարգացնում, թե լեհահայերի հոգևոր երաժշտության մեջ լատինական ու հայկական եկեղեցական երաժշտության տարրեր կան, իսկ ժողովրդական երգերի մեջ՝ լեհական և ուկրաինական տարրեր: Նա միաժամանակ ընդունել է հիշյալ ժողովուրդների երաժշտության մեջ հայկական երաժշտության տարրերի թափանցման հնարավորությունը:

Բարեբախտաբար նշված գործերը լեհահայերի երաժշտության մասին միակը չեն: Լեհահայերի ծիսերգերի, նրանց կենցաղի, պատարագի, ազգային սովորությունների մասին կարևոր տեղեկություններ կան լեհահայերի պատմությանը վերաբերող քառնչորսից ավելի ա՛յլ երկերում: Ջեռքի տակ ունենք նաև քառասունչորս մեղեդիների ձայնանշումները պարունակող մի ժողովածու:

Սակայն լեհահայերի հին երաժշտության

մեծ մասը պահպանվել է բանավոր փոխանցմամբ:

Լեհահայերի ինը երգեր ձայնասփռվել են լեհական ձայնասփյուռից. դրանցից «Քահանայք և ժողովուրդք» և «Քրիստոս յարեալ» երգերը 1931 թ. նոյեմբերի 7-ին Լվովի ձայնակայանից, 1968 թ. հոկտեմբերի 23-ին Օպոլեի ձայնասփյուռով հնչեցին ևս յոթ ծիսերգեր, իսկ 1969 թ. դեկտեմբերի 26-ին Էլի նույն ձայնակայանից հաղորդվեցին լեհահայերի ծիսերգերից ևս վեցը:

Լեհահայերի մասին ընդհանուր տեղեկություններ

Լեհական թագավորության սահմաններում հայերի գոյության մասին եղած ամենահին վավերագիրը Կազիմիր Մեծի՝ հայերին տված 1344 թվականի արտոնագիրն է: Հայերը բնակվում էին հիմնականում Ռեչ-Պոսպոլիտայի հարավ-արևելյան սահմանների առևտրական քաղաքներում, իսկ մի մասը, դարձյալ Կազիմիրի օրոք, հաստատվեցին Լյուբլինի, Լուցկի, Պոզնանի, Վարշավայի, Վիլնյուի և Ջամոստյեի մեջ:

Հստ Մինաս վարդապետ Բժշկյանի, հին Լեհաստանում ապրելիս են եղել 40 հազար հայեր: Լեհաստանի հայերի (կաթոլիկացած—Ռ. Հ.) թիվն այսօր մոտ 15 հազար է:

Բազմաթիվ հայեր ու հայկական ծագում ունեցող լեհեր շատ կարևոր դեր են խաղացել Լեհաստանի մշակութային-քաղաքական ու պետական կյանքում:

Լեհահայերի մի մասի կենցաղային լեզուն որոշ ժամանակ դիֆալթ-թուրքերենն է եղել, իսկ մի մասը գործածում էր մաքուր հայերենը:

Կաթոլիկ եկեղեցու հետ բռնի միությունից (Ունիա) հետո թուրք-դիֆալթերենը բո-

* 1976 թվականին «Օպոլեի հարեկամների Ընկերությունը» հրատարակում է լեհերեն լեզվով սույն ուսումնասիրությունը Օպոլե քաղաքում (Լեհաստան):

«Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում քաղվածաբար որոշ հատվածներ այդ հետաքրքիր ուսումնասիրությունից Ռաֆիկ Համբարձումյանի թարգմանությամբ:

«ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ
ԽՍԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

լորտվին վերացավ, իսկ հայերենը մասամբ մնացել-հասել է մինչև մեր օրերը կուտեցի* որոշ հայերի մոտ միայն:

Լեհահայերի եկեղեցական արարողության լեզուն եղել և մնում է մաքուր գրաբարը:

Բռնի միությունից առաջ լեհահայերի եկեղեցին ենթարկվում էր Լեհիսլացի Ամենայն Հայոց կաթողիկոսին:

Լվովի Նիկոլ Թորոսովիչ եպիսկոպոսը 1630 թվականին ընդունեց պապականությունը: Թեև նա արարողությունը անփոփոխ պահեց ու սկզբնական շրջանում թույլ չտվեց, որ այն լեհերեն տարվի, բայց նրա քայլն այնուամենայնիվ լեհահայերի միասնությունը խաթկեց:

1681 թվականին Կամենեց-Պոդոլսկ քաղաքի եպիսկոպոս ձեռնադրվեց Յան Բերնատովիչը (Բերնարդովիչը) և Լվով տեղափոխվեցուց հետո բռնի միության հակառակորդների գլուխը անցավ: Սակայն դիմադրությունը երկար չտևեց. պապականություն ընդունած Վարդան Հունանյանը 1686 թվականին պաշտոնից հեռացրեց Բերնատովիչին և 1691 թվականին սինոդ հրավիրեց, որտեղ «Լեհահայերի հայ հոգևորականությունը Լվովի արքեպիսկոպոսին (այսօրինակ՝ Վ. Հունանյանին—Բ. Հ.) ճանաչեց... լեհահայ եկեղեցու գլուխ»:

Հիշյալ սինոդը նաև սահմանեց նոր ծիսակարգ, որը Հունանյանը լատինացրեց: 1699 թվականին հրահանգ տրվեց, «Աստծու խոսքերի արտասանությունը» լեհերենով տանելու մասին:

ԲՆՆՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԸ, որը իրագործվեց 1664 թվականից Լվով հաստատված Թեոտիմեյան ուխտի միաբանների աջակցությամբ, լեհահայերի ուժացման մեջ վճռական դեր խաղաց: Ունիան չընդունող մոտ 50 հազար հայեր լքեցին Լեհաստանը, իսկ մնացածները որոշ ժամանակ անց աստիճանաբար հաշտվեցին դալմաացիության մտքի հետ, թեև նրանցից շատերը ձգտում էին պահպանել իրենց ծագումն ու վաղեմի սովորությունները:

Լեհահայերի հոգևոր երաժշտությունը 1844—1690 թթ.

Մինչև բռնի միություն, այն է՝ 1630 թվականը և սկսած 1844 թվականից լեհահայերի եկեղեցական արարողությունները կատարվում էին Լեհիսլացի սահմանած կանոններով: Ժամագրքերը ևս, մեծ մասամբ, բերվում էին Հայաստանից, որոնց մեջ կային նաև «Ժարակնոց»-ներ:

* Կուտի բառը գտնվում է ազմյան Լվովի մուսուլմանների:

Հայկական մեղեդիները ձայնանշվում էին խազերով, որոնց մասին Ալոյսիուս Պիդուն* գրում է, թե հայերը ձայնանշներ չունեն, «բացի ինչ-որ անհասկանալի նշաններից, որոնք արտահայտում են ձայնատիպաներ և շեշտադրություն», ինչը և, նրա կարծիքով, հայ եկեղեցիներում «դժվարացնում է երգելը և միայն երկար պարապելուց հետո սերտում են»: Իրականում, սակայն, խազերը ձայնանշանային իսկական համակարգ էին, բայց ԺԵ դարից այս ձայնանշների բանալին աստիճանաբար կորչում է, և ի վերջո հոգևոր երաժշտությունը քերականի սովորելու անհրաժեշտություն է առաջանում: Բացառված չէ, որ հոգևոր երաժշտության բանավոր-հիշողական փոխանցումը կարող էր բուն մեղեդիներից ձևախեղումների պատճառ դառնալ, բայց հավանաբար այդ խտրությունները շատ մեծ չեն եղել, վասնզի լեհահայերը խիստ էին հետևում ազգային ավանդույթների անաղարտ պահպանմանը, և հոգևորականների մեծ մասն էլ հոգևոր աստիճան էր ստանում Հայաստանում: Բացի այդ, Լեհիսլացի հաճախակիականներ էին գալիս, որոնց, ի դեպ, դիմապորտ էին «երգերով ու նույնիսկ պարերով»:

Լեհահայերի երաժշտության մեջ բռնի միությունից առաջ գերիշխում էր այն ժամանակվա Հայաստանում կատարվող հոգևոր երաժշտության տարրը: Այս բանն ըստ երևույթին արտահայտվում էր նաև նրանում, որ լեհահայերի երգերն էլ միաձայն են եղել և հորինվել են երգվելու՝ առանց որևէ նվագարանի ձայնակցության կամ էլ այնպիսի նվագակցությամբ, որը սահմանափակվում էր միայն մի յուրատեսակ ձայնատությամբ:

Հայ առաքելական եկեղեցում հոգևորական ձեռնադրելու ամենակարևոր պայմաններից մեկը «ձայնավոր» լինելու պարագան էր, իսկ վարդապետության կարգ կարող էր ստանալ միայն նա, ով հմուտ էր երաժշտության արվեստին:

Բռնի միությունից առաջ լեհահայերի ծիսակարգով սահմանվել էր օրվա ընթացքում պատարագը միայն մեկ անգամ կատարել: Սրանով շեշտվում և ընդգծվում էր հայ և լատինադավան եկեղեցիների պատարագների տարբերությունները: Լեհամայրի պատարագի ժամանակ ընթերցում էին Հին Կտակարանի տարբեր գրքերը, ինչպես

* Կարոլիկ բանաձև, որն ուղարկվել էր Հռոմից՝ լեհահայերին կաթոլիկ դարձնելու համար: Նա դարձրեց բացեց Լեհաստանում, որոնք եղան այդ սև նարտակը իրականացնելու հեղափոխներ:

նաև Ավետարանն ու առաքելական թղթերը:

Չասկի առաքիլության ժամերգությանը ընթերցում էին չորս Ավետարաններ՝ «Չրջվելով աշխարհի չորս ծագերը»: Մարգարեների գրքերը, առաքելական թղթերն ու Ավետարանը մեծ հանդեսներին, «եկեղեցու տարբեր տեղերից ընթերցում էին երբեմն 12, նույնիսկ ավելի քահանաներ»:

«Փառք ի բարձունս»-ը ոչ թե պատարագի ժամանակ էին երգում, այլ առաքիլության երկրորդ ժամերգությանը:

«Փառք ի բարձունս» օրհներգը հույն եկեղեցու պատարագի մասն է: Պիդուն այստեղ ևս ձգտել է շեշտել հայտնաբերված և լատինադավան եկեղեցիների պատարագների տարբերությունները: Հիշյալ օրհներգն այդ ժամանակ երգում էր եկեղեցում հավաքված բոլոր ժողովուրդը:

Այլ հեղինակներ նկարագրել են մինչև բռնի միությունը եղած լեհահայերի պատարագի մանրամասները: Այլ մատյաններից բացի երգչախումբը աղոթում էր «վասն բարօրության և կենաց Հայաստանի»: Երգչախումբը կատարում էր «Հաաստոյ հանգանակ»-ը, որը սկսում էր քահանան, հետո շարունակում էին երգել ծխականներն ու երգչախումբը:

Այսբանից բացի կաթոլիկացումից առաջ լեհահայերի պատարագը պարունակում էր քահանայի կողմից ասված «Խաղաղություն ամենեկուն», ինչպես նաև երգչախմբի ու հավատացյալների պատասխանները՝ «Ամեն»:

Տեղեկություններ կան նաև նշանդրների, պսակի ու Ծաղկազարդի շաքաթվա եկեղեցական թափոթներին երգվող երգերի մասին:

Պատկերության ժամանակ երգչախումբը նախ երգում էր «Ուրախ լեր սուրբ եկեղեցի», այնուհետև «Սուրբ Աստուած, սուրբ և հօգոր»: Ավելի ուշ սարկավազը երգչախմբի հետ կատարում էր մի մաղթանք, որից հետո երգչախումբը երգում էր համար 20 սաղմոսը, այսպես «Ալելույա» (երեք անգամ) և այնուհետև համար 44 սաղմոսից՝ 15 տող: Վերջում սարկավազն ու երգչախումբը կատարում էին էլի մի մաղթանք, որից հետո երգչախումբը երգում էր «Ուրախ լեր, Տիրամայր» երգը:

Նշանդրների ժամանակ, եթե այն կատարվում էր հոգևորականի մասնակցությամբ, նա երգում էր «Ամենայաղթ խաչի Բո» ծիսերգը:

Ծաղկազարդի շաքաթվա արարողության ավարտին եկեղեցու փակ դռների առաջ հոգևորականը երգում էր «Բա՛ց մեզ, Տէ՛ր, բա՛ց, զոռն ողորմութեան» տաղը:

Կամենեց-Պոդոլսկի հայոց Մայր տաճարի երգչախումբն արարողության ժամանակ տեղավորվում էր խորանի կողքին: Հավանաբար այսպես էր նաև լեհահայերի մյուս եկեղեցիներում:

1666 թվականին (այն է՝ 211 տարի առաջ, քան Խոալիայում, հայոց հոգևոր երաժշտության մեջ կմուծեին երգեհոնային նվագարաններ և 249 տարի առաջ, քան Ավստրիայում, հայ եկեղեցական երաժշտության մեջ մուտք կգործեր նվագախումբը) Կամենեց-Պոդոլսկի հայոց Մայր տաճարում գործածական էին «շարժական երգեհոն և նվագախումբ, որը նվագակցում էր երգչախմբին»: Երգչախմբի ու նվագախմբի անդամները ենթարկվում էին եկեղեցու երեցփոխին, որը «հոգում էր այն ամենի մասին, ինչը ժամասացության շքեղությանը սատարող խթան էր նկատում»:

Հոգևոր երաժշտությունը մերթ ընդ մերթ օգտագործում էին հավատափոխությունը նախաձեռնողների դեմ պայքարելու, ինչպես նաև ժամագրքերում որոշ փոփոխություններ մտցնելու դեմ հակադրվելու համար:

Հայ եկեղեցու օրհներգեր էր երգում, օրհնակ, և՛ «իր հայրերի հավատն ուրանալու» համար Թորոսովիչին նշանակված նկիրակը, և՛ այն նկիրակը, ով մաքուր օդ շնչելու, պտույտ տալու պատրվակով գնաց Լվովի արվարձանում գտնվող մի վանք և հրամայեց այնտեղ պատարագ մատուցել առանց «փոփոխությունների»:

Խոսքն այստեղ 1664—1666 թթ. Թեատինյանների ջանքերով հայոց շարակնոցներում, ժամագրքերում և մաշտոցներում մտցված փոփոխությունների մասին է: Նույնիսկ սրանից հետո էլ լեհահայերի ծխակարգը մնաց հիմնականում անփոփոխ, իսկ «Թեատինյանների մտքած ժամագրքերը պարունակում էին բազմաթիվ այնպիսի սաղմոսներ, որոնք Արևելքի եկեղեցիներում երգվում էին երգչախմբերի կողմից»:

Հայ առաքելական եկեղեցու ծիսակարգը հովանավորող Բերնարդինի գահակալության տարիները (1681—1686) ըստ երևույթին նպաստեցին հայ հոգևոր երաժշտության անաղարտ պահպանմանը:

Լեհահայոց հոգևոր երգերը 1691—1975 թթ.

Լեհահայերի հոգևոր երաժշտության մոր փուլն սկսում է 1691 թվականից, երբ Լվովում հրավիրված Բռնի միության կողմնակից հոգևոր սինոդը հաստատեց լեհահայ պատարագն ու ծիսակարգը փոփոխելու որոշումը: Այդ որոշումը Թեատինյան վանականների աջակցությամբ կայացրեց Ունիա-

յի կողմնակից Վարդան Հունանյան եպիսկոպոսը:

Նոր ժամագրքերն արդեն կա՛մ գրաքարի էին վերածվում անմիջապես լատինական ծիսակարգից, կա՛մ հարմարեցվում էին սրան: Լատինացումը տարածվեց նաև արարողության արտաքին ձևի վրա, որտեղ պահպանվեցին միայն հայ և լատին եկեղեցիների միջև եղած «առավել կարևոր տարբերությունները»:

Այդ պատճառով լեհահայ պատարագը հետագայ ոչ միայն առաքելական եկեղեցու հատուկ կանոններից, այլև նույնիսկ լատինական-ունիական պատարագից:

Այսբանից քացի լեհահայերի նոր պատարագի հեղինակները ժամագրքերից դուրս բողեցին գրեթե բոլոր այն հատվածները, որոնք կատարում էին Արևելքի եկեղեցիների երգչախմբերը:

Հավանորեն հենց այդ ժամանակ էր, որ լատին ծիսակարգի հետևությանը հայկական եկեղեցիների երգեցիկ խմբերը ևս տեղափոխվեցին եկեղեցու խորքը:

Հունանյանի հիշյալ որոշումը հայ երգի մեջ քաց արեց ոչ միայն լատինական մեղեդու, այլ նաև լեհական երգերի ճանաչարհը, որը ևս քիչ դեր չխաղաց հայերի լեհականացման մեջ:

ԺԺ դարի կեսերին լեհահայերի եկեղեցիներում աղոթքներն ու երգերը, որոնք առաջ հայերեն էին կատարվում, սկսել էին կատարվել լեհերեն: Սակայն ծիսականները կուսիում մինչև ԺԺ դարավերջ «որոշ աղոթքներ հայերեն էին երգում»: Միասկան և զատկական, այլև ուրիշ մեղեդիներ այնտեղ հայերեն են երգել նաև մեզ ավելի մոտ ժամանակներում:

Լեհահայ հոգևորականներն արարողությունների ժամանակ, Մաշտոցից քացի, գործածում էին նաև արտասահմանում տարած շարակնոցներ, ընդ որում ժամերգության ժամանակ երգում էին ըստ հայերի օգտագործած սևիական ձայնանիշների:

Այստեղ խոսքը Համբարձում Լիմոնջանի 1813—1815 թթ. օգտագործած խազերի մասին է, որոնք Լեհաստանից դուրս օգտագործում էին հայ աշխարհիկ ու եկեղեցական երաժշտության մեջ: Ուստի հիմք չունեն այն ակնարկները, որոնք այս առնչությանը պնդում են, թե իբր 20-րդ դարում Լվովի հայոց տաճարում «պատարագը կատարվում էր ըստ քրիստոնեական ամենահին ձայնանիշների»:

Հունանյանի փոփոխություններից հետո, լեհահայերի պատարագի մեջ մտցված մեղեդիները ևս հետագայում սովորում էին բանավոր-հիշողական փոխանցման միջոց-

ներով:

Իրանից քացի, բանավոր ու մասամբ նաև ձայնանշյալ, պահպանվել են Ավագ ուրբաթին հատուկ բանավոր փոխանցմամբ մեզ հասած մեղեդիներ, ինչպես նաև թաղման, Կասկի ու զատկական որոշ եղանակներ: Այս մեղեդիներում առկա են թե՛ լատինական և թե՛ հայկական տարրեր:

Լեհահայերի հոգևոր երաժշտության երկու տարատեսակների միջև եղած տարբերությունը նրանց լատինացման աստիճանն է: «Հունանյանական» տարբերակում լատինական ծագում ունեն 32 մեղեդիներ, իսկ հայկական ծագում՝ ինը: «Մխիթարյանական» եղանակներից 30-ը լատինական ծագում ունեն, իսկ 19-ը՝ հայկական: Մնացած հոգևոր եղանակներից լատինական ծագում ունեն 52-ը, հայկական ծագում՝ 8-ը:

Թե՛ Լվովի եկեղեցում և թե՛ Լեհաստանի հայոց թեմի բոլոր մյուս ծխական եկեղեցիներում երգեհոն է դրված եղել, իսկ տաճարում գործել է նաև երգչախումբ: Մեզ հասած աղբյուրներից հայտնի է, որ երգչախմբեր կալին Լվովի տաճարում և Կուսիի ու Սնյատինի եկեղեցիներում: Լվովի և Կուսիի երգչախմբերը երկսեռ էին, իսկ Սնյատինի երգչախումբը՝ իգական:

Հայկական ծիսական դպրոցները փակվելուց առաջ աշակերտները «...ևս օգնում էին եկեղեցական երգեր կատարելուն»:

Լեհահայերի ժողովրդական ծիսերգերից մինչև այսօր բանավոր փոխանցումով, մասամբ նաև ձայնանշյալ, պահպանվել են 7 ծիսերգեր («Այսօր տոն է»-ի երկու տարբերակ՝ «Մե՛ծ և փոքր աւետիս», «Ծնունդ քո», «Զբեզ Յիսուս», «Մանուկ ճնաւ»-ի երկու տարբերակը և «Ուրախ լերուք», մի զատկական երգ («Անճառելի Բանդ»), ինչպես նաև «Առաւօտ յուտը», «Հայր մեր» և «Սուրբ Աստուած» մեղեդիները:

Հայ երաժշտության մեջ ավետիսներ հանդիպում են ըստ երևույթին արդեն Ե դարից սկսած, օրինակ՝ «Քրիստոսի ծնունդըն ալետող» եկեղեցական երգեր, որ «Աւետիս»-ը կրկնվում է ամեն մի տողի սկզբում կամ վերջում: Այդ բանը «բարի, ուրախալի վեր» նշանակելով, հունանիշն էր նաև այն ծիսերգի, որը «սուրբ Ծննդյան տոնին երեխաները երգելով տնից տուն էին մտնում»:

Հայոց ինքնուրույն ավետիսների գոյությունը փաստող տեղեկությունները ցույց են տալիս, որ լեհական ծիսերգը այն միակ նմուշը չէր, որից ներշնչվել լեհահայերի ծիսերգերի ստեղծագործությունը: Լեհահայերի ծիսերգերից միայն երկուսը լեհական ծագում ունեն՝ «Ծնունդ քո» և «Զբեզ Յի-

սուս», որոնցից առաջինի հիմքը «Վասն Ծննդեան Տեսուն» մեղեդին է, իսկ մյուսի հիմքը՝ «Ծնա Յիսուս»-ը:

«Մանուկ ծնա» և «Ուրախ լերուք» երգերն ունեն Հայաստանում երգվող տաղերի բնորոշ հատկանիշներ:

Երաժշտական տեսանկյունից դիտված, սակայն, լեհահայերի ծիսերգերը ունեն ամենից առաջ պոլիտոնական, մասամբ նաև ումիսական երաժշտության երանգայնության (տոնայնություն), մեղեդու և ամանակի (ռիթմ) առանձնահատկություններ, որոնք լեհերի, ռումինացիների և ուկրաինացիների հետ ունեցած բազմամյա շփումներից ու համակցությունից են գալիս: Բացի այդ, կուտեցի հայերի ծիսերգերը նման են «մալոուսական-ռումինական-բալկանյան» մեղեդիներին:

Ծննդյան տոների երեկոյան ընտանիքը հացի էր նստում այն ժամանակ միայն, երբ պատուհանից լսվում էին ծիսերգեր: Տանը բոլորը սպասում էին այդ երգերը երգողներին, որոնք շուտով գալիս... երգելով մտնում են տուն: Երգում են «Աւետիս»-ը: Այդ ծիսերգը բոլորն են երգում... և Կուտիում չկա մի երեխա, որն այդ ավետիսը երգել չիմանա... Ժամասացության ժամանակ երգչախումբն ըստ մեծի մասին կատարում է հայկական ծիսերգեր, ինչպես «Մանուկ ծնա ի Բեթղեհեմ»... «Ջքեզ Յիսուս գովաբանեմ»... և այլն... Պատարագից հետո բոլոր տղամարդիկ հավաքվում են խորանի կամ Ավագ սեղանի մոտ և երգում յուրահատուկ «Աւետիս» ծիսերգը... վերջում երեք անգամ երգում են «Հայր մեր»-ը:

ԺԹ դարում եկեղեցու եղբայրության անդամները «Ծննդեան տոներ»-ի առաջին օրը տնից տուն ընկած երգում էին «Մեծ Աւետիս»-ը:

Լեհահայերի՝ Զատիկի երգերից պահպանված միակ ծիսերգը լեհական ծագում ունի, իսկ «Առաւօտ լուսոյ»-ի, «Հայր մեր»-ի և «Սուրբ Աստուած»-ի մեղեդիները հայկական են:

Լեհահայերի ուծացումը հանգեցրեց ամենօրյա գործածության մեջ եղած ժողովրդական ծիսերգերի բնկորների գրեթե ամբողջական մոռացմանը: Այդ երգերն այսօր գիտեն միայն հատուկեմտ մեծահասակներ: Իսկ Լվովում երգվող երբեմնի հայկական մեղեդիներն այսօր միայն Գդանսկի և Պոդու-Պետրոս եկեղեցում են կատարվում:

ԼԵՀԱԼԱՅԵՐԻ ԱԾԵԱՐԸԻԿ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Լեհահայերի աշխարհիկ երաժշտության

մասին եղած շատ սակավաթիվ տեղեկություններից կարելի է հետևել, որ զվարճություններից, ընկերական հավաքություններից, տոներին ու պաշտոնական հանդիսություններին երգելը, պարելն ու նվագախմբեր ածելը լեհահայերի կենցաղի ամենատեղական կողմերից էին:

Լեհահայերն ունեին «միաձայն կատարվող ասպետական երգեր», իսկ նրանց նվագախմբերն այնպիսին էին, «ինչպիսին ուրիշ ժողովուրդներինը»: Լեհահայերի գործածած նվագախմբերի մեջ կային նաև «շեփորն ու դափը»: Ցանուշի բառարանում տեղեկություններ կան նաև ջութակի մասին, այն ուկրաինացիների օրինակով լեհահայերը ՍԿՐԻՊԿՍ էին անվանում:

Հարսանիքներին «նվագը փեային էր պատկանում» (այսինքն նվագողներին փեսան էր վարձում—Ռ. Հ.):

Սկզբնական շրջանում լեհահայերի աշխարհիկ երաժշտությունը մոտիկ է եղել Հայաստանի երգերին, քանի որ այդ շրջանում «հայերը իրենց հետ մեր երկիրն էին բերում Հայաստանի հնագույն մշակույթի տարրեր»: Սրանց մեջ հավանաբար կային նաև երգեր ու պարեր, վասնզի «հայերի բնորոշ գծերից էր... երաժշտասիրությունը»:

Սակայն այս բոլորի մասին հստակ տեղեկությունները պակասում են: 1929 թ. մի վկայությունից տեղեկանում ենք միայն, որ զվարճությունների ժամանակ կուտեցի հայերը պարում էին նախ և առաջ պոլոնեզ, իսկ հետո... նաև «հայերի սիրած այլ պարերգեր»:

Լեհահայերի ուծացումը իրենց ազգային ավանդություններից նրանց աշխարհիկ ժողովրդական երաժշտության վրա ավելի ոչնչացնող ազդեցություն է թողել, քան ծիսերգերի վրա: Աշխարհիկ երաժշտությունից ցայսօր ոչ մի պատասխան չի հաջողվել հայտնաբերել: Դժվար է նաև պարզել, թե իրո՞ք, ինչպես տիկին Քյոփրուլյանն էր մտածում, լեհական և ուկրաինական երաժշտության վրա լեհահայերի երաժշտության ազդեցությունն եղել է:

Լեհահայերի ժողովրդական երգերի խոսքերի ներկա հրատարակումն իրագործվել է՝ ձեռքի տակ ունենալով ծննդով կուտեցի, բայց այժմ Օբորնիկի (Լեհաստան) բնակվող Միկոլայ Մոյզեսովիչի սեփականությունը հանդիսացող ձեռագրերը: Այդ ծիսերգերը, այսպես կոչված, Կուտիի բարբառով են: Հայերը Կուտիում բնակվում են 1715 թվականից:

Լեհերենից քաղվածաբար թարգմանեց՝
ՌԱՖԻԿ ՀԱՄԱՐԶՈՒՄՅԱՆ



Տ Ո Ւ Ց Ա Կ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ*

8. Աղօթք սրբոյն Յովնաննու Կարապետին:
 7. Աղօթք սրբոյ Ռօրն Արքանաճու և սուրբ Եւա-
նայն Քրիստոսի Աստուծոյ մարդ:
 8. Աղօթք ճրեշտակաց պահպանութեան:
 9. Աղօթք վասն ճանապարհորդաց:
 10. Աղօթք չար մազարի և չար լեզուի:
 11. Աղօթք զառակ ծնելոյ:
 12. Աղօթք սրբոյն Գեորգայ զօրավարին:
 13. Աղօթք գլխացաւի և աչաց ցաւի:
 14. Աղօթք սրբոյն Սարգսի զօրավարին:
 15. Աղօթք Նարեկացոյ:
 16. Աղօթք Թադէայի և աղի:
- (Որոշ աղօթքներ կրկնվում են):

տեսցա ելանելոյն զերկնից սուրբ արքայութիւնն
պարգևացէ ամեն:

№ 468

ԹԱՄԵՆԻԳՈՒԹԻՒՆ,

Թերթերը՝ 17:— Պրակները՝ 1:— Մեծութունը՝
25,2×20×0,2 սմ.:— **Նյութը՝** դեղնած մաստ թուղթ:
— **Կազմ՝** չունի: Թուղթը ծակված և թելով կապ-
ված է:— **Պահպանակները՝** առջևում և վերջում մի-
կական թերթ թուղթ:— **Վիճակը՝** բավարար:— **Գրու-
թյունը՝** միասլուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա, 1բ, 2բ,
3բ, 4բ, 5բ, 6բ, 7բ, 8բ, 9բ, 10բ, 11բ, 12բ, 13բ,
14բ, 15բ, 16բ, 17ա և 17բ:— **Տողերը՝** անկանոն,
14—25:— **Գծումները՝** չունի:— **Գիրը՝** շեղագիր:—
Զարդագրությունը՝ չունի, տեքստը գրված է կապույտ
և կարմիր թանաքով:— **Գրիչը՝** Հակոբ Օշական:—
Ժամանակը՝ 1940 թ.:— **Վայրը՝** Նրուսատեմ:— **Դա-
նոթությունը՝** Վեհափառ Հայրապետը սույն գրքույկը
ձեռագրատուն հանձնեց 1976 թ. դեկտեմբերի 25-ին:

ՀԻՇԱՍԱՄԱՐԱՆՆԵՐ

(Բազմաթիվ աղօթքների վերջում գրված է հի-
տեկյալը.)

... փրկել ծառայիս Աստուծոյ (անվան տեղը բաց
է թողնված) ամեն:

... ծառայիս Աստուծոյ Պաղտատարին օգնական
եղիցի և սրահապան ամեն (բազմաթիվ անգամ—
շուրջ 15—կրկնվում է այս տողը):

... և տուր զառակ ծառայիս Աստուծոյ Պաղտա-
տարին, օգնական եղիցի և պահապան, ամեն:

Գրեցաւ ճեմայիս ի թվին հայոց ՌՃԼԲ (1683 թ.
—Ն. Մ.) ճոկտներէրի ԻԱ (21), ի վայելումն
..... Աստուած բարով վայելել տացէ և յետ առ-

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹՅՈՒՆ

Մեկ արարնոց սույն կարճ թատերգությունը, որ
ամտիպ է ցարդ, տեղի է ունենում Էջմիածնում,
հայոց Տրդատ 3-րդ թագավորի արքունիքում: Գլ-
խավոր դերակատարներն են թագավորը, իշխանու-
նին, քրմապետը, բժշկապետը, մի քանի մախա-
րարներ և Ս. Գրիգոր Լուսավորիչը: Գործողության
ընթացքում երևում են խոզի կերպարանքով թագա-
վորը, տեսիլքը հայտնող իշխանունին, ապա տե-
սիլքը ծաղրող և ժառող քրմապետը, երգիչներ և
սարողներ, ինչպես նաև վերջում Սուրբ Գրիգորը,
որ բուժում է թագավորի հիվանդությունը:

Թատերգության մեղիմսվը, որ նույն ինքը գրելն
է, Հակոբ Օշականը, սեղմ տողերով և մի քանի
էջում զեղեցիկ կերպով ցկարագրում է թագավորի
հիվանդությունը, իշխանունի երազը, Ս. Գրիգորի
գալուստը և արքայի բուժումը:

* Ընթերցանված «Էջմիածին» ամսագրի 1964
թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի
№ № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվա-
կանի № № Գ—Ե-ից, ԺԲ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի
№ № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № №
Ա—Բ-ից, Գ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից,
Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975
թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976
թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից և 1977
թվականի № № Գ—Ժ-ից:

ՀԻՇՍԱՏԱԿԱՐԱՆ
(Ձեռագրի սկզբում)

Յ. Օշական
Սուրբ Գրիգոր
Լուսավորիչ
կամ
Աստուած կ'իջնէ
Երուսաղէմ
1940
(Ամսօրայ)

№ 469
ԹԱՏԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Թերթերը՝ 17:— Պրակները՝ 1:— Մենությունը՝ 25,2×20,8×0,2 սմ.:— Նյութը՝ դեղնած Բաստ թուղթ:— Կազմ՝ չուրի: Թուղթը ծակված և թելով կապված է:— Պահպանակներ՝ չուրի:— Վիճակը՝ բավարար:— Գրությունը՝ միասյուն:— Դատարկ թղթերը՝ 1ր, 2ր, 3ր, 4ր, 5ր, 6ր, 7ր, 8ր, 9ր, 10ր, 11ր, 12ր, 13ր, 14ր, 15ր, 16ր և 17ր:— Տողերը՝ աճկա-
նուն, 18—24:— Գծումներ՝ չուրի:— Գիրը՝ շեղա-
գիր:— Ջարդագրություն՝ չուրի, տեքստը գրված է կապույտ և կարմիր թանաքով:— Գրիչը՝ Հակոբ Օշական:— Ժամանակը՝ 1941 թ.: Վայրը՝ շատ Բա-
վանաբար Երուսաղէմ, ինչպես նախորդ ձեռագիրը:— Մանրությունը՝ վեհափառ Հայրապետը սույն գրքույկը ձեռագրատուն հանձնեց 1978 թ. դեկտեմ-
բերի 25-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մեկ արարնոց սույն կարճ թատերգությունը տե-
ղի է ունենում Էջմիածնում, կործանված մեհյանի
քակում: Գլխավոր դերակատարներն են Սուրբ Գրի-
գոր Լուսավորիչը, Տրդատ 8-րդ թագավորը, Հիսուս
և երեք կանայք: Գործողության ընթացքում այս
կանայք ողբում են երկրի և ժողովրդի անկյալ վի-
ճակն ու վատ դրությունը: Սանդարմետից լսվում
են ձայներ ուղղված Գրիգորի դեմ, սակայն սուրբն
աղոթում է, ամպի միջից երևում է Հիսուս, ոսկյա
ուռկանը ձեռքին, որ Էջմիածնում հիմնադրում է
Հայաստանյայց եկեղեցին, դնելով եկեղեցու առաջին
հիմնաքարը:

Թատերգության հեղինակն ու գրիչը Հակոբ Օ-
շականն է, որ մի քանի ամփոփ էջերում գեղեցիկ
և պատկերավոր կերպով նկարագրում է Հայաս-
տանյայց եկեղեցու հիմնադրման խորհուրդը:

ՀԻՇՍԱՏԱԿԱՐԱՆ
(Ձեռագրի սկզբում)

Յ. Օշական
Ոսկի Ուռնակը
(խորհուրդ)
1941

№ 470
ԿՈՆԴԱԿ

Թերթերը՝ 1:— Մենությունը՝ 67,5×40,6 սմ.:—
Նյութը՝ դեղնած քարակ թուղթ:— Կազմը՝ հետևը շոր
է կազմված, առնված է սպիտակ ստվարաթղթից
կազմված շրջանակի մեջ և ամրոցողությամբ դրված
է ապակու տակ, որ եզերված է ոսկեգույն փայտյա
շրջանակով, որի չափերն են 88,8×55,8 սմ.:— Վի-
ճակը՝ լավ, միայն վերևում մի փոքր տեղ վառված
է:— Գրությունը՝ միասյուն:— Տողերը՝ 58:— Գծում-
ները՝ ճշգրիտ:— Գիրը՝ մուրգիր:— Ջարդագրու-
թյուն՝ կոնդակը գեղեցիկ մի մուշ է 19-րդ դարի
սկզբի հայկական մանրանկարչության: Ջախակող-
մում գտնվող 87×8 սմ. ծավալով երկար լուսանցքը
ծաղկազարդված է զանազան գունավոր ծաղիկնե-
րով: Կա նաև ոսկեգույն մի թռչուն և երկար մի ճյուղ,
ինչպես նաև կանաչ մի ճյուղ և տերևներ: Կոնդակի
վերևի երկու անկյուններում կան գունավոր գեղեցիկ
թռչուններ, վարդեր և այլ ծաղիկներ, դեղին ֆոնի
վրա: Վերևի մասի կենտրոնում կա ոսկեգույն ճա-
նապարհներով մի փոքր արեգակ, որի մեջ գտնվող
փոքրիկ մի ան եռանկյունում նկարված է աչքը, որի
շուրջ գրված է երեք բառ «Հայր, Որդի, Հոգի»:
Արեգակի ներքևում կա մի մեծ շրջանակ (18 սմ.
տրամագծով), որ պահում են երկու փոքրիկ հրեշ-
տակներ: Այս շրջանակի կենտրոնում կա ավելի
փոքր մի շրջանակ, որի մեջ կա Եփրեմ կաթողիկո-
սի կարմիր կնիքը (5,5 սմ. տրամագծով): Կնիքի
աջակողմում երևում է Ս. Էջմիածնի տաճարը, ձա-
խակողմում՝ երկնքից իջնող Քրիստոսն ու ճերադիր
Ս. Գրիգոր Լուսավորիչը հաղորդական զավա-
զանն ի ձեռին: Վերևում կան երեք փոքրիկ հրեշ-
տակներ և մեկ աղավաղ: Հայրապետական մեծ կնի-
քի այս ընդհանուր պատկերի շուրջ կա երկու շր-
ջանակով մի գրություն, որ հետևյալն է. (արտաքին
շրջանակ) «Է» «Ընդհանուր Աստուծոյ Տէր Եփրեմ
Կաթողիկոս ամենայն հայոց և Պատրիարք (Էջ-
միածնայ թուին ՌՄԾԹ» (1810 թ.—Ս. Մ.). (ներ-
քին շրջանակ) «Տեսիլ արքայն Գրիգորի, իջման
բանին Միածնի ի Վաղարշապատ ... ել տաճարս
հրաշալի»: Սույն մեծ շրջանակի ներքին ձախա-
կողմյան մասում կան երկու մեծ թռչնազարդ «Յի»
(10×6 սմ. և 10×4,5 սմ. չափերով) գունավոր, ո-
րոնց վրայի հապավման մեծ նշանն էլ գունավոր
մի ծաղիկ և տերևներ են: Իսկ ներքին աջակողմյան
մասում գունավոր նկարված է Ս. Էջմիածնի մեծա-
դիր (15×7 սմ. չափերով) նկարը, հենած երկու
թռչունների վրին:— Գրիչը՝ անհայտ:— Պատվիրա-
տուն՝ Եփրեմ Ս. Ջորագեղի կաթողիկոս ամենայն
հայոց (1808—80 թթ.):— Մաղկոդը՝ անհայտ:—
Ժամանակը՝ 80 օգոստոսի 1815 թ.:— Վայրը՝ Ս.
Էջմիածնի վանք:— Մանրությունը՝ սույն գեղեցիկ
կոնդակը ստացվել է վերջերս Մեսրոպ Մաշտոցի
անվան Մատենադարանից և այժմ կախված է Վե-
հափառ Հայրապետի մեծ ընդունարանի մուտքի
մոտ:

(Ծարունակելի)



ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայրապետական քարոզ Փրկչի հրաշափառ և սուրբ Մենդյան տոնի առթիվ Մայր տանարում	3
Ամանորի և Փրկչի հրաշափառ և սուրբ Մենդյան տոնների առթիվ Ամենայն Հայոց Մայրապետյն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծուրյուն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները	7
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական՝ գիրք Ամանորի և սուրբ Մենդյան տոնների առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմակալ բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին	10
Նոր տարվա առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական բարձրաստիճանի անձնավորությունների միջև փոխանակված շնորհավորական հեռագրեր	12
ԱՆԱՍՏԱՍ ՍԱՐԿԱՎԱԳ. ԻՌՎԻՍԻՅԱՆ—Ամանորյա համդիսություններ Մայր Աթոռում	15
ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՄ—եկեղեցական թեմ. լուրեր	19
ԱՐՄԵՆ. ԵԴԻՍԿՈՂՈՍ ԲԵՐԲԵՐՅԱՆ—Հաղ-անգլիկան եկեղեցիների պատմության էջերից	21
ԸՆՈՐՀԷ ԱՐԶԵԴԻՍԿՈՂՈՍ ԳԱՌՈՒՍՅԱՆ—Աստվածաշնչական սուրբեր	29
ՎԱՐԱԳ ԱՌԼԵԻՅԱՆ—Աստվածաշնչի հայերեն թարգմանության լիզուն և ոճը	40
Ա. ՀԱՏԻՏՅԱՆ—Սուրբ Հովհան Ոսկերեքան հայրապետ Անտիոքացի	48
ԶԲԻԳՆԵՎ ԿՈՍՏՅՈՒՎ—Լեհաստանի երաժշտությունը	57
Յուդակ Մայր Աթոռ ու Էջմիածնի նոր ստացված ձևագրերի	62

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱՄԻՆ

«ԷՋՄԻԱՄԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»,
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 26.1.1978 թ.: Ստորագրված է տպագրության 24.2.1978 թ.:
Տպագրական ձևով, բուրձ 60×84¹/₈, պատվեր 70:

Մայր Աթոռ ու Էջմիածնի տպարան, 1978 թ.

